2493

S.S.C.

2322

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ՀԵՔՔՈՒՄՔ

2322

ԶՐԱԽՆԴԻՐ

ՎԱՅՐԱՌԱՆՈՒԹԵԱՆՑ

ՈՄԱՆՑ ՄԵՐԱԶՆԵԱՑ ՏԿԵՐԱՄԻՏ ԱՆՁԱՆՑ

Ի ՏԻՊ ԱՐՁԱՆԱՑԵԱԼ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ԱՂԱՑ

ԳՐԻԳՈՐԻ ՄԱԼԷՆՑԵԱՆՑ ՎԱՂԱՐԾԱՊԱՏԵՑԻՈՑ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

Ի ՄՈՍԿՈՒԱ
1861

3393
2322
281.6
Մ-33
Ա 30705
467

ՀԵՐՔՈՒՄՔ

ԶՐԱԽՆԴԻՐ

ՎԱՅՐԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ

ՈՄԱՆՑ ՄԵՐՈՒԶՆԵԱՑ ՏԿԱՐԱՄԻՏ ԱՆՁԱՆՑ

Ի ՏԻՊ ԱՐՁԱՆԱՑԵԱԼ

ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ԱՂԱՑ

ԳՐԻԳՈՐԻ ՄԱԼԷՆՑԵԱՆՑ ՎԱՂԱՐԾԱՊԱՏԵՑԻՈՑ

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾ. ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ԹՎԱԿԱՆ.
Основ. 1894 год. пер.
БИБЛІОТЕКА
Арм. Благотв. О-ва на Кав.

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԱԶԱՐԵՆՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵՆՆ ԼԵԶՈՒԱՑ.

1861

ՏՊԱԳՐԵԱԼ

Ըստ հրամանի Ծայրագոյն Պատրիարգի Սրբոյ Էջմիածնի՝ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ Արքաշնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց, տուելոյ ի 6 Փետրուարի 1861 ամի։

A II 5696

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԹԻՖԼԻՍ ՀԻՄՆ. 1894 ԳՈՒՅՔԻ 1909 Основ. Тифл. Восн. пер.
БИБЛІОТЕКА Арм. Благотв. О-ва на Кавк.

ԱՌ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔԱՅՈՍ ՄԵՐ ՀԱՅՈՑ
ՄԱՏԹԷՈՍ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամքն Աստուծոյ Episkoposapet և Կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն Պատրիարգ Հռոմգգական նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական մայր Եկեղեցւոյ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԷՋՄԻԱԾՆԻ Բարեծնունդ Գրիգոր աղայ Մալենցեանց՝ հարազատի Արարատեան մայր Աթոռոյ Կաթուղիկէ Էջմիածնի։ Ի ձեռս անկեալ Ձեր 'ի 25 Հոկտեմբերի 1859 ամի գրութիւն ինչ անստորագիր՝ զբախնդիր վայրաբանութեամբք ոմանց մերազնեայ տկարամիտանձանց՝ խորթացելոց 'ի մայրենի հարազատ գրկաց մերս ուղղափառ սուրբ եկեղեցւոյ (յորում նոքա 'ի ձեռն վեցեակ յօդուածոց թշնամանօղ բանից իւրեանց տարբերեն զկրօնս իւրեանց յԷջմիածնական Հայոց), և Ձեր յարգութիւնն՝ ըստ ջերմեռանդն հարազատութեան հոգւոյ Ձեր առ Մայրն լուսոյ հանուրց Հայկազեան սեռի կաթուղիկէ Էջմիածին և առ

ուղղափառ կրօնս ամենահարազատ որդւոց երկանց նորին՝ ի հոգի խոցեալ ընդ այնօրինակ ազգատեաց վայրաբանութիւնս նոցին, և առ ի չքոտալ տեղւոջ ի բարեբեր անդաստանս մտաց և ոչ միում՝ հարազատ որդւոց մերս հայրենի սուրբ եկեղեցւոյ՝ ապականարար ընդարձակութեան փրշաբեր արմատոց նոցին, բերեալ մատուցեալք զայն մեզ ընդ առանձին աղերսագրութեան Ձերոյ՝ խնդրելով ի մէնջ արմատախիլ առնել զայնս։

Ուստի և մեք խրախացեալ ընդ այնպիսի Աստուածահաճոյ նախանձախնդրութիւն Ձեր, ըստ ներելոյ մերոյս կարողութեան և ըստ օժանդակելոյ Աստուածային շնորհաց՝ իմիջի երկարատև անձնամաշ տկարութեանց մերոց ձեռն արկաք ի 20 Նոյեմբերի 1859 ամի ի ձեռն ըստ Աստուծոյ բանից հերքել մի առ մի զոկարամտութիւն խոստովանութեանցնոցին՝ ի գրութեանս անդ երևելոց. և յուսամք՝ թէ այսօրինակ աշխատութիւն մեր

եղեցի պարիսպ ամրութեան շուրջ զայգեստա-
նեաւ Հայրենի եկեղեցւոյս մերոյ Առաքելականի
և ամենաբարեպաշտի ընդդէմ չարաչար ներգոր-
ծութեանց աղուիսուց փոքունց ապականչաց բա-
նաւոր տնկոց։

Զսոյն զայս աշխատութիւն մեր՝ զոր յորջոր-
ջեցաք «ՀԵՐԳՈՒՄՆ ՕՐԱԼԵԼԻՈՒ Վ ԱՅԲՐԱՄՆՈՒ-
ԹԵՆՑ ՈՄԵՆՑ ՄԵՐԱՕՆԵՆՑ ՏԿԱՐԱՄԻՑ ԵՆ-
ՁԵՆՑ», յանձն առնեմք Ձերում Ազգասիրու-
թեան առ մուծանել տալ 'ի մամուլ տպագրու-
թեան ծախիւք և արդեամբք Աստուածապարգև
կարողութեանց Ձերոց։

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ։

Ցամի Փրկչական 1860.
'ի 15 Դեկտեմբերի
'ի Սուրբ Էջմիածին։

«Զի զուան 'ի մէջ ժողովրդեան իմոյ ամբարիշտք, և որոգայթս իբրև զվարսն հաւորսաց կանգնեցին ապականել զմարդիկ»։

Երեմ. Ե. 26։

«Եւ յայսմ հետէ իցեմք տղայք խռովեալք և տատանեալք յամենայն հողմոց վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խորամանկութեամբ 'ի խաբէութիւն մոլորութեան։ Այլ ճշմարտեալք սիրով աճեցուսցուք 'ի Նա զամենայն, որ է գլուխ Քրիստոս»։

Եփես. Դ. 14. 15։

ՊԱՏՃԷՆ

ԶՐԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ

ԱՄԵՆՑ ՄԵՐԱԶՆԵՐՑ ՑԿԵՐԱՄԻՑ ԸՆԶԱՆՑ

—

Ստորագրեալքս գոլով ազգաւ Լուսաւորչական Հայ, ճանաչեմք զանձինս՝ հոս հնազանդ և հարկատու հպատակ բարեգութ Տէրութեան մեծի Օսմանեան, Սուլթան Ազիզ Մէճիտ Խան Օգոստափառ Իշխանակալին։

Իսկ ուղղադաւան կրօնք մեր՝ այսու տարբերի յԱրմենական Հայոց.

Ա. Մեք խոստովանիմք զսուրբ Ժողովն Քաղկեդոնի՝ համաձայն երից սրբազումար նախկին Ժողովոց, այսինքն՝ Նիկիոյ, Եփեսոսի, և Կոստանդնուպօլսոյ։

Բ. Հաստատեմք զոլ 'ի Քրիստոս երկուս կատարեալ բնութիւնս, այս է՝ Աստուածային և մարդկային, ըստ ուղղոյ դաւանութեան մեր սրբազան Գերսիսի Շնորհալւոյն՝ որ ասէ «Մերով բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոստովանի»։

Գ. Ընծայեմք զկատարեալ հաւատս 'ի վարդապետութիւնն քառասանի, ըստ որում երգէ Եկեղեցի սուրբ «Հուր շնչանի խաւար մերժի... զի թողութիւն մեզաց լինի»։

Դ. Ողջոյն ճանաչեմք լինել զՀրաշալի Ծնունդն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ 'ի 25 Դեկտեմբերի, և զՄկրտութիւնն՝ 'ի 6 Յունվարի. նոյնպէս և զաւետումն սրբոյ Կուսին՝ 'ի 25 Մարտի, ևս և զընծայումն քառասնօրեայ՝ յ2 Փետրվար ամսոյ։ Ուստի և մեք զայսոսիկ հրաշանորոգ տօնախմբութիւնս կատարեմք ընդ Յոյնս և ընդ Լատինս։

Ե. Եթէ դէպ լեցի կատարել տիեզերական իմն ժողով՝ 'ի լուծել վէճս ինչ կրօնականս, նախագահ այսմ ժողովոյ ճանաչեմք զյաջորդ գլխոյն Հաւատոյ զկանոնոյն Պետրոսի, ըստ օրինակի սրբազան նախնեաց մերոց. յոր միտս երգէ սուրբ Եկեղեցի զսքրբազան Առաքելոյն Պետրոսէ. «Գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ»։

Զ. Զգլուսումն սուրբ Հոգւոյն՝ ընդունիմք ըստ դաւանութեան Լուսաւորչի, զորմէ ասէ (նա) «Հայր յանձնէ, Որդի 'ի Հօրէ, Հոգի սուրբ 'ի նոցունց և 'ի նոսին»։

Իսկ տարբերութիւն մեր 'ի Հոովմէականաց՝ առ այժմ այս է։ Նախ՝ զի զսուրբ Աստուածն՝ խաչեցարիւ երգեմք այսպէս. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ Որդիդ՝ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։

Երկրորդ՝ զնորհուրդ սրբոյ պատարագի անարատ գինեաւ կատարեմք, չխառնելով յայտնապէս զջուր 'ի բաժակն։

Այս այսուհետև չունիմք զհաղորդութիւն ինչ ընդ եկեղեցւոյն Լիովմիածնական Հայոց, այլ ընդ իշխանութեամբ ազգապետին մերոյ՝ ազատ ծառայեմք Յիսուսի Քրիստոսի և մերոց խղճմտանաց՝ ըստ Տեառն պատուիրանի։ Ուստի ներքին համոզմամբ և մաքուր խղճմտանաք ստորագրեալ կնքեմք զայս գիր ուղղափառ դաւանութեան՝ ուխտիւք և երդմամբ. որով և խնդրեմք թագաւորանձանաք 'ի խնամակալ կառավարութենէ մեծի Օսմանեան՝ շնորհել մեզ զազգապետ 'ի հաւատարիմ հպատակաց նորին Օգոստափառ Տէրութեան. որ չհայելով 'ի կրօնս իւրաքանչիւր անձանց՝ խնամի հաւասարապէս զամենայն անխարդախ հաւատարիմս իւրում հզօր և արդարասէր կառավարութեան.

Որում միասնք հաւատարիմ հարկատու հպատակ հզօր տէրութեան Օսմանեան Լուսաւորչական Հայք.

Յ30 Մայիսի. 1859 ամի.

(Օրինակեցաք 'ի հնէ քաղաքարէ հեղինակէ գրանցուածէ).

ԲԱՆ Ա.

Ով խարդաւանող անհեթեթ գրութիւն՝ արդարև յաւէտ ծանակելի, որոյ իւրաքանչիւր տարբերութեանց բանք յայտնի իսկ առնեն, թէ արտաղրեալք են 'ի խռովայոյզ և 'ի չարայօժար մըտաց՝ իբրև ջուր պղտոր 'ի դառնահոս աղբերէ բղխեալ, անաւորժ յոյժ, և միանգամայն արհամարհելի 'ի խոհական մտաց կատարելոց, որք կարիցեն որոշել և ընտրել զլաւն՝ 'ի վատթարէն, զարին՝ 'ի չարէն, զպատուականն՝ յանարգէն, զուղղափառութիւնն՝ 'ի չարափառութենէն, զճշմարտապատում վարդապետութիւնն Աստուածարեալ Հարց սրբոց՝ 'ի խաբէպատիր բանից մոլորեցուցչաց, ևս և զհոգեշահ բանս Աստուածաշունչ զրոց՝ 'ի հոգեկորոյս չարանիւթ խորհրդոց սատանայական թելադրութեանց։

Բայց այս ամենայն յաջողի հոգեկան աչալրջութեամբ՝ խորհրդոց մտաց պարզութեամբ՝ և արթնութեամբ խղճի. ուրեմն միայն բնական լոյսն չնպաստէ այսպիսի կարևորագոյն արթնութեան, զի կարօտի այն՝ և Աստուածային շնորհաց լուսոյն, որ է զարթուցիչ խղճի մտաց, և հալածիչ խաւարային չարաչար խորհրդոց սատանայական թելադրութեանց։ Ապաքէն զայս լոյս շնորհաց խնդրէր Աստուածարդն Դաւիթ՝ աղաղակելով «Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբէք ննջեցից 'ի մահ»։ (Սաղմ. ԺԳ. 4)։

Տեսանեմ՝ բարեմիտ ընթերցող՝ զի՞նչ խնդրէ Աստուածարդն. կամի ասել՝ «Ով Տէր՝ արարիչ և պարգևիչ անաղօտ լուսոյ, որպէս

աչք մարմնոյս՝ թէ և լաւ ամենայնի առողջ իցէ՝ առանց լուսոյ ոչ ինչ կարէ տեսանել, սոյնպէս աչք հոգւոյս՝ առանց ներգործական շնորհաց քոց՝ չունի երբէք լաւ բարերար կամաց քոց գործել ճանաչել և ընտրել»։ Երջանիկ Մարգարէս այս՝ կանխագուշակ հոգւով միշտ տեսանելով յԱստուածային մարգասիրական խնամոց պատրաստեալ զանձառելի լոյսն շնորհաց՝ առ ի պարգևիլ ազգի մարդկան, որով կարողացին ճանաչել զշմարտութիւն և մերժել զստութիւն, ասէր «Զարգացայ ի խաւարի լոյս ուղղոց, ողորմած գթած և արդար է Տէր» (Պաղմ. ճԺա. 4)։

Զայս լոյս շնորհաց խոստանայ Աստուած արժանաւորաց, յասելն բանիւ մարգարէին Եսայեայ «Որք բնակեալ էք յաշխարհի և ի ստուերս մահու, լոյս ծագեսցէ ի ձեզ». և թէ «Երանելիս նոցա զնաւարն ի լոյս»։ (Եսայ. թ. 2։ խբ. 16)։

Այսու ամենացանկալի լուսով Աստուածային շնորհաց յուսալիր պանծայր մարգարէն Մելքիա՝ յասելն, «Թէ նստայց ի խաւարի՝ Տէր է իմ լոյս», (է. 8)։ Այս չուտիմք բնաւ երբէք ըստանալ զարթնութիւն խղճի մտաց մերոց, և առնել զընտրութիւն բարւոյն և չարին՝ առանց Աստուածային շնորհաց լուսոյն։

Աստանօր յորդորեսցեն զմեզ հոգեհանճար բանք Աստուածաբան վարդապետին մերոյ Պարգևի Շ՝նորհալւոյ ի սաացումն գերբնական լուսոյ շնորհաց Աստուածայնոց, որ գրէ այսպէս. «Զ՝ասն որոյ պարտիմք հանապազ արթուն լինել, ցանգ ի հսկման կալ, միշտ ապօթել ընդ մարգարէին թէ՝ լուսաւորեա Տէր զաչս իմ, զի մի երբէք ննջեցից ի մահ, և մի ասասցէ թշնամին իմ՝ թէ յաղթեցի նմա»։ Ի վերայ այսոցիկ՝ և Պօղոս ինքն հոգեբարբառ բանիւք իւրովք յասելն՝ «Արի որ ննջեաք, և կանգնեցաց ի մեռելոց, և լուսատու լեցի քեզ Քրիստոս» (Եփես. է. 14)։

Լոկ ապերախտ և ամբարիշտք կամեսցին և անդարձ ինքնահաճութեամբ յամառեալ կան ի չարախտավատ խորհուրդս մտաց մոլորութեան. վասն որոյ չարաչար և ամբարիշտ գործովք իւրեանց հեռանան և զրկին յԱստուածային լուսոյն շնորհաց, և ըստ ամենայնի լինին անընդունակ գերարփի և հոգեպայծառ նորին ներգործութեան. ուստի և Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս յաղագս այսպիսի չարադգեաց անձանց վճռելով, և զդատապարտութիւն նոցին յայտնելով՝ ասաց «Եւ այս իսկ է դատաստան. զի լոյս եկն յաշխարհս, և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան

զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան։ Օ՛ի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ զլոյս, և ոչ գայ առ լոյսն, զի մի յանդիմանեսցին գործք նորա։ Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա՝ թէ Աստուծով գործեցան» (Յովհ. ԺԳ. 19—21)։

Այս յոյժ կամակորութեամբ հեռացեալքն 'ի շնորհաց Աստուածային լուսոյն, և խստասրտութեամբ յամառեալքն 'ի խաւարամոլար և 'ի չարախտավար կամս իւրեանց, անշուշտ միշտ խարխափեալ թափառին 'ի մոլորաշաւիղ վայրս անպտղութեան գործոց բարեաց, և մանաւանդ չարաչար պիտի լինին խարդախական բանիւ և նենգաստիր հնարիւք դաւաճանել զոմանս, և մոլորեցուցանել և համանման կոծուցանել ինքեանց՝ վրիպեալ և թիւրեալ 'ի ճշմարտութեան լուսաշաւիղ ճանապարհէն Քրիստոնէական ուղղափառ հաւատոյ դաւանութեան և Աստուածահաճոյ գործոց բարութեան։ Այսպիսիք չունին երբէք ամրողջ հաւատս ընծայել առ յայտնի քարոզեալ ճշմարտութիւնն, զի խորհուրդք մտաց նոցա խանդաղեալք և թիւրեալք են, և ինքեանք իսկ խոտորեալք են յողջամիտ ճանաչմանէն հաւատոյ։

Այսոքին նմանեին դպիրք, փարիսեցիք և կեղծաւորք, որք միշտ հակառակ կային և ընդդէմ զնեին յայտնի և Աստուածահաճոյ սքանչելեաց և հոգեկիցոյց Աւետարանական վարդապետութեան և ամենատարած յայտատեսիլ ճշմարտութեան Որդւոյն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, զորոց բարեմամ անգամ յանդիմանեաց զթերահաւատութիւնն և զթիւրութիւնն սրտից և կամաց նոցին յասելն՝ «Վա՛յ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց, զի փակէք զարքայութիւնն երկնից առաջի մարդկանց. դուք ոչ մտանէք, և որոց մտանելն՝ թողլ չտայք մտանել» (Մատ. ԻԳ. 13)։ «Վա՛յ ձեզ օրինականացդ, զի թաղուցանէք զվախճանս դիտութեան, դուք ոչ մտանէք, և որ մտանելոցն են՝ արգելուք» (Ղուկ. ԺԱ. 52)։

Այլ ոչ թէ միայն յանդիմանէր զնոսա, այլ և սատուիրէր աշակերտաց իւրոց, և ամենայն հաւատացելոց՝ զդուշանալ զդատս և արիթուն մնաք, և չխարիլ երբէք 'ի մոլորեցուցիչ խորհրդոց և 'ի բանից խարդախութեան և 'ի թիւրաբարոյ մտախաբ և ստայոգ վարդապետութեանց նոցին, որպէս գրին Աւետարանիչք. «Զգոյշ լերուք 'ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխա-

լաց, և 'ի ներքոյ են գայլք յափշտակողք. 'ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։ Մի՞թէ քաղիցե՞ն 'ի փշոց խաղող, կամ 'ի տատասկէ թուզ»։ (Մատ. է. 15. 16)։ Պատուիրէր նոցա և ասէր. «Զգոյշ եղերուք 'ի խմորոյ անտի փարիսեցւոց՝ և 'ի խմորոյ Հերովդիանոսաց» (Մարկ. ը. 15)։ «Զգոյշ լերուք անձանց 'ի խմորոյ Սադուկեցւոցն, որ է կեղծաւորութիւն» (Ղուկ. ժբ. 1)։

Տես բարեմիտ ընթերցող՝ որդին որոտման, սիրելի աշակերտն Յիսուսի, աւետարանիչն Յովհաննէս, որչափ ընդոստուցիչ իմն բարբառով զարթուցանէ զմիտս մեր ըստ ամենայնի՝ զգուշանալ 'ի մոլորեցուցչաց և 'ի խաբէպատիր վարդապետութենց նոցին, գրելով այսպէս. «Զգոյշ լինիջիք անձանց, զի մի կորուսանիցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք բովանդակ զվարձն։։։։ Եթէ ոք գայցէ առ ձեզ, և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի ընդունիք զնա 'ի տուն, և մի ողջոյն տայցէք նմա։ Որ ասասցէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարաց գործոց նորա» (բ. Յովհ. Կաթ. 8. 10. 11)։ Տես դու աստանօր՝ ընթերցասէր ողջամիտ սիրելի՝ զիարդ յորդորական և համոզիչ մնաց բարւոք խորհրդածութեամբ 'ի վերայ բանից սրբազան Աւետարանչիս՝ սկիզբն առնէ բանին երանելի սուրբ վարդապետն մեր Արգիս Շնորհալի յասելն. «Դու զի՞նչ այլ ինչ էին չար գործք նոցա, եթէ ոչ՝ հերձուածն չարութեան, զոր նիւթէին 'ի կորուստս անձանց իւրեանց, և 'ի խաբէութիւն այնոցիկ՝ որ զնոսայն ընդունէին։։։։ Արդ՝ ասէ. «Որ բարեկամաբար ընդունի զնոսա 'ի տուն, և կամ տայցէ նոցա ողջոյն, հաստատելով զնոսա 'ի չարին, թէպէտ և անձամբ 'ի ներքս ոչ է, սակայն կցորդ է չարեացն նոցա. քանզի նզովեցեալ են այնպիսիքն արժանաւոր, և ոչ հոգևոր և Աստուածային ողջունին, և իբրև զկաստաղիս հալածական առնել 'ի մարդկանէ, և ոչ 'ի տունս ընդունել, զի մի որ 'ի նոցանէ ժանդն է անօրէնութեան, և առաւել կատաղութիւնս ծնանիցի 'ի հոգիս լսողացն։ Զմին իրի ասաց. «Որ ասասցէ նմա ողջոյն, կցորդ լինիցի չարաց գործոց նորա» ('ի Մեկն. Կաթող. յէջ 607. 608. ըստ նորատ.)։

Ընկնելիր լեցուլ բարեյորդոր խրատուցն սրբազան Առաքելոյն Պողոսի, որ ասէ՝ «Զգոյշ լերուք. մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ և մեռամի խաբէութեամբ» (Պողոս. բ. 8), և եթէ՝ «Զգոյշ լերուք, գուցէ ոք յանեալ դասնիցի 'ի շնորհացն Աստուծոյ. մի ոք արմատ դառնութեան 'ի վեր երևեալ

նեղիցէ, և նոքա բազումք պղծիցին» (Եբր. ժբ. 15)։ Ամէն նրման և սրբազան առաքեալն Պետրոս խրատէ զհաւատացեալս՝ ըզգուշանալ յամենայն անառակ գնացից և խորհրդոց մոլորութեանց, և բեղմնաւորիլ ածիլ առաքինութեամբ 'ի շնորհս և 'ի յաւիտենական գիտութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. վասն որոյ գրէ. «Դուք այսուհետև սիրելիք՝ իբրև զկանխագէտս զգուշացարջիք, զի մի՝ անառակ մոլորութեամբն զգայեալք՝ անկանիջիք յաստեացս հաստատութենէ։ Աճեցէք շնորհօք և գիտութեամբ Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» (բ. կաթող. գ. 17. 18)։

Գիտէք՝ որդիք ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ մերոյ, սիրելիք իմ 'ի Տէր, առաքելաբարոյ զգուշութիւն և յարարթուն հրկոզութիւն առաւել որոյ պատշաճի, և այլ ոմանք պարտաւորին առ այս. այնոքիկ՝ որք կոչին հոգևոր Վերատեսուչք, և կարգեալ են հոգևոր Հովիք 'ի Հոգւոյն սրբոյ շնորհացն 'ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի։ Եւ այս՝ ունիմք վկայ զնրատական և գյոյդդրական բան սրբազան առաքելոյն Պօղոսի, որ միայն առ հոգևորական դասս երիցանց և առաջնորդաց սեպհական ժողովրդոց Քրիստոսի խօսեցաւ այսպէս. «Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս, հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։ Քանզի գիտեմ ես, եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք 'ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտիդ, և 'ի ձէնջ յարիցեն արք՝ որ խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։ Վասն այսորիկ արթուն կացէք, և յիշեցէք՝ զի զերկամ մի զդայդ և ըզցերեկ ոչ դադարեցի արտասուք խրատել զմի մի իւրաքանչիւր։ Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ՝ և բանի շնորհայ նոցա, որ կարողն է շինել և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան» (Գործք. Ի. 28—32)։

Զայս կարևոր զգուշութիւն իբրև անհրաժեշտ պարտաւորութիւն առաջնորդաց Եկեղեցւոյ կանոնագրէ վասն նոցին Դասխահայրապետն և մեծ Վահանայապետն՝ Լուսաւորիչն մեր սուրբն Գրիգոր՝ քարոզելով այսպէս. «Զի որք լինին քարոզք ճշմարտութեան, ճշմարտութիւնն ինքնին յարդարէ զնոսա անմոլար գիտութեամբն (Յովհ. Ը. 32)։ Եւ Աստուած փառաւորէ զնոսա՝ յորժամ տեսանէ 'ի նոսա բարեգործութեան ջանս, զի զոր

նոքայն տնկեն և մնուցանեն, Աստուած աճեցուցանէ և հաստատէ առեւտրաւք կենացն, 'ի փառս և 'ի պարծանս նոցա 'ի տիեզերական Աստնին 'ի յարութեան՝ որ 'ի մեռելոց։ Եւ կարացեն ասել. ահա մեք և մանկունք մեր ճշմարտեալ, զոր եւտ մեզ Աստուած (Եսայ. ը. 18)։ Եւ պատկեալ առաքինութեամբ՝ առնուն զզրաւականն խոստացեալ առեւեցն Քրիստոսի։ Զի որ ասասցէ և ուսուցէ, ասէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից. (Մատ. ե. 19)։ Իսկ որում հաւատացաւ վերակացութիւն ժողովրդոցն, եթէ հեղգասցի 'ի նոցա խնամեն և 'ի հոգեւոր ուսումն և 'ի խրատ, և ստուգանիցէ, կամ ոչ տացէ զնարմնաւոր պէտս կարգելոց, այլ ուտէ և ըմպէ անզգայաբար, յանկարծակի գայցէ 'ի վերայ նորա մահ, յորում աւուր ակն ոչ ունիցի, և հատուցանէ բանն Աստուծոյ՝ սուր.. (Երր. դ. 12), ընդ մէջ կտրեսցէ զնա, յինքն առեալ զչնորհսն՝ որ 'ի Տեառնէ, և զվատթարսն ընդ անհաւատսն դիցէ 'ի խաւարն արտաքին և 'ի հուրն, ուր լալ աչաց է և կրճել ատամանց (Մատ. իդ. 51). զի «Լաւատոր 'ի լսելոյ են, ասէ Առաքեալն, և լուր 'ի բանէն Քրիստոսի. զի՞նչդ հաւատասցին զոր ոչն ուսան, և կամ զի՞նչդ աղաչեսցեն՝ զոր ոչն գիտեն (Հռովմ. ժ. 14. 17)։ Եւ առ մարդարէն Եզեկիել՝ օրինակաւ առ վերակացուս՝ ասէ «Դէպ կացուցի զքեզ՝ զգուշացիր անձինդ, և զգուշացիր ժողովրդանդ, և ասասցես ցանօրէնն եթէ մահուամբ մեռցիս։ Եթէ ոչ զգաստացի (նա) և ոչ դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, մեռցի զմեղացն մահ, և դու ապրեսցիս, զի զգուշացուցեր յանաջագոյն։ Եւպա եթէ զգաստացի և դարձցի խոստովանութեամբ յապաշխարութիւն, կեցով կեցցէ զարդար կենան, և մի մեռցի զմեղացն մահ։ Եւպա եթէ ոչ զգուշացուցեր նմա, նա 'ի մեղս իւր մեռցի 'ի պատուհաս, և զարիւն նորա 'ի ձեռաց քոց խնդրեցից՝ ասէ զայս ամենեցունց Տէրն. (Եզեկ. դ. 17—20)... Տանուտէր անուանեաց զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտսն ճշմարտութեան աւանդիցն, և զանձք՝ զիմաստս սրտին, որ 'ի հնոյն և 'ի նորոյս ունի ստուգութիւն. և փայելեցուցանէ զմերձաւորս և զհեռաւորս բարի խորհրդովք և բարի գործովք և անարատ սրբութեամբ։ Եւ զչար զանձուս զմիթերսն արտաքս պիղէ, մինչ ոչ մնացեն նշխարք չար զանձուցն 'ի բարի սերմանան՝ ընտրելով զաւն 'ի վատթարէն։ Ինքեանք, ասէ, օրինակք լեցին կացուք և գնացուք, զի աշակեր-

տեսչքն յորդորեսցին ՝ի ճշմարիտ վարս՝ որք փառք են վարդապետաց, գնալ ՝ի ճանապարհս արդարոց, և խորհել ՝ի պատուիրանս Տեառն, և առաջնորդել ՝ի լուսաւոր վարդապետութեան վարս և յարդարութիւնս ամենայն։ Զի զամենեսեան ժառանգորդս արասցէ, ազգայութեան Աստուծոյ՝ զործակից լինել կենաբար Աւետարանական խրատուն, և մի իւրք զանց առնել ճշմարիտ առանդիցն։ Զի եթէ միով իւրք ինչ զթիցես, եղեր ամենայն օրինացն պարտական. (Յակ. բ. 10). զի ճշմարտեալք հաւատով և սրբեալք ՝ի խղճէ չարեաց, միշտ մերձաւորք լեցին մարմնոյ և արեան Տեառն, ՝ի նեղբին մարդն ընկալեալ զԲրիստոս, որ լուսաւորէ զսուրբն անապատ և անրիծ խրատիւք սուրբ սիրոյն, հոգեւոր և մարմնաւոր գարմանօք յամենասուրբ Երրորդութենէն միշտ։ «Իսկ յորժամ՝Բրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, ասէ Առաքեալն, յայնժամ՝ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք». (Կողոս. գ. 4)։ Որպէս զի եղեցի մեզ ամենեցուն՝ որ զգեցաք զԲրիստոս, ճշմարտեալք հաւատով և առաքինասէր վարուք՝ հաճոյանալ Աստուծոյ, և մերձենալ ՝ի լոյն անմատոյց, և պայծառանալ ՝ի փառացն Բրիստոսի յուսոյն մերոյ ՝ի տիեզերական Աւանին ՝ի յարութեան՝ որ ՝ի մեռելոց. և փառաւորեսցուք զամենազօր Տէրութիւնն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից ամէն։ (Յհ. Ճառ. ԺԷ)։

Զարդ կարի զգուշացեալ մեր ՝ի բանից հին և նոր Պատկարանաց և ՝ի հոգւոյն զրաւածոց հարցն սրբոց, մասիցուք այժմ վերաքննել զգաղտնարարացեալ բանս այնր զրութեան, յորում՝ հեղինակն այսպէս սեթևեթեալ կեղծիւք շաղիաղիսի. «Իսկ ուղղագաւան կրօնք մեր՝ այսու տարբերի ԱՆՔՄԻԱԾՆԱԿԱՆ Հայոց»։

Ով չարաչար զրպարտութեան և խարէական ձեռնարկութեան, ով անարգանաց և բասրանաց արժանի բանք։ Աստանօր անժբիտելի վէճս Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Բրիստոսի յայտնի իսկ ասողսդ ՝ի վերայ զրողն փերոյիշեալ զրարանութեան եթէ՝ «Արդ բարի՝ ՝ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զարիս, և մարդ չար՝ ՝ի չար գանձուց սրտի իւրոյ հանէ զարիս։ Բայց ասեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ բանի՝ զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի։ Զի ՝ի բանից քոց արդարասցիս, և ՝ի բանից քոց պարտաւորեսցիս» (Մատ. ԺԲ. 35—37)։

Զի՞նչ անուանեսցուք զՀեղինակն վերոյգրեալ տարբերու-

թեանց, որք են իմաստակ մտաց նոցին շաղակրատանք, և վրիպեալ խորհրդոց ունայնաբանութիւնք. բայց չէ հարկ մեզ ասասանօր նորանոր բանս յօրինել 'ի վերայ վայրախօսութեանցս. վասն զի սրբազան Առաքեալն Պօղոս ճշդիւ իրաւաբանէ յաղագս այսպիսեաց յասելն «Ամենեքեան զլուխ պատուիրանին՝ սէր է, 'ի սուրբ սրտէ, և 'ի մտաց բարեաց, և յանկեղծաւոր հաւատոց, յորոց ոմանք վրիպեցան՝ խոտորեալք յունայնութիւն բանից. կամին լինել վարդապետք օրինաց, ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, և ոչ վասն որոց պնդեսին են» (ա. Տիմոթ. ա. 5—7):

Մի կարի զարմասցուք ընդ անկարգ և ինքնաստեղծ բանս նոցին իսկ զբաանողին, այլ բարւոք խոստովանութիւն մեր հաստատուն և ուղղափառ հաւատոց աստանօր ճշդրտեսցի ևս: Եթէ ոք յեկեղեցականաց և կամ յաշխարհականաց հեռացեալ դասանիցի 'ի լուսոյ ընդհանուր սուրբ Հոգւոյն Աստուծոյ, բնաւ ոչ կարէ այնպիսին ուղղել և յստակ մտաւ ըստ հաճոյս Աստուծոյ դասել յասպարիզի քննութեան հոգևոր իրաց և խորհրդոց, թէ և իցէ մարդկային իմաստութեամբ հռետոր երևեալ յաշխարհի, և բնական լուսով մտաց հանճարեղ համարեալ 'ի մարդկանէ, որով պնդիցէ հաստատել զիւր թիւր կարծիս և զմոլորական չարախտաւոր դատմունս մտացածինս. քանզի այս ամենայն գիտութիւն և իմաստութիւն՝ անուանի երկրաւոր ընչաւոր և դիւահարք, որպէս վկայէ սրբազան Առաքեալն Յակոբոս «Ոչ իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ, ցուցցէ 'ի բարւոք գնացից իւրոց զգործս իւր հեզութեամբ իմաստութեան: Եպա թէ նախանձ՝ և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք 'ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւն: Ոչ է իմաստութիւնս այս իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր՝ շնչաւոր և դիւական. զի ուր հոն և նախանձ, անդ է անկարգութիւն և ամենայն իրք չարք» (Յակ. գ. 13—16):

Տես՝ զնարդ սոսկալիս արձակէ բարբառս Արարդարէն Աստուծոյ Աստուածակոչս կողմանէ՝ յաղագս այսպիսի չարայոյզ խորհրդականաց և վատթարագոյն կրից իւրանց հետևողաց. «Ա՛յսպէս ասէ Տէր. վա՜յ ձեզ որդիք ապստամբք, զի խորհեցայք խորհուրդ՝ և ոչ ինձ, դաշինս կոնիք՝ և ոչ իմով հոգւով» (Եսայ. Ը. 1): Երդիք 'ի միս առնէ զայս Աստուածասաստ սպառնալիս. ուրեմն բացդատեսս զայս ընդ խրատական բանից երանելի Առաքելոյն Պօղոսի՝ որ առ Տիմոթէոս սիրելի աշակերտ իւր. որ կարդ

յորդորանաք զգուշացուցանել զնա 'ի յանդգնութենէ և 'ի խարդախութենէ մոլորամիտ չարասիրաց՝ 'ի խոտորելոց և յոտարացելոց 'ի ճշմարտութենէ ուղղափառ հաւատոյ և յանսխալ վարդապետութենէն Յիսուսի Քրիստոսի, և 'ի կամակոր ժխտողաց քրիստոնէական անտեղի պարտաւորութեանց. յայտնիսկաց ապականելոց մնաք՝ և 'ի վատացեալոց մոլորական վարուք՝ ըստ ամենայնի հրաժարեալ զգուշացիր, ասէ, սա՛ Տիմոթէոս սիրելի զորդակից իմ, «Աստէ՛ ոք այլ ազգ ինչ ուսուցանիցէ, և ո՛չ անսայցէ ողջմտութեան բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և ըստ աստուածպաշտութեան վարդապետութեանն, այնպիսին հպարտացեալ է, և ոչինչ ո՛չ գիտէ. այլ տապի 'ի խնդիրս և 'ի բանս հակառակութեան. ուստի լինին նախանձ, հեգ, հայհոյութիւնք, կարծիք չարեաց, խարդախութիւնք ապականելոց մնաց մարդկան, և օտարացելոց 'ի ճշմարտութենէ անտի, ոք շահաւաճառս համարին զԱստուածպաշտութիւն. բայց դու մերժեսջիր յայնպիսեաց անտի» (եր. Տիմոթ. ՚Ա. 3—5)։

Աստանօր երանելիք ողջամիտ հարազատ որդւոց ուղղափառ սուրբ Եկեղեցւոյն մերոյ, որք շնորհիւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ ո՛չ երբէք կցորդեալ հաղորդ զատն մոլորամիտ խորհրդոց ամբարշտաց, և ո՛չ ընկերացան չարախտավատ գործողութեանց և վատթար վարուց մեղասիրաց, ևս և ո՛չ մնասաբար եղեալ՝ հաճեցան ընդունել զթեոնաւոր մոլորութիւնս և զմոլորութիւնս ժամանակաբոյիս։ Ապա վայելչացի 'ի հոգիս նոցա իբրև պսակ փառաց՝ ցանկալին այն երանութիւն, զոր 'ի սկզբան Աստմսին դնէ հոգեւոր մարգարէն Դաւիթ յասելն «Երանեալ է այր, որ ո՛չ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց, 'ի ճանապարհի մեղաւորաց նա ո՛չ եկաց, և յաթոռս ժանտից նա ո՛չ նստաւ» (եր. 1)։

ՀԱՅԿ ԴԱՐՁՈՅ ՁՈՐՁ ՀԱՅ
Ն Ի ՊՍԵՆՅՈՒ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՊԱԿԱԴԵՄԻԱ

ԲԱՆ Բ.

Ընդ՝ մտիցուք սատանայ յառաջին տեսութիւն շփոթիչ և ամբոխիչ մտաց՝ անտարբեր և ծաղրանս բանից հիզնական գրութեանս, որ ասէ «Լակ ուղղադաւան կրօնք մեր՝ այսու տարբերի յԱՀմիածնական Հայոց»։

Տես դու՝ ողջամիտ սիրելի ընթերցող, զի հիզնական այսր գրոց և ստորագրեալքն միայն անուանեն զանձինս իւրեանց՝ Լուսաւորչական, որ է ասել՝ հետևողք սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, և ընդունողք ողջամիտ և հոգեշահ վարդապետութեան նորին. բայց կարի հեռացեալ դատանին 'ի նորին հոգերոյս վարդապետութենէն՝ զոր յայտնի և ճիշդ համեմատութիւր գրոց քարոզեաց, «Միաբանութիւն հաւատոյ և սուրբ վարուց՝ տղրիւր է, ասէ, գիտութեան, յորմէ բաշխի անճափաբար այն՝ որ տայ իւրաքանչիւր զէնս նահատակութեան... Միաբանութիւն հաւատոյ և սուրբ վարուց՝ խառն ընդ արարչին շնորհս և սուրբ յիշատակաց նորա՝ անքակ ունի զամենայն անդամն առ դրունս ողորմութեան սիրոյ նորա, վասն ամենայն բարեաց՝ որ յարարածս է։ Եւ ընդ սոյն դուռն մտանեն պարգևք միաբանութեան, որ ազատէ և մեծացուցանէ, և նոցին միաբանութեամբն ընդունին անդամքն 'ի միմեանց զօգնութիւն առ շինութիւն ըստ իւրաքանչիւր կարգի։ Եւ ամենայն որ քակի 'ի միաբանութենէն և 'ի սուրբ վարուց, ոչ միայն լինի հրաժեշտ 'ի յերանութեանց անտի, այլ և 'ի պատիժ մատնի, և որպէս անդամ 'ի մարմնոյ հատեալ՝ անպիտան լինի, և կամ որպէս ոստ 'ի ծառոյ 'ի հուր արկանի» (Հաճախ. ճառ. ժա)։

Ապաքէն թող բաղդատեսցեն ողջամիտ քննութեամբ և խրատ ճիւ մտաց զՀոգեշունչ բանս ճշմարտաբարոյ վարդապետութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի ընդ մտահար բանիցն՝ Լուսաւորչական անուանելոց, որք այսու բանիս ժխտեն և մերժեն զԼուսաւորչական խրատս և վարդապետութիւնս՝ գրելով այսպէս. «Լակ ուղղադաւան կրօնք մեր՝ այսու տարբերի յԱՀՀ-

միածնական ՝ այլոց»։ Այսու բաժանել կամին ՝ի բուն իսկ Լուսաւորչական վարդապետութենէն, և մանաւանդ որոշել ՝ի միաբանութենէ՝ սրոյ ՝օրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի քարոզութեամբն հաստատեալ միածնակՋ մայր Եկեղեցւոյն՝ զողջամիտ անդամն. փան որոյ սարբերութիւն ինն հաստատեալ ՋանՀան անտեղի և անՀիմն դրութեամբ։ Այս իսկ է թեպղութիւն բանարկութեան. զորոյ օրինակս բաղումս գտանեմք եթէ՝ ՝ի սուրբ գիրս և եթէ՝ յեկեղեցական պատմութիւնս, որպիսի էր Արմեն մոգն։ Տեսանէր սա զմեծամեծ աքանչելիսն՝ որք լինէին ՝ի ձեռն Փիլիպպոսի Առաքելոյն Գրիստոսի, և ասասցիս հաւատայր, թէ ճշմարիտ է այն՝ զոր Փիլիպպոս քարոզէր. ընկալաւ զմկրտութիւն, սակայն ոչ յարեցաւ սրտի մտօք առ այն ճշմարտութիւն. և խրնդրելով փառաւորիլ ՝ի ժողովրդենէն, և յարգոյ ցուցանել զանձն իւր առաջի նոցա, և իրրև զԱռաքեալսն Գրիստոսի հուչակիլ համբաւուք աքանչելեաց, միշտ երկնէր ՝ի միտս զայս խորհուրդ չարութեան թեպղութեամբ ասասնայի, այսինքն՝ ընչիւք ստանալ զԱռաքելոյն Գրիստոսի զաքանչելագործութեանն զզօրութիւն։ Հայազգս սորին չարաշար մոլորութեան գրէ սուրբն Կիւրեղ Երուսաղէմայ ՝այրապետն այսպէս. «Մեծայն հիրհսութեանցն գոսակ Արմենն կախարդ։ Արմենն այն՝ որ ՝ի Գործս Առաքելոցն պատմի, որ զանձնատ շնորհս ՝Հոգւոյն՝ մատնաւոր արծաթոյ գնել կամեցաւ, և լուաւ զոր ասացն երանելի Առաքեալն Պետրոս. «Արծաթ քո ընդ քեզ լիցի ՝ի կորուստ, զի զպարգևսն Աստուծոյ Հանդիպեցար ընչիւք ստանալ։ Ոչ գոյ քեզ մասն և բաժին ՝ի բանիդ յայդմիկ, այլովքն Հանդերձ» (՝ի Կոչ. ընծ. յէջ 101. բառ նոր տպ.)։

Իսկ Եպիկորեանն աղանդաւորք՝ որք բաւական Հանարեին ըզսրտիւ միայն Հաւատալն, գայթագղելով ընդ գրաւոր բանս Պօղոսի սրբոյն՝ Առաքելոյն որ առ եկեղեցին ՝Հռովմայեցւոց «Զի եթէ խոստովանեսցիս բերանով քով Տէր զՅիսուս, և հաւատասցես ՝ի սրտի քում՝ թէ Աստուած յարոյց զնա ՝ի մեռելոց, կեցցես. զի սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք ՝ի փրկութիւն» (՝Հռովմ. Ժ. 9. 10), ասէին Հանարձակ. Պրտք մեր տարբերին յեկեղեցւոյն ՝Հռովմայեցւոց։ Այնպէս Եպիկորայական աղանդաւորք՝ որք միայն Հաւատային Աւետարանին Յիսուսի, և այն՝ ոչ կենդանի Հաւատով, անխորհ հեռեէին

մարմնաւոր հաճոյից և յօժարութեան կամաց իւրեանց՝ հակառակ ժողովոյն սրբոյն Առաքելոց (Գործք. ԺԵ). և այսու՝ զմի մասն ի գրուածոց Առաքելոյն Պողոսի առ Կորնթացւոց եկեղեցին՝ ընդունէին, և զմի մասն ոչ ընդունէին «Ամենայն ինչ ինձ մարթ է.» ընդունէին՝ թիւր մեկնութեամբ. «այլ՝ ոչ ամենայն ինչ օգուտ է.» (ա. Կորն. զ. 12) չընդունէին՝ կամակոր մոլորութեանց իւրեանց հետևելով. ուստի յանդգնաբար ասէին. Հեռի եմք ի Կորնթացւոց եկեղեցւոյն, զի կրօնք մեր տարբերին ի նոցանէ։ Այնպէս և սոքա թեչադրեալք ի չար հոգւոյ անտի, ըստ ամենայնի յիմարացեալք ի միտս և ի խորհուրդս իւրեանց՝ գրբեն «Ուղղադատան կրօնք մեր՝ այսու տարբերի Հայաստանեան Հայոց»։ Ոչ խնայեցութեան սոցին, մի զուցէ այսորիկ անձինք՝ Լուսաւորչական Հայք ձեւացեալք՝ կէր գեղբայն դիրիստանեկան հաւատոց սուրբ կրօնս օտարացուցեալ ի սահմանաց Աստուածաշունչ սուրբ գրոց և ի շաւղաց ողջամիտ փարդապատութեանց Աստուածաբանաց սուրբ Հարցն մերոց՝ փիլիսոփայօրէն ընդ աշխարհագրական քննութեամբ իցեն ենթադրեալ, և Փիլոքրապէս բաղդատելով զգաստահանան աշխարհի իրիք ընդ տարբերութեանց այլոց աշխարհի՝ գնմանօրինակ տարբերութիւնս իցեն գրտեալ ի մէջ քրիստոնէական կրօնից մերոց, զոր օրինակ՝ Աշխարհագրական քննութիւնն գիտէ զԱրևելեան կլիմայն ամենայն կերպիւ անհամեմատ և տարբեր սահմանել ի կլիմայէն Արևմտից, նոյնպէս և զ Հիւսիսային ի Հարաւային կլիմայէն։ Այս երևի՝ թէ զայսոքիսի ինն տարբերութիւն երևակայեալ իցեն ի ցեղարեալ միտս իւրեանց՝ ամենասխալ ձեռնարկութեամբ, սահմանելով զկրօնս ըստ այսմ «Ուղղադատան կրօնք մեր՝ այսու տարբերի Հայաստանեան Հայոց»։ Ուրեմն անկանոն բաղդատութիւն հիզենական նոյն պարտաւորի դրութեան՝ չիցէ ըստ այսմ օրինակի, ուստի՞ ուրեմն գտանեն և հնարեն զտարբերութիւնն զայն։ Արեւի թէ՝ չեն ուշադիր եղեալ սուրբ գրոց, յորում՝ պատմի թէ յաւուրս սրբոյն Առաքելոյց հաստատեալ լինէին հաւատացեալք ի ճշմարիտ կրօնս քրիստոսահիմն հաւատոյ, որպէս գրեալ է ի բազում տեղիս «Ուրաց Փիլիպպոս զբերան իւր, և սկսեալ ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց նոցա զՅիսուս Որդիստոս»։ և թէ «Որքա էին ազնուականագոյնք՝ քան որ ի Թեսաղոնիկիս էին, որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ. հանապազ քննէին զգի-

ըրս՝ եթէ իցէ՞ այս այսպէս». և այլուր թէ «Ով իրրև եհաս անդր, բաղումք նպաստ լինիր հաւատացելոցն ի ձեռն շնորհացն. քանզի պնդագոյն զ՝Լրէայսն յանդիմանէր հրապարակաւ, ցուցանել զբրով՝ եթէ Քրիստոսն է Յիսուս» (Գործոց. թ. 35։ ժ. 10. 11. ժբ. 27)։ Այս և Առաքեալն Պօղոս այսու բանիւ զրէ առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր. «Այլ մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր. մոլորեալք՝ և մոլորեցուցանիցին։ Այլ դու հաստատուն կաց յոր ուսարդ, և հաւատարիմ եղեր. գիտես՝ ուստի՛ ուսար, զի ի մանկութենէ զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն՝ ի ձեռն հաւատոյն որ ի Քրիստոս Յիսուս։ Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետութիւն են և ի յանդիմանութիւն, և յուղղութիւն, և ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ» (ի. Տիմ. գ. 15—17)։ Ահ գուցէ ընդ մէջ քրիստոնէական ամենաբարեպաշտ կրօնից մերոց տարբերութիւն մուծանողք և գրով հրատարակողք՝ ի ցնորեալ միտս իւրեանց երևակայեալ իցեն զաշակերտեարսն ի ձեմարանին Պղատոնի և Արիստոտելի, և զաշակերտեարսն յաստուծեանսն Հոմերոսի, առ որս տարբերութիւնք ուսմանց անշուշտ գտանիին. քանզի Պղատոնեանք և Արիստոտելեանք ուսանիին զբնական մեկնութիւնս, իսկ Հոմերոսեանք ուսանիին զչափաբերական խնամութիւնս. ուստի և տարբերիին ի միմեանց՝ գաղափարաբ ուսմանց։ Իսկ դասատարակեալքն ի վարդապետարանի Ճշմարիտ քրիստոնէական կրօնի՝ ուղղափառ խոստովանութեամբ և կենդանի հաւատով անմոլար կացուցեալ Ճշացեալ բարի քրիստոնեայք՝ բնաւ երբէք չընդունին և ոչ ստեղծաբանել գիտեն զտարբերութիւնս, զզանազանութիւնս և զայլայլութիւնս ի կրօնս և ի վարդապետութիւնս հաւատոյ. վասն զի Աստուածաբանական և Առաքելական ուսմանց և ողջմիտ վարդապետութեան նախնի Հայոց սրբոց աշակերտեալքն՝ հաստատուն կան ի մի հաւատս՝ առանց խոտորելոյ յաջ կամ յահեակ, ըստ փիլիսոփայութեան երջանիկ Առաքելոյն Պօղոսի. «Եթէ կայցէ՛ ի հաւատն արմատացեալք և հաստատեալք, և անշարժք ի յուսոյ Աւետարանին՝ զոր լուարուք՝ քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ» (Կող. ա. 23)։

ԲԱՆ Գ.

Այսքիկ մասնաւոր ողորմելիք զի՞նչ կամին յայտնել՝ գրելով այսպէս. «Աղղաւաւան կրօնք մեր՝ այսու տարրերի Յիսուսմածնական Հայոց»։ Արդ՝ մայր Աթոռոյ սրբոյ Յիսուսածնի և սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի բազմերախտ Հայրապետի հարազատ և անմոլար որդիք հարցանեն. զի՞նչ նորալուրդ իցէ ձայն, կրօնագիտութիւնն, թէ անկրօնութիւն։ Աթէ ճիշդ կրօնագիտութիւն է բանն՝ զոր քարոզեն և ուսուցանեն մեզ բանք Աստուածային սուրբ գրոց և Աստուածաբան վարդապետք ճշմարտութիւն, չէր հարկ ապաքէն այնպէս հանդգնաբար ենթադրել զասարերութիւն իմն՝ ի մէջ քրիստոնէական սուրբ կրօնից մերոց։ Այլ ուղղափառ Հայք՝ հաւատարիմ որդիքս մայր Աթոռոյ սրբոյ Յիսուսածնի՝ հարկադրիմք, նախ պատասխանել զբարձրութիւնց և վայրաբանութիւնց նոցին՝ բանիւ սրբազան Առաքելոյն Պօղոսի «Աթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցեմ այնմ՝ որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ խօսիցին ընդ իս՝ գուժ» (ա՛. Կորն. ժդ. 11)։ Երկրորդ՝ ցրելով զձեռնարկութիւն վրդովեալ մտաց և սրտից նոցին՝ զներ-հական ծայրն այնր ձեռնարկութեան շրջելեմք՝ ի նոցայն յանդգնեմնութիւն, զի օտար է այդ առաջարկութիւն և յոյժ հեռի Աստուածային բանից սուրբ գրոց, և՝ ի սահմանադրութենէ Առաքելոց և առաքելատարս սրբազան Հայրապետաց, և ս և՝ ի ճիշդ պահանջմանէ քրիստոնէական սուրբ կրօնից. ապա շրջեսցի՝ ի վերայ նոցին բան սրբազան Առաքելոյն Պօղոսի «Կամէ լինել վարդապետք օրինաց. ինքեանք ոչ իմանան զի՞նչ խօսին, և ոչ զիան որոց պնդեալն են» (ա՛ Տիմ. ա. 7)։ Այսպէս՝ քննեսցուք առատնօր՝ եթէ զի՞նչ են կրօնք Արիսատոնէից, և զի՞նչ սահման նորին։ Երանելի Առաքեալն Պօղոս Նոր Հրէայն անուանէ յիրկրորդ թուղթ Կորնթացւոց եկեղեցւոյն. «Դայց եթէ ինչ՝ ի Արիսատոս նոր արարեալ իցէ. զի հինն անց, արդ նոր եղև ամենայն» (բ՛ Կորն. Ե. 17). այսինքն՝ քրիստոնէական կրօնիս, հնոյ հայական օրինաց Հիսուսի, նորոգեցաւ հոգի մեր՝ ի նորոգութիւն արդարութեան յաւիտե-

նական անմահ կենդանութեամբ. վասն զի խորհուրդ մարդեղութեան Յիսուսի կենարարին մերոյ՝ նոր արարչագործութիւն քարոզի Աստուծոյ անտի, բան այնմ «Օ՛ի Ի՛ Քրիստոս Յիսուս ոչ թլփատութիւն ինչ է, և ոչ անթլփատութիւն, այլ նոր արարած» (Գաղատ. գ. 15)։ Իբր զի արարչութիւն շնորհաց Քրիստոսի նորահրաշ է՝ և անմահն. հոգեւորական նոր կենաց անմահութեան զօրութիւն է Ի՛ հանդիսի քրիստոնէական սուրբ կրօնից մեր, ասէ սուրբն Եփրեմ (հատոր Գ)։ Այս սքանչելի է այս շնորհ Յիսուսի նոր օրինաց, նոր սուրբ ճշմարիտ կրօնից, նախասահմանեալ նոր արարչագործութիւն։ Այս շնորհական կրօնս նոր օրինաց հաստատուն կալ քարոզել կրանելի Աստուածն Պօղոս՝ եկեղեցւոյն Պողոսացւոց «Մի՛ ստէք միմեանց, մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք, և զգեցարուք զնորն նորոգեալ Ի՛ գիտութիւն, ըստ պատկերի Արարչին իւրոյ» (Պողոս. գ. 9. 10)։ Այս բարւոք սահմանեալ սուրբ Յովհան Ոսկիբերան զքրիստոսապարգև շնորհական օրինաց գկրօնս մեր (Ի մեկնութեան թղթոյն Պօղոսի առ Կորնթացիս). «Կրօնն քրիստոնէական՝ է անցուն Ի՛ մեզաց յարդարութիւն, Ի հին օրինաց Ի՛ նորն»։ Ահկրաութիւնն որ Ի՛ նմա՝ է տեսակ ինչ յայտութեան. շնորհքն, և պարգևք, և խոստմունք հանդերձելոց, հրամանքն, և ծանօթութիւնք բարեպաշտութեան, նորք և հրաշափառագոյնք քան զառաջինսն։ Այս նոր գոլով արարչութիւն Աստուածեղէն, որ զբ զնոյն ընդգրկեաց, եղև նոր կիրառած Աստուծոյ։ Տես զոր՝ թէ զինքդ Դարեկեան հրեշտակարքն փարպատեան մեր զոփարանէ զկրօնից մերոց զզօրութիւն յաստեն «Կրօնք բարձր և անխոնարհելիք» (Դար. հա)։ Այսն այս անխոնարհելի բարձրութիւն և անընկճելի զօրութիւն կրօնից մերոց ապացուցանէին Յաստուածխնամս բանս սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետի (Ի թուղթն որ առ Կոստանդիանոս թագաւորն)։ «Բանդի արդեամբք և փորձիւ ընձեռեցաւ, թէ քրիստոնէից կրօնն ամենասարեսպաշտիկ՝ ոչ հաւատութեամբ խնամութեան բանից, այլ յայտնութեամբ Հոգւոյն և զօրութեամբ նորին է հաստատեալ։ Ոչ Ի՛ մարդկանէ միայն է պատեալ, այլ և յերկնից Յաստուածատուստ է վկայեալ»։ Կրօնք եթէ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւնն է, ապա չունի զանազանութիւն և այլայլութիւն. «Մի՛ է Տէր, մի հաւատք և այլն» (Եփես. դ. 5)։ Այս միտս հակիրճ՝ բանիւ և խնամաբեր գրէ Սարգիս Շ՝նորհալի

վարդապետն մեր. «Ամենայն ուրեք ի գիրս սուրբս զհաւատն կրօնս անուանէ» (ի մեկն. Յակ. ճառ Ե. էջ 69. ըստ նոր տպ.) Արդ կրօնք եթէ քրիստոնէական հաւատոյ ճշմարտութիւն է, ապա բնաւ չընդունի և ոչ մի ինչ տարբերութիւն կամ զանազանութիւն, փոսն զի ճշմարիտ և սուրբ կրօնք մեր հաստատեալ և հիմնեալ են ի Յիսուսէ Քրիստոսէ. փոսն որոյ ճշմարտապէս ուսուցանեն մեզ բանք սուրբ գրոց, եթէ մեք հոգևորապէս մի մարմին եմք խորհրդական ի զանազան անդամոց պատշաճեալք ի մի գլուխն Քրիստոս (ա Կորն. ժ. 17: ժբ. 12), ըստ որում մեք ամենեքեան ուղղափառ հաւատոյ կրօնիւք և շնորհիւ միրութեան՝ ի Քրիստոս յօդեալ եմք յարմարապէս (Կողոս. ա. 18. բ. 19); Զա մանաւանդ անսխալ ուսուցիչ և հիղինակ ճշմարտութեան սուրբ կրօնից մերոց՝ է նոյն ինքն Յիսուս Քրիստոս. (Մատթ. իդ. 10. ա Կորն. դ. 11): Զհա այսու շնորհական օրինաց կրօնիւք, մեք քրիստոնեայքս՝ շնորհական որդիք Հօր Աստուծոյ խակապէս անուանիմք, և հոգւոց և մնաց մերոց ջերմեռանդն յուսով, և սրբոյ Հոգւոյն Աստուծոյ ներգործելովն ի սիրտս մեր զորդիական սիրոյ զվստահութիւն, համարձակիմք կարդալ միշտ զանուն Հօր Աստուծոյ, մեզ Հայր զթութեանց և ամենայն մխիթարութեանց, որով կոչիմք ժառանգաւորք փառաց երանութեան յերկնից աքբայութեան, և ժառանգակիցք Քրիստոսի: Զատ այսմ՝ Յիսուս Քրիստոս Փրկիչ մեր՝ փրկագործ մարդեղութեան շնորհիւն անուանեաց զմեզ եղբարս, հաղորդելով զմեզ իւրում իսկական և բնական որդիութեան, կենացն անմահութեան և երանութեան (Հռովմ. բ. 15—17: ա Կորնթ. բ. 6. ժբ. 13—14. 27: Գաղատ. դ. 29: Տիտ. գ. 7: Յակ. բ. 5): Զայս սուրբ և ճշմարիտ կրօնք մեր ուղղափառ հաւատոյ Քրիստոնէութեան՝ մի է շնորհիւ և զօրութեամբ միոյն միայնոյ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ որդւոյն Աստուծոյ. մի է ուղղափառ հաւատոյ ճշմարիտ դաւանութեամբ. մի է միատին հոգևորոգ ծնունդեանն սրբարար խորհրդոյ միրութեամբ. մի եմք մեք՝ իբրև միոյ հոգեւոր արգանդի ծնունդք. մի է կրօնք մեր, զի ընդունիմք և խոստովանիմք հաստատուն և ազնիւ հաւատով և անսկրկայ յուսով՝ մեզ միշտ պաշտպան և խնամարար հայրական զթութեամբն կամեցող բարեաց մերոց՝ զմի Աստուած Հայր: Եւ այսոսիկ աքանչելահրաշ միութիւնս շնորհական օրինաց Քրիստոնէական կրօնից

մերոց վկայէ սրբազան Առաքեալն Պօղոս «Ամենայն խոնարհութեամբ, և հեզութեամբ, և երկայնմտութեամբ, անսալ միմեանց սիրով. փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօգիւ խաղաղութեան. մի մարմին և մի հոգի, որպէս և կոչեցարուք 'ի մի յոյս կոչման ձերոյ: Մի է տէր, մի հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած և Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի, և ընդ ամենեսին, և յամենեսին 'ի մեզ» (Եփես. դ. 2—6): Եպա՝ այս սուրբ ճշմարիտ Քրիստոնէական կրօնք մեր է՝ որ քաջալերէ և խրախուսէ զմտաց մերոց զօրութիւն, և զհոգւոյ մեր կարողութիւն, յիշեցուցանելով մեզ զքաջայորդոր բան սրբազան Առաքելոյն Պօղոսի «Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք առ այս. եթէ Աստուած 'ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա, զիարդ ոչ նոսա հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ: Ո՞վ իցէ՝ որ մեղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է՝ որ արդարացուցանէ: Իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ յարուցեալ իսկ է, և է ընդ աջմէ Աստուծոյ, որ և բարեխօս իսկ է վասն մեր» (Հռովմ. ը. 31—34): Եւ սրբազան Առաքեալն Յակոբոս զայն զայս ճշմարտութիւն յայտնի կացուցանէ՝ յանդիմանելով զյանդուգն դատաստան այնոցիկ՝ որք զբարպատանն և բամբասեն զեղբարս իւրեանց՝ հակառակ Աստուածադիր օրէնսդ եղբայրսիրութեան. վասն որոյ բացայայտ գրէ. «Մի՛ բամբասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ զեղբայր իւր, կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն բամբասէ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատիցես՝ ոչ առնելի օրէնսդիր ես, այլ՝ դատաւոր: Մի է օրէնսդիր և դատաւոր, որ կարողն է փրկել և կորուսանել. դու ո՞ւր ես՝ որ դատես զընկերն» (Յակոբ. դ. 11—13):

Այս ամենայն խնամաս սուրբ գրոց և Աւետարանական վարդապետութիւնս սրբազան Առաքելոյ հայեցեալ մեր սրտի մտաց, և բաղդատեալ զայն ամենայն ընդ մտամոլար և ստդատելի բանից նոցին յանդգնն դատողութեան, որք հմարձակեալ են գրել եթէ «Ազգադատան կրօնք մեր՝ այսու տարբերի Յէժմիածնական Հայոց», յայտնի մտաբերեմք՝ եթէ յուսահատք ոմանք 'ի կենաց իւրեանց, 'ի զբօսանս դատարկակաց անձանց իւրեանց՝ կամեցեալ են ինքնակամ ստեղծարանութեամբ կազմել հնարել զանեկայուն նոր կրօնս ինչ. որպէս երբեմն 'ի ժամանակս Առաքելոյ 'ի վեր երե-

Հեցան այսպիսի նորակրօնք ոմանք՝ կեղծուպատիր բանիւ և գրոծով, նոր անուն տալով նորահնար կրօնից իւրեանց, և դ-ղեծ հրէ-ղ-է-ց զնորատեղծ վարդապետութիւնս իւրեանց հիստատակելով. որոց վարդապետութիւն էր՝ ի վերին երեսս և եթ ճանաչել զԵղբայր փրկութեան շնորհն Քրիստոսի Փրկչին մերոյ. որով ոչ սակաւ առիթ գայթակղութեան լինէին պարզամիտ ժողովրդոց եկեղեցւոյն Կողոսացւոց. վասն որոյ սրբազան Առաքեալն փութացոյց առ եկեղեցի նոցին զգրաւոր վարդապետութիւնս զգուշացուցանողս յայնպիսեաց մոլորեցուցչաց. «Մի ոք զձեզ խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակոց զոր չիցէ տեսեալ, զուարհատ վարել, տարապարս հպարտացեալ ի մտաց մարմնոյ իւրոյ, և ոչ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մարմին յօդիւք և խաղալեօք տարարերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ։ Եթէ մեռարուք ընդ Քրիստոսի ի տարերոց աշխարհիս, զի՞ ևս իբրև զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք... Որ յիմաստութիւն իմն համարէ, ինքնակամ կրօնիւք, և խոնարհութեամբ, և անխնայութեամբ մարմնոյ, և ոչ ի պատիւն լրութեան մարմնոյ» (Կող. բ. 18—23)։

ԲԱՆ Գ.

Զարմանալի շաղակրատանս բանից իւրեանց յայտ առնեն այսու անտարբեր գրուածով (ի Յօղ. Ա.) «Մեք խոստովանիմք զսուրբ ժողովն Քաղկեդոնի՝ համաձայն երից սրբազուսար նախկին ժողովոց, այսինքն՝ Նիկիոյ, Եփեսոսի, և Կոստանդնուպոլսոյ»։ Աստանօր արժան համարիմ յիշել զմեծ խմբատասէրն Աստուն Կոմիտն. որ յաղագս այսպիսեաց գրէ «Վասն այսորիկ իսկ են այն ծփանք ի բանս հաւատոյ, յանդգնական խնդրոց յոյգք, ընդվայրաքննին հետազօտութիւնք» (Տրամոր. պրակ. Դ.)։

Աստանօր սոքին նորակրօնք, նախ՝ սխալին զի ասեն «Մեք խոստովանիմք», փոխանակ ասելոյ «Դիտեմք և ճանաչեմք». վասն զի

հոգևոր կրօնք քրիստոնէութեան մեր ուսուցանէ մեզ՝ կրկին խոր-հրդոց ունել և առնել խոստովանութիւն, մի՝ խոստովանութեան մեղաց, և միւս՝ խոստովանութեան ուղղափառ հաւատոց։ «Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ՝ի ստէոյ ուղտոյ, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, և կերակուր նորա էր մարախ և մեղր վայրենի... զայրն և խոստովան լինէին զմեղս իւրեանց» (Մատ. գ. 4—6։ Մարկ. ա. 5)։ «Խոզուն ՝ի հաւատացեալսն զայրն և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց» (Գործ. ժԹ. 18)։ «Խոստովան եղերուք միմեանց զմեղս ձեր» (Յակ. Ե. 16)։ «Եպա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա և արդար առ ՝ի թողուլ մեզ զմեղս մեր» և այլն (ա Յովհ. ա. 9)։ Այս ամենայն վկայութիւնք՝ են վասն խոստովանութեան մեղաց՝ առաջի երիցանց՝ հոգևոր պաշտօնէից եկեղեցւոյ։ Լաստ սմին օրինակի են և խոստովանութիւնք հաւատոյ Արքիստոնէական ճշմարտութեան. «Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան, խոստովանեսցայց և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝ որ յերկինս է» (Մատ. ժ. 32)։ Օ՞այս հաւատաւն և այլ բազում բանք Ս. Գրոց. (տես Հռոմ. ժ. 9—10։ Յովհան. Թ. 22. ա Յովհ. բ. 23։ դ. 2. 3. 15։ բ Յովհ. 7։ և յայլ բազում տեղիս սուրբ Գրոց)։ Երկրորդ սխալանք նոցին յայտնի ապացուցանի՝ զի զրեն այսպէս. «Խոստովանիմք զսուրբ ժողովն Քաղկեդոնի՝ համաձայն երից սրբազուսար նախկին ժողովոց, այսինքն՝ Նիկիոյ, Եփեսոսի, Կոստանդնուպօլսոյ»։ Քանզի եթէ միաբ սոցա ուղղութեան էր, և չունէին ՝ի մտի խարդախ ինչ խորհել, և կամ յայս և յայն խաբէութիւնս ձեռնարկել և հնարել զնոր ինքնակամ կրօնս, զի՞նչ հարկ էր սոցա բաղդատել զժողովն Քաղկեդոնի՝ ընդ երից ժողովոցն, և նոցին համաձայն ցուցանել. վասն զի երից հոգեղուսար ժողովոց քննութիւնքն և գործք իւրաքանչիւրոցն՝ բոլորովիմբ զանազանք էին, և վասն տարօրինակ այլ և այլ հիրձուածոց և մոլորութեանց գուսարեցան այնոքիկ։ Վասն զի սուրբ ժողովն Նիկիոյ եղև յաղագս չարափառին Արիոսի, զորոյ զմոլորութիւնս ցուցանէ, քերթողահայրն մեր սուրբ Մովսէս Խորենացի գրելով այսպէս. «Ընդ այն ժամանակս երևեցաւ Արիոս Աղեքսանդրացի, որ ուսոյց չարաչար ամբարշտել, ոչ գոլ զՎերդի հաւասար Հօր, և ոչ ՝ի բնութենէ և յէութենէ Հօր, և ոչ Ծնեալ ՝ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, այլ օտար զոմն և

և արարած և կրաւեր, և յետ ժամանակի գոյացեալ. որ ըստ արժանեաց իւրոց ամբարիշտս այս Աբիրոս 'ի դարշելիսն ընկալաւ ըզստատակումն» ('ի Պատմ. գիրք Ա. Պրակ ՃԹ)։

Եւ 'ի տիեզերական սուրբ ժողովին Կոստանդնուպօլսոյ՝ դատապարտեցաւ մոլորութիւնն ամենաչարին Մակեդոնի, և նզովեցան ինքն և հետևողք իւր։ Զսորա չարագոյն մոլորութենէն ևս գրէ նախայիշեալ սուրբ վարդապետն մեր «Մինչև ՃՇմարտութեանն ստուգեցաւ հաւատ, որ յաղագս ամբարշտին Մակեդոնի հայհոյութեանցն. զի ոչ տէր խոստովանէր զՀոգին սուրբ, և ոչ երկրպագելի, և ոչ փառաւորելի ընդ Հօր և ընդ Որդւոյ, այլ օտար Աստուծոյ բնութենէն, և ստացական և ծառայ և պաշտօնեայ, ազգումն ինչ, և ոչ էութիւն անձնաւոր։ Եւ ժողովեալ սուրբ Հարքն 'ի թագաւորեալ քաղաքն Կիւզանդիոն... միաձայնութեամբ հարիւր և յիսուն հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն և զամենայն հոգեմարտսն» ('ի Պատմ. գիրքը Գ. Պրակ ԺԷ)։

Իսկ ՅԵփեսոսի 'ի տիեզերական ժողովին դատապարտեցաւ Հաբաշար աղանդապետն Նեստոր, զորոյ ամբարշտադոյն մոլորութենէն գրէ գաղեալ նոյն Վերթողահայրն մեր «Ընդ այն ժամանակս եկաց ՅԱթոռ եպիսկոպոսութեան Կիւզանդացւոց անարժանաբար յաջորդեալ ամբարիշտն Նեստոր, և Հրէական խնամանց հետևեալ, հայհոյեաց զամենասուրբ կոյսն մարդածին լինել՝ և ոչ Աստուածածին։ Վասանցի ծնեալն 'ի նմանէ առեալ սկիզբն, այլ որդի տէր շնորհք 'ի Մարիամայ, և այլ որդի 'ի Հօրէ յաւաջ քան զյաւիտեանս, որպէս զի լինիցէ երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի։ Զայսն որոյ ժողովեալ սրբոյ Հարցն ՅԱսիա 'ի ծովայեալացն Եփեսոս գրաւորական վիրծանութեամբ... Համանդամայն երկերիւր Հարք, նզովեալ զՆեստոր՝ խոստովանեցին մի որդի Աստուծոյ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և Աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ» ('ի Պատմ. գիրքը Գ. պրակ կա)։

Իսկ 'ի ժողովին Վաղկեդոնի նզովեցաւ իրաւամբք ժանտախտուրդն Եւտիքէս. որ քարոզէր և չարաչար մոլորութեամբ բարբանջէր թէ՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս չէ մեզ բնութենակից ըստ մարմնոյ, այլ մարմին նորա յերկնից է. և թէ յաւաջ քան զմիաւորութիւն երկու բնութիւնք եղեն 'ի Քրիստոս, այլ յետ միաւորութեան՝ մի միայն, ըստ գրութեան Հիերատոս տարկաւագի ('ի բանս քաղուածոց. ժա)։ Եւ Թէոդորետոս եպիսկոպոս Կիւ-

բիոյ գրէ այսպէս «Բայ արդ զնեալին դառնագոյն ևս քան զնեալն՝ զաղանդ Նեստիքեանց եղիտ սատանայ, որով զամենայն եկեղեցիս հանրէն տիեզերաց 'ի սուգ և 'ի տրտմութիւն հասոյց, դարան գտեալ իւրոյ անօրէնութեան զԹշնամատակսն այրն զՆեստիքէս, զԿաղենտիոսի ազատեն՝ որ 'ի բազում ժամանակաց խափանեալ էր, առ սովաւ դարձեալ նորոգեաց» (Յաղագս առաս. գիրք. Գ. հատոր վերջ)։

Եւ ապաքէն սուրբ Հայրք մեր զՆեստիքեայ մոլորութիւնն ըստ ամենայնի հերքին և մերժեն, որպէս սուրբն Գերասէս Հնորհալի Հայրապետն մեր յոտանաւոր բանն՝ որ զմարդեղութենէ Որդւոյն Աստուծոյ.

«Բանն անմարմին ըստ էութեան՝
Երդև մարմին ճշմարտութեամբ.
Օ՛իրն պահեալ անկեղապէս,
Եւ զիմն առեալ ստուգապէս։
Զոր այս խառնումն սքանչելի,
Աստուած և մարդ ընութեամբ խառնի.
Եւ էութիւնքն փոփոխի,
Եւ ո՛չ ձևով կերպարանի.
Որպէս ասաց Ժանան Նեստիքէս,
Թէ ո՛չ մարմին առ խակապէս.
Բայ առ աչք անց ընդ կուսին՝
Լուսոմակի նմանապէս»։

Եւ ապաքէն կրկնակի սխալին նոքա գրելով այսպէս «Մեք խոստովանիմք զսուրբ Ժողովն Քաղկեդոնի՝ հանդէպ այնց երից սրբազուսար նախկին Ժողովոց, այսինքն՝ Նիկիոյ, Եփեսոսի, և Կոստանդնուպոլսոյ»։ Զսխ՝ սխալեալ են այսու բանիւ, եթէ «հանդէպ երից Ժողովոց». վասն զի 'ի չորեսին Ժողովս յայսոսիկ՝ չորից Ժամանս հերձուածոցդ չարաչար այլ և այլ մոլորութեանց դատապարտեցան բանք, որպէս 'ի վերոյ ապացուցաք։ Եւ ապա Հայրք սուրբք գումարեալք 'ի Նոստ՝ ըստ նեղշնչութեան Հոգւոյն սրբոյ՝ զմոլորութեանց նոցին հերքեցին զչար հերձուածս, և զիւրաքանչիւրսն յանդիմանեցին ուղղափառս դաւանութեամբ. որով ընկալան իւրաքանչիւր 'ի հերձուածոցդ զԿոգևոր պատիժս նզովից և բանադրանաց, և իբրև անպիտան անդամք սուրբ Եկեղեցւոյն Քրիստոսի՝ հատեալ և մերժեալ եղեն անտի իրաւամբք դատապարտեալ։ Եւ ապա նախնի Հայրց սրբոց Ժողովք, եթէ տիեզերական և

եթէ զառաւական, միշտ համաձայն զասն Յիսուսի Փրկչին մերոյ անժխտելի աւետարանական բանից, որպէս հրամայեալ է «Եթէ մեղեցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու և նա միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայրն քո. ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի եւ՝ կամ երկուս, զի ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան: Իսկ եթէ և նոցա ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ. ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զՏիեզատան և զմաքսաւոր... Վասն զի ասեմ ձեզ՝ եթէ երկու ի ձէնջ միաբանեսցին յերկրի վասն ամենայն իրաց, զոր եւ խնդրեսցեն՝ եղիցի նոցա ի Հօրէ իմմէ՝ որ յերկինս է. զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա» (Մատ. ժբ. 15—20):

Եւ զկնի ինքնազօր և աբանչելաշնաշ յարութեան, ըստ ամենայնի հաստատեաց զանժխտելի բանից իւրոց զզօրութիւն ի ժողովս սրբազան Առաքելոցն հեռաշարաշն յայտնի երևմանէն: «Եւ էր երեկոյ ի միաշաբաթուոջ աւուրն. և դրօքն փակերով՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից, եկն Յիսուս և եկաց ի միջի նոցա, և ասէ ցնոսա. ողջոյն ընդ ձեզ: Իբրև զայս ասաց, ետոյց նոցա զձեռս և զկողն իւր. և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր: Իսկ ցնոսա դարձեալ. ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրև ասաց, փչեաց ի նոսա՝ և ասէ. առէք Հոգի սուրբ. եթէ ումեք թողուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի» (Յովհան. ի. 19—23): Այս ամենայն հոգեգումար սուրբ ժողովք համաձայն զասանին հրամանաց և պատուիրանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Իսկ երրորդ սխալանք նոցին այս է՝ զոր գրեն «Համաձայն երից սրբազանացն նախկին ժողովոց, այսինքն՝ Նիկիոյ, Էփեսոսի, և Կոստանդնուպոլսոյ. «Բաստիսք զի՞նչ ասասցուք, սխալումն հաստատեսցուք զայս՝ զիանական մտաց նոցին, թէ զոհսանք անծանոթ գոյոյ նոցա գրականութեան լեզուի մերում, զի գրեն «Ն-Ի-ԿԻ Հ-Ա-Ն-Է» յաղագս Նիկիոյ, Էփեսոսի, և Կոստանդնուպոլսոյ. վասն զի ըստ յատկութեան լեզուի մերոյ՝ Ն-Ի-ԿԻ բառն նշանակէ զառաջինն կամ զկրնաւորն: Ն-Ի-ԿԻ և Հ-Ա-Ն-Է կոչի սուրբ Ստեփաննոս. ըստ այնմ՝ «Ստեփանոսի՝ առաջնորդ և Հ-Ա-Ն-Է մարտիրոս, որ ի Քրիստոսէ պսակեցար» (Շ. սարակ.): Այսպէս սրբազան Առա-

քեալքն Քրիստոսի Թադէոս և Բարդուղիմէոս՝ ---էԲ և ԺԲԲ Լուսաւորիչք ազգիս Հայոց անուանին: Եհա սոցին նման ԺԲԲ և ---էԲ հոգեկան մարդ ժողովք անուանին ի սուրբ գիրս և յեկեղեցական Պատմութիւնս՝ սրբազան Առաքելոյն ժողովք, որպէս գրի ի Գործս Առաքելոց: Զի առաջին ժողովն եղև փառն կարգելոց ի տեղի Յուդայի մատնչի զմի որ յիրկոցունց ընտրելոց. որպէս գրի «Եւ կացուցին երկուս, զՅոսէփ՝ որում Բարսաբայն կոչէին, որ անուանուեցաւն Յուստոս, և զՄատաթիա: Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ Տէր՝ որտագէտ ամենայնի, յայտնեա զմի որ զոր ընտրեցեր ի սոցանէ յիրկոցունց, առնուլ զվիճակ պաշտաման այսորիկ՝ և զառաքելութեան, յորմէ անկեալ Յուդաս՝ գնալ ի տեղի իւր: Եւ եռան վիճակս նոցա, և եմուտք վիճակն Մատաթիայ, և համարեցաւ ընդ միառասան Առաքեալսն» (Գործ. ա. 23—26): Եւ սա միայնոյն զումարեցան յԵրուսաղէմ Արբաւան Առաքեալք առ ի բառնալ զարտաքնջ Յունաց՝ ընտրելով զեօթն սարկաւագունս, որպէս գրի ի Գործս Առաքելոց (գ. 1—7): Դոյնպէս և ժողով Առաքելոց եղև յԵրուսաղէմ յաղագս օրինական խնդրոց. զի Հրէայք հաւատացեալք ի դատուց Փարիսեցւոցն, սկսան ասելով և ասել. Թէպէտ բարձք է ընդունել զՀեթանոս ի Քրիստոնէութիւն, բայց հարկ է նոցա կանխաւ ընդունել զՀրէութիւն, այսինքն՝ թլիատիլ և պահել զնարտականն Մովսիսական օրինաց. որպէս գրի ի Գործս Առաքելոց (ժե. 1—34): Եհա այսոքիկ են ԺԲԲ ժողովք: Եւ ապա հետ զհետէ եկեղեցին Քրիստոսի ընդ ժամանակս ժամանակս՝ ըստ դիպուածոց վերելեալոց կարծեաց հերձուածողութեանց և մոլորութեանց և զանազան խորհրդոց և պատահեալ վիճից եկեղեցականաց՝ զօրինաւորն զումարէր ժողով, եթէ՝ վիճակական, զոր զումարէր Եպիսկոպոսն նոյն վիճակի, և եթէ՝ դաւառական, ուր լինէր ժողով եպիսկոպոսաց այնր դաւառի: Ազգային մանաւոր ժողով լինի յայնժամ, յորժամ բոլոր երևելի հոգևորականք և զիտնական անձինք միոյ ամբողջ ազգի՝ զումարին հրամանաւ նոյն ազգի ընդհանրական Հայրապետին, այսինքն՝ Կաթուղիկոսին: Տիեզերական կոչի ժողովն, ուր ամենայն ազգաց եկեղեցեաց եպիսկոպոսք, վանահայք և քահանայք, հրաւիրին առ միաբանութեամբ խօսել և զկարևորն վճռել՝ անսխալ ուսուցչի և խորհրդատու ունելով ինքեանց զՀոգին սուրբ ճշմարտութեան, ըստ միայնեան

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. «Եղիտ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ Եւ ես աղաչեցից զԱյր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի լիցի ձեզ բնակեսցէ ի յաւիտեան» (Յովհ. ԺԴ. 15). և թէ «Մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցէ ձեզ զամենայն որ ինչ ասացի ձեզ, և յիշեցուսցէ ձեզ» (անդ. 28)։

Զոր՝ բարեմիտ ընթերցող, ի միտ առեր զսխալական գրութեանց նոցին զզրաբանութիւնս. եթէ սոքա սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի բազմերախտ Հայրապետի հարազատ որդիք էին, որպիսի են հաւատարիմ անմոլար որդիքն Մխիթարեանցս Եղուարդն Պաղտղիկ Աստուածաբան սուրբ եկեղեցւոյ, մերժելով զմոլորական վարդապետութիւնս և զամենայն մնացածին զզրաբանութիւնս՝ հետևէին տապաքէն սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի լուսաշաւիղ վարդապետութեանն, որով խրատէ և ուսուցանէ նա հեռանալ և խորշել յամենայն հոգեկորոյս դատարկաբանութենէ, և ի մոլորական վարդապետութենց «Դատարեսցուք ասէ, ի դատարկ և ի վայրապար քննութենէ, և զհետ երթիցուք զկարգաւոր զլոյս սրբոյ՝ հեղոյն և նորոյս. զի Նա՛ս եմ, ասէ Աստուած, և չէք այլ որ՝ որ պատուէ զերբուտս. զի նոքա կեամք և շարժիմք և եմք. նմա՛ լուիցուք՝ որ փրկէ զմեզ յամենայն վտանգից և փոխէ յաքայութիւն երկնից...։ Եւ պիտոյ է միշտ դաստիարակութիւն Աւետարանին ի հրահանգել զմեզ ի լուութեան կարգս, զի յանձնանձեալք ի շնորհայ սուրբ Հոգւոյն, ճշմարտութեամբ ամենայնոյսք զվաստակս արդարութեան սուրբ պտուղս և ուղղափառ հաւատով յԱստուած։ Եւ ի տեսչութենէ նախախնամական սիրոյ Աստուծոյ արթունք և զգաւթունք եղիցուք ի պատարանաց բանաստիրութիւն միշտ« (Յաճնսի. ճնտ. ի)։

Եթէ սոյն այս զզրաբանութեան զլոյզ՝ հարազատ որդիք էին Լուսաւորչի սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի, որոյ անուամբն միայն պանծան, արժան էր նոցա հետևիլ նորին լուսաշաւիղ ողջամիտ և ուղղափառ վարդապետութեան. և ես եթէ ճանաչէին զնա Լախահայրապետ Աստուածաբան Պահանայապետ աղգիս Հայոց, պարտ էր նոցա հաստատուն և անկեղծ սիրով զՀղորդութիւն և զՀարազատութիւն իւրեանց առ Այր սուրբ Եղուարդն Աստուածաբանի և առ օրինաւոր ընտրեալ Արբաան յաջորդս նորին Աստուածաբան մեծ Պահանայապետութեան՝ ցուցանել, որպէս ցուցանեն հարազատ

և անմոլար որդիք սրբոյ Մայր Աթոռոյն՝ խրատեալ 'ի բանից և բանելի Առաքելոյն Պօղոսի (Եբր. ԺԳ. 17։ Տիտ. Գ. 8—11). զոր ես մեզ իսկ ընթեռնուլ և 'ի միտ առնուլ պարտ և արժան է, և ապա պարծել Քրիստոնէական կրօնիւք։ Եհա հարազատ որդիք սրբոյ Լուսաւորչի Հօրն մերոյ, և աշակերտակք նորին սրբազան Հաջորդացն, ըստ նոցին ունին տալ պատասխանի՝ եթէ բանք ինչ լեցին յաղագս Վաղկեդոնի ժողովոյն։ Ցեռ՝ զնոյդ գեղեցիկս զրէ սուրբն Գրիգոր Երանելի Կաթուղիկոսն 'ի պատասխանի խնդրոյ արքային Հոռոմոց Մանուէլի՝ ձայնակցութեամբ և ձեռագրութեամբ երջանիկ եպիսկոպոսաց Առաքելական սուրբ եկեղեցւոյս Հայոց, յորում յիւր ցուցանելոյ զերից Տիեզերական սուրբ ժողովոց զուղղափառ ձայնակցութիւնս՝ հետևեցուցանէ այսպէս. «Գանոնին և այլ ժողովոց կանոնագրութիւնք 'ի մէջ մեր և ընդունելի են՝ որք զանազան կարգս եկեղեցւոյ հաստատեցին և զպէտսպէս հերձուածս հերքեցին, որպէս և Ընկիւրեայ ժողովն՝ 'ի հերքումն Լիկիանոսին ամբարշտութեան, որ 'ի զոհս կռոցն բռնադատէր զերիցունսն։ Կեսարեայն ընդդէմ յուսթից կանանց, և Նէոկեսարեայն՝ ընդդէմ անխտիր պտղակութեան, և Գանգրայն՝ ընդդէմ Օստացւոց հերձուածոյն, և Լաւոդիկեայն՝ ընդդէմ չորեքտասանեներորդացն, և Սարդիկեայն՝ 'ի պէտս եկեղեցական կարգաց։ Այս ուղղափառ ժողովոցս և որք սոցին հանդոյն՝ ուսաք զհաւատոյ դաւանութիւն, և 'ի նոցին կանոնագրութենէ՝ զգործոց պարկեշտութիւն և զմեղայ խարութիւն և զեկեղեցական կարգաց վայելչութիւն. որոց և առաջնորդութեանն հայրենի դաստիարակութեամբք՝ ուղեկից լինիմք, զգուշացեալք առ 'ի յոչ խոտորել յաջ և ոչ յահեակ յարքունական պողոտայէն՝ զոր ցուցին մեզ։ Վասն այսորիկ և համարձակութեամբ նզովիմք զառ 'ի նոցանէ նզովեալ հերձուածողսն. զԱրիոս՝ որ ոչ ասաց զԱրդի 'ի բնութենէ Հօր. զՄակեդոն՝ զի հայհոյեաց զՀոգին սուրբ. զՊօղոս Շամշատացին, և զԵստոր՝ նորին հերձուածոյն նորագիւղ, որք մարդ դուզնաքեայ ասացին զԱստուածն մեր՝ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, յարակցութեամբ և հաճութեամբ շարայարեալ զԱստուած, և ոչ անճառ և աքանչելի միաւորութեամբ։ Նզովիմք և զամբարիշտն Նեստորիոս, որ զմիութիւնն Աստուածութեան և մարմնոյն՝ չփոթմամբ դաւանէր, և ոչ յատկութեամբ 'ի հայեցողութիւն բնութեանցն։ Ընդունիմք իսկ և երդակ ցիմք սուրբ և Աստուածա-

զգեաց Հարցն, զոր այսոցիկ հիրաւուածոցս մատուռ չափ ճգնեալ հսկաւակ կացին, և զուղղափառ հաւատ Աստուածաշունչ վարդապետութեամբն իւրեանց գրով եռուն մեզ. զոր առեալ ընկալաք, և միշտ ընթերցմամբ ի նոցին աշակերտութիւն փութամբ գտանիլ անմոլար (ՅՈՒՀան. երես 114): Յիշեսցուք ասասնոր զնամանն երանելի Կաթուղիկոսին մերոյ Օ՚աքարիայի առաջնոյ, զոր գրեաց նա առ փոտ անուն Յունաց Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ, որ էր կարի փառասէր: Կա առաւել նեղէր զազգս մեր՝ զոր կային յիշխանութեան Յունաց, առ ի հաճելի կացուցանել զանձն իւր առաջի Ջատագովչաց Ժողովոյն Քաղկեդոնի. վասն որոյ զազգն մեր անուանէր նախատական բանիւ Ծոռնչ-Լիեռ. առ որ գրեաց թուղթ նախայիշեալ Կաթողիկոսն մեր, և յետ բազում բանից ասէ «Չեմք մեք (Հայք) աշակերտք Յակովբայ Ծանծալոսի, յորմէ Յակովբիկքն անուանին, և ոչ Յուլիանեայ Հալիկառնացւոյ. և ոչ Պեարոսի (Թատիշի կամ Անտիոչցւոյ), և ոչ Եւտիքեա, այլ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի», և այլն, որպէս գրեն արժանահաւատ պատմիչք՝ Վարդան և Կիրակոս:

Ասպաքէն, բարեմիտ ընթերցող, ի միտ առեր զսխալանսն անհիմեմի գրութեան նոցին. մատիցուք ապա ի միւս երկրիմի բանիցն ի գնութիւն:

ԲԱՆ Դ.

Ասասնոր անմատաբար հանդիպակեալ են կեղծուպատիր բանիւ ծածկել գայթակղի ճշմարտութիւնն հաւատոց՝ երկրիմի յօգելով բանս՝ իբրև յոմ երկայրաբանութեան. զի գրեն (ի Յոգ. Ա) այսպէս «Հաւատամք զոր ի Քրիստոս երկուս կատարեալ բնութիւնս, այս է՝ Աստուածային և մարդկային, ըստ ուղիղ գաւանութեան մեր սրբոյն Դիոսկորոսի՝ նորհալոյն՝ որ ասէ. «Մերով բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոստովանի»:

Տեսանէք, բարեմիտ ուղղափառ ընթերցողք, զեարդ յանդգնին սոքա յարմարել ըստ մտաց իւրեանց զբանն ողջամիտ վարդապետութեան սրբոյն Դիոնիսիոսի շնորհալի Հայրապետին մերոյ. և այն՝ զամբողջ տան միոյ զապարեւութիւնն ի բաց առեալ՝ զմի մասն միայն զրեն՝ իբրև վկայութիւն խարէպատիր դաւանութեան իւրեանց. քան զի նոյն Հ. Նորհալւոյն ամբողջ բանն է այս «Զարդոյն ի սքանչելեաց Աստուած մարմնով վասն իմ խաչեալ, մերով բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոստովանիմ. կրկնավաստակ կոգին ազիրիրք եկեղեցի իւր հաստատի. Ջրոմն մարդի, զարիւնն ըմպէ, զԱրդի ընդ Հօր փառաւորէ»։ Հրաշալի բանիւք ողջամիտ վարդապետութեան շնորհալի սուրբ Հայրապետն մեր՝ ոչ թէ կամէր հաստատել զորոշ ճանաչումն երկուց բնութեանց ի Քրիստոս, այլ մանաւանդ մերժել և հերքել փութայր զաղանդսն պղծոյն Դիոսորի և ժանտին Եւտիքեայ. վասն զի մոլորեալն Դիոսոր ցնդաբանէր զՔրիստոսէ. այլ որդի ասելով շնորհօք ի Մարիամայ, և այլ որդի ի Հօրէ յառաջ. որպէս զի լինել երկուս որդիս, որով երրորդութիւնն լինէր չորրորդութիւն, և զսուրբ Կոյսն Աստուածածին՝ անուանէր Հրեշտէն. վասն որոյ սուրբ Հայրապետաբար ի սուրբ ժողովն Եփեսոսի հերքեցին նզովիւք զպիղծն Դիոսոր և զաղանդն նորին զիւական, խոստովանելով զՏէր մեր Յիսուս Քրիստոս՝ մի որդի Աստուծոյ, և Ս-ուրբ-ն-ին՝ զամենասուրբ Կոյսն Մարիամ։ (Տես առ Խորենաց. զիրք Գ. գլ. կա)։ Եւ սուրբն Դիոնիսիոս շնորհալի Հայրապետն մեր զրէ ի թուղթն՝ որ առ քահանայս Յամայք նահանգին. «Դիոսոր և համախոհք իւր՝ յերկուս որդիս և յերկուս բնութիւնս բաժանեցին զմի Քրիստոսն, և տաճայր բանին Աստուծոյ ասացին զմարմին՝ որպէս զմի ի հոգեկիր արանց. և զնոյն քակեալ չարչարանօքն և մահուամբ, և ոչ Աստուծոյ ասացեալ խաչ և մահ՝ որով փրկութիւն, այլ՝ լոկ մարդոյ»։ Գրէ դարձեալ նոյն սուրբ Հայրապետն մեր «Յամենի լեցի Դիոսորիոս և նմանք նորին, որք միանգամ մարդածին ասացին զՄարիամ, և ոչ Աստուածածին» (ի մեկն. Բարձ)։ Եւ դարձեալ (ի թղ. Յամ.)». «Եւտիքէս ընդդէմ նոցին (այսինքն՝ Դիոսորի) մի բնութիւն ասաց՝ ոչ միաւորութեամբ, այլ՝ շփոթմամբ և այլայլութեամբ, այսինքն թէ՝ Բանն Աստուած ձև և նմանութիւն միայն էառ ի սրբոյ կուսէն, և ոչ ճշմարտապէս մարդ եղև»։ Գրէ և ի բանս հաւատոյ չափաբերական բանիւք այսպէս.

Ոմանք անմարմին՝ ըստ էութեան՝
Եղև մարմին՝ ճշմարտութեամբ,
Օ՛իրն պահեալ անկեղապէս,
Եւ զիմն առեալ ստուգապէս։
Զոր պս խառնումն սքանչելի,
Աստուած և մարդ բնութեամբ խառնի,
Մ՛ի էութիւնն փոփոխի,
Եւ ոչ ձևով կերպարանի,
Որպէս ասաց Ժանան Եւտիքէս,
Թէ ոչ մարմին առ իսկապէս.
Այլ առ աչօք անց ընդ կուսին՝
Խողողակի նմանապէս»։

Այս շփոթիչ մտաց և խարդախ դիտաւորութեան էր այն՝ զոր գրեալ էին եթէ «Աստուածք զոլ ՝ի Քրիստոս երկուս բնութիւնս, այսինքն՝ Աստուածային և մարդկային»։ Եհա Նեստորական մոլորութեան համեմատ դրութիւն բանից, ըստ որում միայն ասէ զոլ ՝ի Քրիստոս երկուս բնութիւնս, և ոչ յարդարէ զայն՝ բացայայտիչ ճշմարտութեամբ ուղղափառ դաւանութեան բանից, անշփոթ և անբաժանելի միաւորութիւն։ Ուրեմն երկբայական և կասկածելի էր յառաջ բերեալն ՝ի նոցունց. որք առ ՝ի ծածկել զխարդախութիւնս իւրեանց՝ զան Հ՝նոր Հալէոն պատրուակ բանից իւրեանց առեալ՝ կամին զպարզամիտս ՝ի մարդկանէ ածել ՝ի հաւանութիւն։ Արդ՝ եթէ դիտաւորութիւն դաւանութեան իւրեանց էր ողջամիտ՝ ըստ Աւետարանական և Առաքելական ճշմարտութեան, ըստ ուղղափառ վարդապետութեանց Նախնի Աստուածարեալ Հայոց սրբոց, ապաքէն յայտնի հետևէին սրբոյն Նիստիսի Հ՝նոր Հալի Հայրապետին մերոյ, որ բարեպաշտական հոգւով պարզագոյս խոստովանի այսպէս. «Այլ մեք հաւատամք այսպէս, եթէ Աստուածն Բան՝ որ ՝ի հօրէ ծնեալ յառաջ քան զամենայն յաւիտեանս, անտեսանելին և անչարչարելին և անմահն՝ էաւ զմեր բնութիւնս կատարելապէս ՝ի կուսէն և միացոյց ընդ իւր Աստուածային բնութեան. անտեսանելին ըստ Աստուածութեանն՝ (եղև) տեսանելի ըստ մարդկային բնութեանս, և անշոշափելին՝ շոշափելի, և անչարչարելին և անմահն ըստ Աստուածային բնութեանն՝ չարչարեալ և մեռեալ մերով բնութեամբս, ոչ բաժանմամբ՝ որպէս թէ ոմն չարչարելի, և ոմն անչարչարելի, ոմն ան-

մահ, և ոմն մեռեալ. այլ որ չարչարեալ և մեռեալ՝ մարդկային առեալ բնութեամբ, նոյն չարչարելի և անմահ Աստուածային իւրով բնութեամբ։ Վասն այսորիկ և արիւն Աստուծոյ ասի և չարչարանք և մահ, և Աստուած խաչեալ. զորս ոչ առանձինն բնութեանն Աստուծոյ ասեմք, այլ՝ անձնաւորութեան», (՝ի թղթ. առ Անուէլ կայսր)։ Եւ եթէ զբարանողքն այնոքիկ Լուսաւորչեանք էին, և ոչ մոլորամիտք, պարտ և արժան էր նոցա հետևիլ զոնէ ուղղափառ վարդապետութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի. որ գրէ «Զանգի միացաւ ՝ի մարմնի բնութեամբ. և խառնեաց զմարմինն ընդ իւր Աստուածութեան։ Զոր հաւատացին ՝ի նա՝ վայելեցին յանպատում բարիսն, և զոր յայսոց հաւատոց վրիպեցան՝ զանկոխ և զանխուլ գնացին, և զարտուղի անկան, և խրամատեցին անձանց իւրանց ցանկս անկարկատս, և զբաղումս ՝ի հաւատոցն ճշմարտութենէ թիւրեցին... Միայն զայս ճշմարիտ հաւատս ունիմք ՝ի սուրբ գրոց և յօրինեալ Եկեղեցւոյ՝ առաջնորդ կենաց ճանապարհի առ Աստուած, և ՝ի սուրբ գիրս վարդապետութեան հաւատոյդ։ Եւ մի խոտորիք ՝ի կարգաց իմաստութեան, մի յաջ և մի յահեակ (Աբգարանգ. տպեալ ՝ի Պոլիս երես 160—164)։ Սոցին նման գրէ (՝ի թղթէն որ առ Սկիւնդոս) սուրբն Սիւրեզ եպիսկոպոսապետն Աղիքսանդրիոյ «Զձայնս՝ որք յԱռաքելական և յԱռաքելական քարոզութիւնն յաղագս Քրիստոսի են՝ ՝ի բաց ոչոչէ, և ասէ, թէ են ինչ՝ զորս պարտ է պատշաճել մարդոյն, այսինքն՝ զմարդկայինսն, և են՝ զորս վայել է միայնոյ Բանին, յայտ է՝ զի զԱստուածավայելուչսն, և վասն զի՝ ՝ի բաց զատանել ըստ բազում իրի, և ըստ մասին դնել որպէս մարդ առանձնապէս, զոր ՝ի սրբոյ կուսէն ծնեալ, և սոյնպէս առանձնապէս և ըստ մասին՝ որդի, զոր յԱստուծոյ Հօրէ Բանն, իսկ զսուրբ կոյսն ոչ Աստուածածին լինել ասէն, այլ՝ մարդածին յաւէտ։ Իսկ մեք ոչ այսպէս գոլ զայս ունիմք, այլ՝ այսպէս ուսաք ՝ի սրբոց Հայրց. Մի Քրիստոս և Որդի և Տէր խոստովանել, այսինքն զոր յԱստուծոյ Հօրէ Բանն ծնեալ ՝ի նմանէ նախ քան զդար իսկանս Աստուածավայելչապէս և անձնաւորաբար, իսկ՝ ՝ի յետին ժամանակս յաւիտենից զնոյն ինքն վասն մեր ծնեալ ըստ մարմնոյ ՝ի սրբոյ կուսէն, վասն զի Աստուած գոլով մարմնացեալ և մարդացեալ՝ ծնաւ. վասն այսորիկ և Աստուածածին անուանեմք զծնողն նորա»։ Գրէ և սուրբն Աթանաս (՝ի ճառին մար-

դեղութեամբ Քրիստոսի) «Խոստովանիմ զնա որդի Աստուծոյ և Աստուծ ըստ հոգւոյ, և որդի մարդոյ ըստ մարմնոյ, ոչ երկուս բնութիւնս՝ զմի որդին, մինն երկրպագելի, և միւսն աներկրպագելի, այլ՝ մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ»։ Նոյն ի գովեստ Աստուածածնոյ Կուսին. «Ո՛վ է տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս՝ միով բնութեամբ եղեալ ի Կուսէն... ոչ ուրանամ զբնութիւնն, և ոչ բաժանեմ զմիաւորութիւն։ Դէս և Յովհան Ոսկիբերան (ի մեկն. թղթ. Պօղոսի առ Փիլիպ.) «Ո՛վ շփոթեսցուք, և մի անջրպետ ի մէջ արկցուք. վասն զի միութիւն խոստովանիմ, և ոչ քայքայութիւն ինչ կամ լուծումն այս բնութեան յայն, կամ այնր՝ յայս, այլ միացեալ ասեմ և մի լեալ»։ Նոյնպէս և Յովհան Իմաստասէր (ի Ճառն ընդդէմ Երեւութականաց) գրէ այսպէս «Ոչ եթէ զերկուցն ասելով՝ հրաժարելին ասել զմին, և կամ զսորին հակառակն՝ զմին խոստովանելով՝ յամառելին յերկուցն գալ խոստովանութիւն՝ այլ՝ համարձակաբար երկոքումբքն այսոքիւք բարեփառութեան զանգարոք փայլեալք պայծառանային, երկուս՝ ըստ բնութեան, և մի՝ ըստ միաւորութեան զՔրիստոս քարոզելով»։ Դէս և հրեշտակակրօն սուրբ վարդապետն մեր Գրիգոր Նարեկացի գրէ ի բանս, որ առ սուրբ Երրորդութիւն այսօրինակ բանիւ. «Ո՛վ որդի Հօրն միայնոյ, և միածին անպրանիկ՝ Աստուածամայր սիրածին Կուսին, արարիչն՝ յեղանակումն մարդ եղով ճշմարիտ ըստ կղզնածին. ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ, որ ոչ ցուցար ի դարս, և ոչ դոյացար ի ժամանակս, անպրանիկ՝ ըստ սաղմոսողին, քան զամենայն թագաւորս երկրի. անապական խառնութեամբ՝ կերպացեալ զմերս ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայսմանպէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ. ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ» (ի Նար. գլ. ին)։

Ահա այս ամենայն միտոյդրեալ ողջամիտ և ուղղափառ դաւանութիւն հաւատոյ Նախնի Աստուածաբանաց՝ Հայոց սրբոց Ճիշդ համեմատի Աւետարանական և Առաքելական յայտնի ճշմարտութեան բանից «Դէ բանն մարմին եղև և բնակեցաւ ի մեզ, և տեսաք զփառս նորա, զփառս իբրև զՄիածնի առ ի Հօրէ լի շնորհօք և ճշմարտութեամբ (Յով. ա. 14)։ Որ էրն ի սկզբանէ, զոր մեք լուաքն, զոր տեսանեմ իսկ եղաք, ընդ որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց, և կեանքն յայտնե-

ցան. և տեսաք, և վկայեմք, և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էին առ Հօր՝ և երևեցաւ մեզ» (Յով. ա. կտիզ. ա. 1. 2):

Զայն խորհեսցի իւրաքանչիւր զի ի ձէնջ, որ և ի Քրիստոս Յիսուս. որ ի կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս ծառայի առեալ, ի նմանութիւն մարդկան եղեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի (Փիլիպ. բ. 5—8): Վասնզի ոչ եթէ պատուիրեալ ինչ առաքելոցս զհետ երթեալ ցուցաք ձեզ զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն և զգալուստն, այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն (բ. Պետրոս. ա. 16):

Ահա ուղղափառ դաւանութիւն հաւատոյ ճշմարտութեան անմոլար հարազատ որդւոց Հայաստանեայց Առաքելական Կաթուղիկէ սուրբ Եկեղեցւոյ, որ յայտնեցաւ աստուածք և հաստատեցաւ վկայութեամբք նախնի Աստուածարեալ սուրբ Հարց: Որ ուրեմն թող պատկառեալ համբակացին զրաքանչդէն, և մի կամակոր մտաք յամառեալ՝ անզեղջ մնացին: Այլ մեք փութացուք գնացին գնորեալ մտաց զայլոց ևս ընդունայն գաղափարացն տալ ըզցրումն:

ԲԱՆ Զ.

Ահա աստուածք մտախաբ զրախօսութիւն նոցին ունի յայտնի լինել ամենից ընթերցասիրաց այնու՝ զի զսրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի զանուն ածելի՝ իբրև զգիմակ ձգելով զերեսաք իւրեանց, պատրուակել և թագուցանել նկրտին զներքին խորհրդոց իւրեանց զմտրարդէմ տեսութիւն, և ըստ Առաքելոյն բանի որ առ մոլորեալս ի ճշմարտութենէ (Տիտ. ա. 16), «միայն բանիւ խոստանան գիտել զճշմարտութիւն, և գործովք մոլութեան և մոլորութեան ուրանան. պիղծք և անհաւանք, և յամենայն գործս բարեաց անպիտանք»: Այլ Տէրունական անժխտելի վճիռ է, «Օվ ոչինչ է ծառուի՝ որ ոչ յայտնեսցի, և գաղտնի՝ որ ոչ

ծանիցի, եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ» (Մատ. Ժ. 26։ Մարկ. դ. 23)։ Որպէս միայն բանիւ պանծան յանուն սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ անուանելով զնոսա Լուսաւորչի՝ որ է ասել՝ հետևողք սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ուղղափառ վարդապետութեան։ Բայց դու տես ասասնոր՝ թէ զնարդ հերքեն և մերժեն զողջամիտ Աւետարանական և Առաքելական ըզվարդապետութիւն նորին իսկ մեծի Յահանայապետին մերոյ և սրբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչի՝ գրելով (ի Յոգ. Գ). այսպէս. «Ընդայիմք զկատարեալ հաւատս ի վարդապետութիւն քառաբանի, ըստ որոյ երգէ եկեղեցի սուրբ «Հուր շիջանի խաւար մերժի ... զի Թողութիւն մեզաց լինի»։ Ընդդէմ է այս խոստովանութիւն բանից և ըստ ամենայնի հակառակ լուսաւոր ուղղափառ և ճշմարիտ վարդապետութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի. վասն զի նա ինքն Լուսաւորն հոգւոց մերոց՝ հայտնի անուանէ զվայրն զայն, ուր կան հոգիք յանցաւոր մեղաւորաց. որպէս գրէ «Եւ այս ամենայն ապառնալիք յանցաւորաց՝ յոյժ ի տրտմութեան ունին զհոգիս մեղաւորաց ի կայանն» (Յաճախ. Ճառ ԺԵ)։ Յայսմ կայանի եղեալ ներելի մեզք և զկատարեալ խոստովանութեան և ապաշխարութեան զմիջոցս և զժամանակս կորուսանող ննջեցելոց հոգիքն՝ սուրբ և հաշտարար անմահ պատարագի փրկագործ շնորհիւն գտանեն զմեղաց իւրեանց զթողութիւն, և լինին ալքայութեանն փառաց ժառանգորդ ընդ սուրբս ամենայն։ Եւ այս՝ գրէ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ. «Եւ ի մատուցանելն զահաւոր զսարսափելի և զփրկական խորհուրդն՝ յիշէ անդ զմարդասիրութեան նորա զերախտիսն, և խնդրէ Ջերմեռանդն արտասուօք զքաւութիւն կենդանեաց և մեռելոց, և այնու զինդրելն» (Յաճախ. Ճառ ԺԴ)։ Դարձ քան զդրելն սոցին զայն մտաքաւ ունայնաբանութիւնս՝ պնդատ էր նոցա աշակերտիլ և ուսանիլ ևս ի Ներսիսէ Լամբրոնացւոյ՝ ի սրբազան Եպիսկոպոսէն Տարսոնի Կիլիկեցւոց, որ հանձայն սուրբ գրոց և բանից մեծի Հայրապետին մերոյ սրբոյն Գրիգորի՝ գրէ այսպէս (ի մեկնութեան խորհրդոյ և սրբոյ Պատարագին). «Ուստի և հանգիստ խնդրէ նոցա ի բարեարարն Աստուծոյ ընդ սուրբսն. քանզի որպէս ցուցեալ է բազում անգամ, որիշ ի միմեանց է կայարան հոգւոց մեռելոցն, և ևս յայտնի է ի Ղազարու և Ինձատան առակէն» (տիպ Երուսաղէմայ՝ երես 126)։

Զուսուցին մեզ սուրբ Գիրքք զանուն քառասանին, և ոչ նախնի սուրբ հարք եկեղեցւոյ, այլ՝ Հայր+ ասացին. զի Հայր անուն ցուցանէ մեզ զայն տեղին, յորում՝ նեղելի մեղք անապաշխար ենչեցելոց հոգիք՝ կան մնան յուսով փրկագործ հաշտարար սուրբ Պատարագի միջնորդութեանն։ Ապա Արիստոսի Կաթուղիկէ և Առաքելական Եկեղեցին և հայրապետ անդամք նորին չընդունին բնաւ զայդ նորահնար և արտաքոյ սուրբ գրոց բառն +---բ։ Ասացի Ն-բ-հն-բ. զի սուրբ եկեղեցի մեր՝ շնորհիւ սուրբ Հոգւոյն Աստուծոյ՝ Առաքելական և Առաքելական հին աւանդութեանց՝ և Աստուածիմաստ վարդապետուն նախնի սուրբ Հարց՝ միշտ հաւատարիմ աւանդապահ գտանի։ Զամին իմանալ՝ թէ +---բ-ն՝ նոր բաստեղծ (շինծու) բառ իմն է. ընթերցիր զԱստուածաբանութիւն անուանեալ գրութիւնն հայր Մկրտչի Աւգերեան, որ ի Մխիթարեան ուխտէ։ Այս իսկ բանադատեալ ի ճշմարտութենէ՝ համարձակ գրէ այսպէս. «Բ---բ-ն ի մերս բարբառս տիրապէս նշանակէ +---ին կամ +---ղ-ն, վասն որոյ և զԱստուծոյ և զաստուածայնոց և եթ ասի. այլ պիտակարար սովորութիւն եղև ի յետին ժամանակս՝ փարել նշանակութեամբ Լատին ձայնիս Բ---բ-թ-ա-ս, որ թարգմանի հ-ա-բ-ա. այսինքն՝ տեղի կամ կայան միջական հոգւոց արդարոց, որք ունին կրել ինչ պատիժ ըստ յանցանաց, մինչև իսպառ մաքրեալ յայնց՝ մտցին ի հանգիստ սրբոց արքայութեան երկնից» (գլ. դ)։ Ապա՝ ուղղափառ հաւատով և անսերկրայ կատարեալ յուսով՝ Առաքելական սուրբ Եկեղեցին մեր ամենայն ջերմեռանդութեամբ խոստովանի և ճանաչէ զԱստուածային ներողութեան բազմատեսակ սքանչելի շնորհաց ներդործութիւնն՝ իսկապէս Բ---բ-ն, այսինքն՝ քաւիչ մեղաց, ներող յանցանաց, ևս և խոստովանի զգիրկարար խորհուրդն հաշտարար սուրբ անմահ պատարագին, որ կատարի ի մէջ սուրբ եկեղեցւոյ։ Տես զվկայութիւնս գրեալ ի ստորև։ «Տէր Աստուած մեր դուլսէիր նոցա, Աստուած դու քաւիչ լինէիր» (Սաղ. զբ. 8)։ «Զի ամենեքին ծանիցեն զես ի փոքրկանց նոցա մինչև ի մեծամեծս՝ ասէ Տէր. զի քաւիչ եղէց անօրէնութեանց նոցա, և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից» (Երեմ. լա. 34)։ «Եւ մաքաւոն կայր մեկուսի, և ոչ կամէր և ոչ զայն ընդ երկինս ամբառնալ, այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր. Աստուած քաւեա զես զմեղաւորս». (Ղուկ. ժբ. 13)։ Տես՝ զի և սրբազան Աւետարանիչն Յովհաննէս հաս-

տատէ զայս մեր 'ի մարդասիրական յանձնառելի քաւութիւն Որդւոյն Աստուծոյ՝ Փրկչին մերոյ՝ յասելն. «Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղցէք. և եթէ մեղցէ ոք, ունիմք բարեխօսս առ Աստուած զՅիսուս Քրիստոս՝ զարդարն և զանարատն. և նա է քաւութիւն մեղաց մերոց, և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի» (ա Պետրոս. գ. 1—2)։ Որում փկայէ և սրբազան Առաքեալն Պօղոս 'ի բազում տեղիս (Հռով. գ. 25։ Եբրայ. թ. 17)։ Եհա զայս ամենայն վկայութիւնս յիշելով հայեցուք առ անգամ մի ևս 'ի հրեշտակիրսն սուրբ վարդապետն մեր Գրիգոր Նարեկացի, որ զԱստուածային՝ սքանչելի՝ քաւիչ և արդարացուցիչ շնորհն գերազոյնս բարձրացուցանէ յասելն. «Ո՜անաւանդ զի կրկին բարձունք են և փառաւորք՝ և քան զչափ կշռութեան բանի գերազոյնք՝ խմամն խառնութեան հաշտարանք, և հզօրագոյն քաւարանք» (Նարեկ. լա)։ Եւ մաղթէ. «Բազում երկնաւոր, թագաւոր բարձրեալ, տէր բոլորից, ամենից ակնկալութիւն... քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց» (անդ ձդ)։ Ապաքէն ասացաք «Քաւութիւն և ներողութիւն պարգևի 'ի սրբարար խորհրդոյ մարմնոյ և արեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Քանզի ամենեքին մեզան, և նուազեալ են 'ի փառացն անտի Աստուծոյ, և արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն փրկութեան որ 'ի Քրիստոս Յիսուս, զոր յառաջն եդ Աստուած քաւութիւն 'ի ձեռն հաւատոյն արեամբ նորա» (Հռով. գ. 23. 25)։ Յայտմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած, այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զորդին իւր 'ի քաւութիւն մեղաց մերոց» (ա Յովհ. դ. 10)։ Եպա զայս խորհրդ սուրբ և անմահ պատարագի՝ որ 'ի մէջ սուրբ Եկեղեցւոյ յաւէտ կատարի փառն փրկութեան հոգւոց կենդանեաց և ննջեցելոց, արժանի իսկ է կոչել +---ԲՆԴ մեղաց, և զկաթուղիկէ եկեղեցին սուրբ՝ խորհրդական +---ՐԱՆ։ Յապացուցութիւն մերոց բանից՝ հայեաց 'ի պատարագիչ քահանայն, և տես՝ զինչ մաղթէ. «Ի յարկի սրբութեան և 'ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս և մարդկան +---ՐԱՆ, առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ տեղւոյս խնդարհեալ երկիւղս երկիրպագանելոք» և այլն։ Եւ զսուրբ խորհուրդն բարձրացուցանելով ակնարկ ժողովրդեանն՝ բարձրաձայն զանձնառելի շնորհաց զօրութիւնս քարոզէ ամենեցուն յասելն «Ի սուրբ 'ի սուրբ պատուական մար-

մեոյ և յարենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցուք սրբութեամբ, որ ի ջուր յերկնից բաշխի ի միջի մերում. սա է կեանք, յոյս, յարութիւն, +----Ի+ և թողութիւն մեղաց»։

Աղաչեմք համարձակեցի՛ն միտք զարանողաց, և կամ՝ ի բաց մերժեսցի՛ն ի մտաց նոցին կեղծեալ զաղափարք նոքատանջծ +---բ՝ բառին, թէ յամառեալ կացցեն մնացեն ՝ի նոյն՝ ըստ ամենայնի անհմուտ գոլով զօրութեան մտաց բանին, զոր առեալ ՝ի Սերսիսէ Հ՝նորհալի սուրբ Հայրապետէ, միրմէ, երբէ եկեղեցի սուրբ. «Ընդ խորհուրդ քահանային. բաղկատարած կայր ՝ի բեմին առաջի սուրբ սեղանոյն. հուր շիջանի, խառաբ մերժի. տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի»։ «Ձեմք կարօտ մտացածին բանիւք և ըստ քմաց մերոց տալ զրացատրութիւնս Հ՝ատականին. զի յորժամ ընթեռնուցեմք զԸ՝նդհանրականն զիր Հայրապետին մերոյ Հ՝նորհալւոյ, յայնժամ գտանեմք զահաւոր խորհրդոյն փրկարար հաղորդութեանն զշնորհաց զօրութիւնս, որով լինի թողութիւն զղջացելոց ՝ի մեղաց կատարեալ խոստովանութեամբ, և քաւութիւն մեղաց՝ ներելի մեղաւք ենջելեալոյն հոգւոց։ Վ՝ասն որոյ գրէ. «Իսկ պատարագն Քրիստոսի՝ զոր կատարեն ճշմարիտ հաւատով սուրբ քահանայքն յանուն ենջելեալոց, ՝ի վերէ քան զմիտս և զբանս։ Օ՝ի եթէ միանգամ պատարագեալ Քրիստոս ՝ի խաչին՝ զմեղս բազմութեան մարդկան ջնջեաց որ յԱդամայ, յորժամ բազում անգամ մատչի յանուն քրիստոնեայ ՝ներենջելեալոյն, զի՞նչ արգելք մեղք ելցեն՝ զոր ոչ թողցէ նման Հայրն երկնաւոր վասն Մարածին որդւոյ իւրոյ զնմանն։ Եւ որ հաւատայ՝ մի և նոյն է պատարագն, զոր Քրիստոս մատոյց, և զոր քահանայքն մատուցանեն. միայն թէ յուզեալ հաւատս, և՝ ի գործումն մեղաց լեցի ենջելեալն ՝ի ժամ վախճանին» (Ընդհանր. տիպ. Պօլսոյ երես 160—161)։ Ահա սուրբ և անմահ պատարագի շնորհաց զօրութիւնն է, որ ՝ի հոգւոյ անտի մեղուցելոյ զհուր և զխաւաբ մեզայն շիջուցանէ և մերժէ, և ոչ թէ հ--ր բանիւ՝ ըզգալի հուր ինչ ճանաչելի է և խաւաբ նիւթական, այլ՝ մեղաց սաստիկ տանջումն և տագնապումն, որով տառապի և ենդի հոգին. վասն որոյ սուրբ Գիրքն նմանեցուցանէ զտագնապ մեղացն՝ հրոյ և խաւաբի, զոր զգայ միշտ հոգին և խիղճն մտաց. վասն զի մեղապարտ հոգին զրկեալ է յԱստուածային շնորհաց լուսոյն. զի մեղքն՝ ըստ Ա. գլոց՝ է հուր. «Հուր վառեալ յամենայն անդա-

մբս նորա» (Յոր. լա. 12)։ «Տեղասցէ՛ ի վերայ մեղաւորաց որոգայթ՝ հուր և ծծումբ, այս մրրիկ բաժին բաժակի նոցա»։ «Հուր կերիցէ զնոսա» (Սաղ. ԺԱ. 7։ Ի. 10)։ «Դառանգեն (մեղաւորք) ըզԴատաստան ասացեալն՝ բաժին ժառանգութեան մեղաւորաց, և է նա հուր ծծումբ՝ անդրոյս խաւարա խառնեալ» (Իգնատիոս վ. ի մեկ. Ղուկ. ԺԲ. 21)։ Իսկ թէ՝ մեղքն ունի զնմանութիւն խաւարի, որպէս ի վերս ասացաք, հաստատեսցուք այժմ վկայութեամբք սուրբ Գրոց։ «Ոչ՝ նստէին ի խաւարի և ի ստուերս մահու» (Սաղ. ՃԺ. 10)։ «Ի բաց արասցուք զյաւուրս հեան զգործսն խաւարի» (Հռով. ԺԳ. 12)։ «Անիրաւութիւն՝ ինքն ըստ ինքեան խաւար է» (Սարգիս Շնորհալի տիպ Պօլսոյ, երես 112)։ Այս սրբոյ և անմահ պատարագի շնորհիւն մերժի խաւարն անօրէնութեան, շինչանի հուրն մեղաց. վասն որոյ տրտմեալ հոգիքն ուրախանան, զի թողութիւն մեղաց լինի։

Ահա այս է զարանողաց մոռացածին հնարեալ քաւարանն, զոր հաստատել Ջանան վկայութեամբք գրոց, և տարօրինակ մեկնութեամբ նոցին։ Ստատոր վկայութեամբք գրոց հերքելով զայս վեցերորդ բանս զրախօսութեան նոցին՝ զեօթներորդին փութասցուք առաջի դնել զհերքումն։

ԲԱՆ Է.

«Լուրեղ ճանաչելոք լինել զհրաշալի ծնունդն Հիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ ի 25 Դեկտեմբերի, և զմկրտութիւնն՝ ի 6 Հունվարի. նոյնպէս զաւետումն սրբոյ Կուսին՝ ի 25 Մարտի, ևս և զընծայումն քառասնօրեայ՝ յշ ն Փետրվար ամսոյ։ Ասի և մեք զայսոսիկ հրաշանորոգ տօնախմբութիւնս կատարելոք ընդ Հայնըս և ընդ Լատինս» (ի յոդ. Գ.)։ Լրթէ սոքա տեղեակք էին եկեղեցական պատմութեանց, պարտ էին զծնմարիան խոստովանել, որպէս խոստովանին հարազատ որդիք սրբոյ Լուսաւորչին. իսկ և-

թէ եկեղեցական պատմութեանց անծանօթք, և առաքելական աւանդութեանց անհմուտք էին, պարա իսկ էր սոցա անսալ խրատու Սրբազան Առաքելոյն Պօղոսի. «Մի լինիք իմաստունք յանձին ձեր» (Հռով. ժբ. 16)։ Ի փիլայ այսր բանի ասէ սուրբն Յովհան Ոսկեբերան. «Այս է ախտ ծնեալ ի հպարտութենէ, որ զմիաբանական ընկերութիւնն ի սպառ ի խառնութիւն արկանէ»։ Եհա այսպիսեաց խրատ տայ Սողոմոն Աստուածային իմաստութեամբ. «Մի լինիր իմաստուն յաչս անձին քոյ, այլ երկիր ի Տեառնէ, և խոտորեա յամենայն չարութենէ» (Առակ. գ. 7)։ Բայց առաւել սաստիկս յանդիմանելով զրկ մարգարէն Նասայի «Այ՞ այնոցիկ՝ որ խորհին խորհուրդս խորիմս՝ և ոչ Տեառն» (իԹ. 15)։

Արդ զայս ամենայն եթէ ուշի ուշով նկատէին, յայնժամ ըզթիւր և զսխալական ճանաչումն իւրեանց ի միտ առեալ՝ ոչ երբէք համարձակէին զրել։ «Եթէ ուզիղ ճանաչեմք» և այլն։ Մի թէ ուղիղ և ճշմարիտ լեալի ճանաչումն մտաց կատարեալ քրիստոնէին՝ յորժամ մերժէ զառաքելական աւանդութիւնս՝ նորաձայն և նորաձև վարդապետութեանց հետեւելով, և նորահնար աւանդութիւնս ընտրելով և ճանաչելով, հակառակ ճշմարիտ աւանդութեանց, զորս աւանդեցին մեզ եթէ գրով և եթէ բանիւ, որպէս ասէ սուրբն Պիւրեղ վասն բանիցն սրբոյն Աթանասի և դաւանութեանն Նիկիոյ սուրբ ժողովոյն թէ՝ «Ոչ հրամայեմք մեզ ինքեանց և կամ այլոց բառնալ ինչ յորոց անդէն և կամ սիրոբայիւ միով անցանել՝ յիշելով զասացեալսն թէ «Մի՛ փոխեր զսահմանս յաւիտենից՝ զոր եղին հարքն քո. քանզի ոչ էին նոքա՝ որք խօսէին, այլ՝ Հոգին Աստուծոյ և Հօր»։

Այս եթէ զի՛ ի քրիստոնէից հակառակ և ընդդէմ ճշմարիտ և ուղիղ Առաքելասահման աւանդութեանց զհակառակն խորհի՝ խօսի և կամ սահմանել, անշուշտ ճշմարտութեան Հոգւոյն սրբոյ հակառակ կայ։ Սոցա նման էին ի հնումն Յանէս և Յամբրէս՝ զիսաւորք կախարդացն Նէրիսոսի, որք ընդդէմ կացին Մովսիսական օրէնդրութեանն, և յայտնատեսիլ հրաշիցն։ Այնպէս ի ժամանակս Առաքելոցն եկին ոմանք ապականիչք մտաց և յաւէտ զայթակղեցուցիչք բազմաց՝ սուտ վարդապետք, որոց ասէ զրէ սրբազան Առաքեալն Պօղոս առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր. «Որ ունիցին զկերպարանս Աստուածապաշտութեան, և ի զօրու-

թենէ անտի նորա ուրացեալ լցին. և խորշեսջիր ի նոցանէ... որ յամենայն ժամ ուսանին, և երբէք ի գիտութիւն ճշմարտութեան ոչ հասանեն. այլ որպէս Յանէսն և Յամբրէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն, մարդք ապականեալք մտօք, անպիտանք ի հաւատս» (ի Տիմոթ. գ. 5—8)։ Յայնպիսեաց անտի էին ոմանք գլխովին մեկնեալք և հեռացեալք ի ճշմարիտ Աւետարանական քարոզութեանց երանելի Առաքելոյն Պօղոսի, և օտարացեալք յԱռաքելական աւանդութեանց, յորոց գլխաւորքն էին Փիգեղոս և Հերմոգենէս։ Սոքան եղին, ասէ Ոսկիբերան, վասն թարամիք յամենայնի»։ Յայսպիսեաց զգուշացուցանէ զաշակերտն իւր երանելի առաքեալն Պօղոս «Ունիցիս օրինակ ողջմտութեան բանից՝ զորս լուար, հաւատովք և սիրով, որ է ի Քրիստոս Յիսուս. զբարի զաւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ։ Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան ի մէնջ ամենեքին՝ որ էին յԱսիա, որոց տակի են Փիգեղոս և Հերմոգենէս» (ի Տիմոթ. ա. 13—15)։ Յեսանէն սիրելի աղջամիա ընթերցող, զեմրդ ձգնի սրբազան Առաքեալն կրկնելով և վերակրկնելով զերբատական բանս իւր առ Տիմոթէոս՝ առ ի կացուցանել զնս հաստատուն աւանդապահ Աւետարանական և Առաքելական բանաւոր և գրաւոր քարոզութեանց, և զգուշացուցանել ի ժխտողաց և ի մերժողաց զԱռաքելական աւանդս. յաղագս որոյ՝ ոչ երբէք դադարէր ազդել նմա զայս բան. «Ով Տիմոթէէ, պահեա զաւանդն՝ խուսափեալ ի պղծաց և ի նորաձայն բանից և ի հակառակութենէ, և ի մոլորանուն գիտութենէ, զոր ոմանք յանձն առեալ՝ վրիպեցան ի հաւատոց անտի։ Շնորհք ընդ քեզ» (ա Տիմոթ. գ. 20. 21)։

Արդ՝ եկեսցուք ի բաղդատութիւն բանից զլաւսսու թեան նոցին ընդդէմ Առաքելական անժխտելի աստիճանաւորութեանց, զի անապարծութեամբ ասեն և գրեն «Ուղիղ ճանաչելի լինել զհրաշալի Ծնունդ Հիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ի 25 Դեկտեմբերի, և զկիրակութիւնն՝ ի 6 Յունվարի. նոյնպէս և զաւետումն սրբոյ Կուսին՝ ի 25 Մարտի, ևս և զընծայումն քառասնեայ՝ յ2 Փետրվար ամսոյ։ Ուստի և մեք զայսոսիկ հրաշանորոգ ասնախմբութիւնս կատարեմք ընդ Հայոց և ընդ Լատինս»։ Ընթերցար զնորահնար բանից նոցին գլխամարութիւնն. ընթերցիր և զկանոնական բանս սրբազան Առաքելոց՝ որպէս գրեալ է՝ ի գլ. ե. ուր

ասի «Կարգեցին Առաքեալքն և եղին հաստատութեամբ, թէ ե-
ղեցի ասն Օծմնդեան և Յայտնութեան Փրկչին մերոյ... որ օր վեց
է Յունվար անոյ, ըստ Յունարէն թուոյ, և մեծապէս խմբեա-
ցին զայն ցնծութեամբ և ուրախութեամբ»։ Եւ սուրբն Պողի-
կարպոս՝ աշակերտն Յովհաննու սրբազան Աւետարանչի՝ զնին գը-
բեցոյն զգանոցան Առաքելական աւանդութիւնս, զրէ ևս «Օ,այս
ասելիք, ոչ թէ այլ և այլ են ասելք Օծմնդեանն և Մկրտութեա-
նըն, այլ ի միում աւուր տօնել պարտ է, թէպէտ և զոմեքս այլ
և այլ՝ որ այսօր կատարեցաւ»։

Այս ըստ ասմի խոստովանալք և թիւրեալք են բանք Նոցին զբախ-
սիոյ ի սրբազան Առաքելոյն ճշմարիտ աւանդութենէ։ Որ ինն ամա-
չեսցին սոքա և կարի ամենայարմար դատեսցին առաջի անատեսիւր
հեռաւորացն սրբազան Առաքելոցն և ողջամիտ աւանդապահիցն
Աստուածարեալ Հայոց սրբոց։ Թող ընթերցեալ ուսանիցին ի
Գրիգորէ Եծարանէն, որ գրէ այսպէս. «Կարգեցէք եպիսկոպան
իւրոյ եկեղեցւոյն ի վեցն Յունվարի զօր Օծմնդեանն և Մկրտուն,
և ի չորեքտասան Փետրվարի զեկաւորիցն ի տաճարն։ Իսկ զայլոց
չարահամբաւ ստերիւրեալ յիպոխոսէն խորհուրդ ոչ ընդունիմք,
զորոց ասէ Յովհաննէս թէ՝ ի մէջ եկին, այլ ոչ էին ի մէջ. զի
իշխեցին առ աչօք ասել զՇնմարիտ զանքնին ծնունդ Մխածնին։
Եւ այլք փոփոխել կամելով զԱռաքելական կնիք Օծմնդեանն, և
այլք զՅայտնութենն, և անհաստատք մեսցեալ Առաքելաւանդ կա-
նոնական սահմանացն՝ զոր գրով աւանդեալ ունի եկեղեցի, եթէ
օր Օծմնդեան և Յայտնութենէ Փրկչին մերոյ ի միասին տօնեսցի ի
վեցն Յունվարի ասնոյ» (ի Կանոն. բանս)։ Եւ երանելի Մակա-
րիոս Պատրիարքն Երուսաղեմայ գրէ (ի Կանոն. բանս իւր) այս-
պէս. «Մկրտութեանն խորհրդոյ յերիս տօնս առաւել փափագ-
ցին Հարքն մեր, ի Օշակին, ի Պենտեկոստէին, ի Օծմնդեանն և
ի Մկրտութեանն՝ զոր ի միում աւուր տօնեմք»։ Այնպէս և
Մելիտոս եպիսկոպոսն՝ որ մին էր յերեսելի Հարանցն Ժողովոյն
Կոստանդնուպոլսոյ, գրէ այսպէս «Տօնեմք ըստ աւետեաց հրեշտա-
կին՝ ինն ամեայ զծնունդն, ութօրեայ զթլիպատութիւն, երեսնա-
մեայ զմկրտութիւն։ Եւ պատուեալ այսպէս՝ զծնունդն և զմկրտու-
թիւնն ի միում աւուր տօնեմք» (ի թուղթն առ Եւտոքիոն)։

Այս եթէ ստոյգ՝ ըստ ստորագրութեան իւրեանց՝ են Լու-
սաւորչական Հայք, թող յետս ընդ կրունկն դարձցին ի կրոն-

կուռ և յանուղղայ բանից իւրեանց՝ քերկրով զայն յապուշ մը-
տացն. իսկ եթէ ոչ՝ լուիցէն զերաւայի պատասխանին ունայնա-
բանութեանց իւրեանց ի Հաւատարիմ և յանմոլար որդւոց սրբոյ
Հոգւոյն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որք են Հարազատք Եկե-
ղեցական կամ ուղղիկ սուրբ եկեղեցւոյն Աջմահեանցի. և այս՝ ոչ նո-
րաձեւս ինչ հնարեալ բանիս, այլ ի նախնի սրբոյ Եկեղեցոյ ա-
ւանդեալ, ի սրբոյ Հոգւոյ քարոզեալ, և ի մեծէն Գերսիսէ Հ ը-
նորհալի Հայրապետէն մերմէ, ընդ հանրապէս գրեալ և ճշմարիտ վե-
կայութեամբ հաստատեալ. զոր եթէ խելամտութեամբ ընթերց-
ցին՝ յուսամք եթէ համոզեսցին անշուշտ, որպէս համոզեցաւ բա-
նեպաշտ թագաւորն Հռոմոց Խմենտէլ կայսրն։ «Ի միում ա-
ւուր ասենեմք մեք, ասէ Հ նորհալին, զսուն Գրիգորեան Գրիգորոսի և
Մկրտութեն ի վեց Յունվարի, որպէս ընկալաք յառաջին Հարցն
աւանդեց. յայսմ ուղիղ էին գրեալքս։ Եթէ՝ զի յառաջագոյն
ամենայն եկեղեցիք՝ սիսեալ Եկեղեցոյն՝ այպէս ասենէին, և յետոյ
բաժանեցին ոմանք՝ վասն ի միաձայն հաւատութեան Լեհի զեհ-
մի և Յորդանանու. քանզի ոչ կարէին ի միում աւուր յերկո-
սին ուխտան կատարել զսուրն՝ հետի գրով ի միաձայն, և փոքր
փոքր աճմամբ ընկալան և այլ եկեղեցիք զնոցն։ Իսկ Հայաստա-
նեայք որպէս ունէին ի սրբոյն Գրիգորէ՝ ամենասուրբ կացին ի նոյն։
Դարձեալ՝ զի և Աւետարանիչն Լուկաս վկայէ այսոցիկ ճշմարիտ
լինել (գլ. ա. հմր 8)։ Զանազի պատմի ի սուրբ քաւութեանն,
որ էր Թշրեանի ասան, և Սեպտեմբերի իբ, մնանել քահանայա-
պետին Զաքարիայ ի տաճարն, և արկանել խունկ, և տեսանել
զտեսիլ հրեշտակին, և լսել զաւետիս յղութեան ամրոյն, և կրել
պապանձումն լեզուի յոչ հաւատալն։ Եւ ասէր ասէ թէ «Երբեմն
լքան աւուրք պաշտաման նորա, գնաց ի տուն իւր»։ Եւ տուն
նորա ոչ յԱերուսաղէմ էր, այլ ի լեռնակոյտն Հրէաստանի, ուր
զաղջոյնն ետ Մարիամ Աղեսաբէթի. և աւուրք պաշտաման նո-
րա էին՝ հինգ օր քաւութեան սուրբի, և եօթն օր տաղաւարտհա-
լոյցն, որ լինի երկուտասան օր։ Այսպա զերկուս սուրս զայսոսիկ կա-
չէ Աւետարանիչն՝ [illegible], զորս ի
միասին սուրբէին ըստ օրինացն. որ իբրև կատարեցաւ՝ գնաց ասէ ի
տուն իւր ի Թշրեանի քաան և երկու. և ի Հոկտեմբերի ինն եղև
յղութիւն Աղեսաբէթի։ Արդ՝ որք ի քաան և հինգ Մարամ կա-
տարեն զսուրն աւետեաց կուսին, զյղութիւնն Աղեսաբէթի ի Թշրշ-

բինի տան տեղն՝ յառաջնուն աւուր պասքանման Զ. աքարեայ, որոց ամենեին չվիպէ Աւետարանիչն Ղուկաս։ Իսկ որք յետին Աղրիլի տեղեն (զոն Աւետեանն), յետ երկուսման աւուրց պաշտման նորա տեղն զյղութիւնն Եղեսաբեթի ի Թշրենի քան և երկու՝ ըստ վերոյգրելոցդ, որում վիպէ և Աւետարանիչն։

«Ի՛ և երկրորդ վիպութիւն այսոցիկ ըստ նորուն Աւետարանչին պատմութեանն, այն՝ զի ասէ թէ «Հիսուս էր ամոց երեսնից սկսեալ» ի Ծննդենէ, անտի, և հարի է՝ զի ըստ իմաստաւն և ուղիղ մտաց հանդիպեալի մկրտութիւնն ի նոյն թիւ ամոց (եկեալ), յորում և հրաշալի Ծնունդն, այսինքն՝ ի վերն Յունվարի, զի ասէ և գաւանութիւն Հայաստանեայցս աւուրբ Եկեղեցւոյ յետ երեսնից ամոց եկեալ ի մկրտութիւն։ Էր և այլ երս բազումս ասել վասն սորին, այլ սակաւս շատ է իմաստանոյդ»։ Եւ մեզ ըստ Շնորհալի Հայրապետին մերոյ շատ լեցին, բաւական համարեսցին, վկայութեամբ սրբազան առաքելոցն և առաքելասարաս նախնի Հայոց սրբոց նշանակեալ և ցուցեալ բանք ճշմարիտ աւանդութեան, զոր հաստատուն ունի իրրև շնորհք Աստուածային և զգուշութեամբ պահեալ է Հայաստանեայցս Առաքելական և ուղղափառ աւուրբ Եկեղեցին մեր. որով միշտ արդիւնաւորեալ ունի զանձկալին զովութիւն սրբազան Առաքելոյն Պօղոսի, որ երբեմն առ Կորնթացւոց եկեղեցին՝ ճանաչելով գնոսա աւանդապահս՝ ասէր նոցա մեծամեծ զովութիւնս այսպէս. «Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք, և որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք» (ա. Կորն. ժա. 2)։

Այս սրբոյ է մեզ պատի մտաք ազօթս առնել վասն այսպիսեաց հանդգգայնոց մերոց, որք նորաձև վարդապետութեանց և մտացածին խաբէական բանից և խորհրդոց հետևելով այսօր՝ խոտոր լեալ հեռացեալ գոսանին յառաքելասահման ուղղէ պողոտայէն, ի ճշմարիտ քարոզութեանց և ի լուսաշաւիղ հետոց Աստուածարեալ նախնի Հայոց սրբոց ուղղափառ վարդապետութեանց, խաբեալ թափառեալ և սատանեալ ի հոգեկորոյս խաւարի մոլորութեան։ Պիտէ՞ ողջամիտ ընթերցողք, առաւել ի կրկին սոսկալի տիրթս հոգիք մեր զրկին Աստուածային շնորհաց և փառաց անմատեղի լուսոյն։ Առաջին խաւարաբեր տիրթն՝ է ջանասէր, չհաստատ, և իսկապէս ուրանալ զԱստուածային ճշմարտութիւնն և զմարդասիրական փրկագործ գործունէութիւնն Որ-

բիտոսի Աստուծոյ մերոյ՝ զոր ուսուցանեն մեզ սուրբ գիրք, և քարոզին վարդապետք ճշմարտութեան, զոր մերժեն հեթանոսք և մոլորամիտ հերձուածողք և հերետիկոսք, որով և զգեին յԱստուածային շնորհաց լուսոյն, որպէս գրեալ է «Հանապարհ արդարոց որպէս լոյս ծագեն, առաջնորդեն և լուսաւորեն, մինչև տիւն ծագեսցի, ճանապարհք ամբարշտաց խաւարինք, և չգիտեն զինարդ գայթակղին» (Առակ. դ. 18. 19)։ «Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց»։ Եւ թէ՝ «Ես լոյս յաշխարհ եկի. զի ամենայն որ հաւատայ յիս, ի խաւարի մի մնասցէ» (Յովհ. բ. 12։ ժբ. 46)։ «Որոց խաւարեալ են սիրտք իւրեանց, և օտարացեալ են ի կենաց անտի Աստուծոյ, վասն տգիտութեանն՝ որ է ի նոսա, վասն կուրութեան սրտից իւրեանց» (Եփես. դ. 18)։ Ահա զայս ամենայն ճշմարտութիւնս քարոզեաց և հաստատեաց ի միտս մեր Նախահայրապետն մեր յասելն. «Հշմարտութիւն հաւատոցն լոյս է աչաց մտացն շարժմանց և խորհրդոցն յիշատակաց՝ զգեցեալ զլոյսն գիտութեան և իմաստութեան շնորհաց սուրբ Հոգւոյն, որ զառաջնորդական միտսն լուսաւորէ, և զրովք սրբովք յանդիման կացուցանէ զանեւրելոյնն իբրև տեսեալ աչաց արդարոցն լոյս։ Օվ է և այն ես լոյս՝ այսպէս երևութանոյ, Աստուածային տեսութեանն մեծութիւն անքննիւ, որ անեղման և անհամեմատ է, անպատում և անստահման, անհաս և անբան յաղագս Աստուծոյ։ Այլ ճանաչի անելիկոյ հաւատով այնմ, որ ի նեղութեան և յանդորրու զզոյացեալ հաւատով՝ որ ի սուրբ Երրորդութիւնն, կոյս մնայ անհասանելի առ մարդակիցն հաւատոյ։ Օվ լուսաւորիչք ուղղեալ հաւատովք յանսիրդն էութիւնն, ի մշանջենաւոր լոյսն, յանխոփոխ ճշմարտութիւնն, ի կենդանարար կենդանութիւնն, մի՛ ևս խոտորեսցուք ի յանցայնարանութիւնն» (Հաճախ. ճառ դ)։ Ամէն ձայնակցի հոգելից շնորհալի սուրբ վարդապետն մեր Սարգիս. «Օ խնամատութիւն քոյր մեզ ասել, և գիրկս արկանել նմա, և զրել զնա յլեղարձակութիւն սրտի, և քան զամենայն պատուականս պատուականագոյն համարել զնա»։ Եւ այսպէս կիրթ լինին ճաշակելիքն յլնարութիւն բարւոյն և չարին, այսպէս կարեմք որոշումն առնել ապրեցուցանող կերակրոյն և մահացուցչին։ Արդ՝ կրթասէրք լեցուք առ այս՝ ազաչեմ, զի մի բղկոշտ ինչ հերձուածողական կարծեսցն ի բերան առեալ ծամի-

ցեմք, կամ զվնասակար գառնութիւնս գաւանութեանց նոցա ճաշակիցեմք, վասն զի ոչ օտարս զնոքեանս անուանեն յեկեղեցւոյ՝ իբրև զՏեմանասս կամ որպէս զՏրէայս. այլ իբրև զբիստոնեայս 'ի ներքս մնասնեն՝ և ապա հեղուն զեղծյնս գառնութեան, և զօտար ուսմունս իւրեանց 'ի կիր արկանեն խարիկ և պատարիկ զառաքեալն ապարաբերոյ մարգիկն» (Ի մեկն. թ. Պետ. Ճառ. Ղ):

Իսկ երկրորդ առեթ խաւարարիկ և զրկող Աստուածային խմանալի լուսոյ Հոգւոյն՝ են ասելութիւնն, մոխանքն և երկպառակութիւնք մերժոյք եղբայրական սուրբ սիրոյն. առ որ վիպի սրբազան Աւետարանիչն Յովհաննէս՝ գրելով այսպէս. «Պատուիրեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարտիւ 'ի նմա և 'ի ձեզ՝ զի խաւարն էանց և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի: Որ ասէ եթէ 'ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է, և 'ի խաւարի է ատաւին. որ սիրէ զեղբայր իւր, 'ի լոյս բնակի. և գայթակղութիւն 'ի նմա չիք. իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ 'ի խաւարի է, և ընդ խաւար շրջի, և ոչ գիտէ, յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա» (ա Յովհ. թ. 8—11): Աստուծոյ սրբազան Աւետարանիչն՝ զճշմարիտ վարդապետին իւրոյ Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ գանհրաժեշտ հրամանն վերակրկնէ. «Պատուիրան նոր տամ ձեզ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ, զի և դուք սիրեսջիք զմիմեանս» «Յովհ. ժդ. 34: ժե. 12):

Այս ուրեմն առանց եղբայրսիրութեան և ազգասիրութեան՝ առաքինութիւնք մեր և հաւատոյ ջերմեռանդութիւնք չեն հաճելիք առաջի սրաշարժի և երկրպագելի ամենասուրբ Երրորդութեանն: Օ այս ճշմարտութիւն նկարագրել կրանելի Աւաքեանն Պօղոս. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց, և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրև ըզծնծղայս՝ որ զողանջին»: Տեսանեմ, նախ՝ յառաջ բերէ զլեզուայն զշարժս. եթէ խօսիցիմ, ասէ, զլեզուս ամենայն ազգաց երկրի, և ունիցիմ զպաշաւն փառաբանութեան հրեշտակաց՝ իմանալի ձայնիւ նոցին կցորդ լինելով, և զեղբայրական սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ, որ միայն հնչէ, և լինիմ անեղան և խառնաձայն, անօգուտ ազաղակող ոմն: Եւ եթէ ունիցիմ ըմբռնգարութիւն, և գիտիցիմ զխորհուրդս ամենայն, և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ»: — Զամի ա-

սել. եթէ զպարգևս մարգարէութեան ընկալեալ իցեմ 'ի Հոգւոյն Աստուծոյ, և մարգարէանայցեմ զգաղտնեացն Աստուծոյ, և զամենայն զլինելոցն յաշխարհի, զոով կարողացայց յաւէտ զբանչելիս գործել, և յերկայնմտութենէն յիս կասիցիմ, ոչ երբէք հաճոյացեալ գոսեմիմ առաջի Աստուծոյ, և չիմ իսկ արժանի յաւիտենական երանութեան և փառաց երկնից արքայութեան, զնորհս առաքելութեան յընդունայնս վատնեմ։ «Եւ եթէ ջամբ բիցեմ զամենայն ինչս իմ ազքատաց, և մատնիցեմ զմարմին իմ յայրումն և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ» (ա Կորն. ԺԳ. 1. 2. 3)։ Այսինքն՝ եթէ զամենայն զգոյս իմ բոլորովին, և ոչ ըստմուն ինչ, տայցեմ աղքատաց, ևս և կամս յանձն առնուցում յաղագս խոստովանութեան հաւատոյ զանազան տանջանս մահու, և իբրև զնարտիրոս հանդիսանայցեմ, և սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ օգտիմ, այս է՝ ոչ ինչ շահիմ Աստուածային երկնից արքայութեան փառաց, և թէ՝ զօգուտս ինչ ոչ դատեմ 'ի շնորհաց փրկագործութեան Հիսուսի Քրիստոսի։

Զիսահ՝ զի ողջամիտ անդամք սիրելի ազգիս՝ հաւատարիմ և հարազատ որդիք սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին՝ իրաւունս ունին ասել ինձ, եթէ զայդ ամենայն և զայլ բազմաթիւնակ ճշմարիտ վարդապետութիւնս ուսցայ մեզ նոյն ինքն մեծ Հայրապետն Լուսաւորիչն հօրս մերոյ, ապա և մեք շնորհիւ Հոգւոյն սրբոյ զանձեալ ունիմք 'ի սիրտս, և ջանամք անմոռանալի տարածել 'ի միտս մեր, և գործով կատարել զնոյն՝ զոր քարոզեաց մեզ այսպէս. «Որ կայցէ յայն սէր՝ որ 'ի Քրիստոս, որ փրկեաց զարարածս, և երարձ զթշնամութիւն 'ի միջոյ, արդ եղեցուք նրմանողք նորա մեծութեանն, և շահեսցուք զարիս և զեղբարս, և փոխեսցուք զարիս մեր 'ի նոցա կարիսն, և զկեանս մեր ընդ մահու նոցա. զի լինիցիմք ժառանգողք նորա ակութեանն և բնակարան կենդանի կամաց նորա, և հաղորդք սքանչելի սիրոյ նորա, և կցորդք փառաւորեալ փառաց նորա։ Սէր սուրբ՝ մայր է առաջութեան, և անարատութեան և սերմանութեան, որ խնամի և յորդորի, յառաքինութիւնս, և յարդարի, յամենայն բարեգործութիւնս։ Սէր՝ ազբիւր է ամենայն բարեաց, որ արբուցանէ զոսուրբ անձինս, և զրատական է ամենայն երանութեանց, և մեծութեան պարգևացն Աստուծոյ բաշխող։ Սէր՝ բղխումն երախանաց Քրիստոսի և վայելչացուցիչ յանապատումն շնորհն նորա,

լուծիչ խաղաղութեան և սուրբ խաղաղութեան...։ Աւր սուրբ՝ հոգւոց և մարմնոց անեղծ առացուած, զի որք ունին զնա միշտ՝ են ի կենդանի շնորհն Քրիստոսի ամենաշնորհ երանութեամբ յաւարտեալ ի գովեան փառացն Աստուծոյ։ Աւր՝ ուսանիք կենդանի յուսոյն, զորիչ նեղութեանց և վշտաց, և լուծիչ ամենայն դժնդակաց ի վերայ եկելոց, որք զենուորին ընդդէմ առաքինութեան հանդիսից։ Աւր սուրբ՝ հրեշտակ է խաղաղարար, որ զցասումն մերժէ, և զոխութիւն լուծանէ, և զնախանձ արտաքս մղէ, և ցաւուցանէ զչարն։ Աւր սուրբ՝ զորդի է փայելուչ, որ խաղաղոյն զինեալ զարթուցանէ, զիրան և զզոյգարանան ի արամանութեանց եկամնից, և ուրախ առնէ ի կամս Տեառն։ Աւր սուրբ՝ ձիթենի է պտղալից ի արաբ բարեխոհի, մղելով զձիթենին ի լուսաւորութիւն խնամալեաց, և յօծումն երանելի անդամանցն ի զուարթութիւն։ Աւր սուրբ՝ հոգեւոր կարգաց յարդարիչ է, և մարմնաւոր վարուց յանձանձիչ, որ ի միասին կապէ, և ոչ ասց բաժանել և քայքայել զհաստատեալս բարին։ Աւր սուրբ՝ բանալի է դրախտին կենաց, որ զկեանս բաշխէ, և անարգելոցն շնորհացն Աստուծոյ գանձուցն բաշխող ի սուրբ անձինս, և զժնդակ վարուցն խափանիչ և ընդդիմանալոց մեղսասիրաց։ Աւ ամենայն արուեստս առաքինութեան՝ սիրով յարդարին ի արքութիւն և յարդարութիւն։ Աւ նոքաւ ցուցանեն զհանդէս բանութեան իւրեանց՝ որ է վարիչ շարի և յորդորիչ բարեաց, զօրավիգն Աստուածասիրաց, և կործանիչ խորամանկաց և մեղասիրաց։ Աւ խառնեալ սուրբ սէր ընդ հաւատոյ և ընդ սիրոյ, հանդիսանաց ի բարեպաշտութեան փառս, և միաւանց հաղորդութեամբն յայտնի առնէ զուսաւոր կարգս։ Զի պատճառաբ առաքինութեանց լուսաւորթադաքն պատիւցին յանուշակ հոգւոն երկնաւորի խնամեն. և փայլեսցին յանմոխանեն և յանապատում երանութիւնս նոցա։ Զի որ ունի զենամեն սիրոյն արքութեամբ առ ամենեսեան հեռաւորս և մերձաւորս՝ առ Հոգի և մարմին, ամենայն ճշմարտութեամբ և երանութեամբ սուրբ սիրոյն՝ յամենասուրբ Երրորդութենէն օրհնեալ պտղի և միածարի, և մշանջենաւոր խնդութեամբն փայելի յանմոխանեն և յանհամեմատ բարութիւնն» (Հաճախ. ճառ ժա)։ Որոնցիս և Աստրիս Շ Նորհալի վարդապետն մեր հիանալով սուրբ Գրոց և սրբոց հօրն մերոյ Գրիգորի՝ հանձնոյն վարդապետ, ոչաւ օրինակաւ յորդորական խրատուց՝ հիմնելով ի վերայ

բանից և պատուիրանաց սրբազան Աւետարանէն Յովհաննու որ ասեն եղբայրսիրութեան «Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է, և ընդ խաւար շրջի, և ոչ գիտէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա» (ա՛ Յովհ. բ. 11)։ Արհնաւ առաւելութեամբ զդատապարտութիւն ատելոցդ եղբօրն ի կիր արկանէ։ Ասան զի վերագոյնն ասաց «որ ատէ զեղբայր իւր՝ ի խաւարի է ասելոյն»։ Իսկ ասա՛ և՝ առաւելութեամբ զնէ զանն, ընդ Ք---ր չէքն՝ ասէ, և՝ ՀԷԿԵ յՍ ԵՐԹԱ. Եր գիտեն. ՉԷ Ք---Ն Հ---Ր-Ն-Ն Շ-Ը Ն-Ր։ Լ՛ւ այս սահման չարի՝ քան զամենայն չարիս է չարագոյն, ասել՝ մոլորեալ ի ճանապարհէն՝ ՀԷԿԵ յՍ ԵՐԹԱ։ Ասան զի առաջնորդ զսէրն Աստուծոյ և եղբօրն ոչ ունի, որպէս զի գործեալ յարքունական ճանապարհն գնա վերածիցէ, այլ մոլորեալն շրջի թափառական ի թուանցս և ի թուփս՝ ի պակաչս մեղս զառաջեալ և կորստեամբ դատապարտեալ։ Լ՛ւ զայս Տէրն մեր ասաց. «Այլ կուրի յոյժամ առաջնորդէ՝ սնոյէ, և երկոքեանն ի խորխորատս անկանին։ Այլ է ասելութիւնն, կոյր է և զաչացու մարդն՝ առանց սիրոյ ընկերին։ Արդ՝ որ գատելութիւնն առաջնորդ ասա՛նոյ, երկոքեանն ի խաւարն յդարկին. զի Ք---Ն ասէ Հ---Ր-Ն-Ն Շ-Ը Ն-Ր։ Կրկին և երեկին չարիք. մի՝ զի ի խաւարի շրջի, և միւս ևս՝ զի ոչ գիտէ յո երթայ. և դարձեալ՝ զի խաւարն կուրացոյց զաչս նորա, այսմենքն է՝ ատելութիւնն. գիտէ զի գնա խաւար առնուանել։ Իսկ ոչ ունի մարմնական անուանել. այլ գՀոգեկանս, որ արդարև ճշմարիտ կուրութիւն է, և գօրէն խլդան գործէ, գմարդն միշտ ի նեղբոյ երկրի ի խաւարին տեղոջ շրջել» (ի մեկն. ա՛ Յովհ. ճառ. դ)։ Բարեբէն պարտաւոր ամենայն օրինացն Աստուծոյ գատմամբ, և դատապարտմամբ յանխնայ յերկնաւոր դատարանէն՝ յոյժամ մեղանչելոցդ ընդդէմ եղբայրսիրութեան և Աստուածային օրինաց խաղաղոյդ Հոգւոյ ատելութեան. և Հոգեկորոյս թերգրութեամբ խաւարասիրին բերեալոց, մանաւանդ երբ չարագործաւոր բնաւորութեամբ՝ զչարարոյս խաղութեան և գատելութեան սերմանեալ զորսին Հակառակասիրին ի սիրոս պարզամտոց, խանդաբեւեցուք՝ խոսիանեսցուք և խոսան Հեղձուցուք զարարի զԱստուածաշնարհ զսիրմանս միաբանութեան և եղբայրսիրութեան. գիտն զի Աստուածային օրէնք և հրամանք եղբայրսիրութեան բազմապատիկ ունի գերազանցութիւն քան զայլ և երանութեանց։ Զայս՝ զի սուրբ և անխարդախ սիրոյն առատաձիր և խմեալն ազբիւր

է՝ ըստ Գրիգորի Աստուածաբանին՝ Հայր Աստուած Ամենակալ։ Եւ այս վկայէ սրբազան Աւետարանիչն Յովհաննէս. «Աստուած սիրեցուցիչ զմիմեանս, զի սէր Աստուծոյ է... և որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած» (ա Յովհ. դ. 7. 8)։

Երկրորդ զանհամեմատ մեծութիւն սիրոյն կամին զիսել՝ որով կազմի և հաստատի, ասէ Յովհան Ոսկիբերան՝ առաքինութիւնն եղբայրսիրութեան, յոր սրբազան Աւետարանչն Պօղոսի, որ ցուցանէ զսիրոյն գերազանց բարձր մեծութիւն քան զձակցացն իւրոց՝ զհաւատոյ և զյուսոյ մեծութիւնս. վասն զի առանց սիրոյն անկենդան են հաւատք, և անվարձ է և անպտուղ յոյսն։ Ուստի զրէ «Բայց արդ մնան հաւատք, յոյս, սէր, սոքա երեքեան. և մեծ քան զսոսա՝ սէր է» (ա Կորն. ժդ. 13)։ «Տեսէ՛ք, ասէ Սարգիս Շնորհալի սուրբ վարդապետն մեր, զանհամեմատ մեծութիւն սիրոյն, զի գերազանց զաստ քան զհաւատս և զյոյս։ Եւ զի՞նչ ասեմ գերազանց, որ առանց սորա ամենայն ինչ ընդ փայր է, ամենայն ինչ վայրապար է և 'ի զուր, եթէ հաւատք իցեն, եթէ մարգարէութիւն, եթէ վարդապետութիւն, եթէ ողորմութիւն, և եթէ մարդասիրութիւն, որ է գլուխ ամենայնի»։ ('Ի մեկն. Կանոն. յերես 718)։

'Այսպէս գերազանց և աքանչելի մեծութիւն ունի սիրոյն օրէնք, զի է գլխաւորն և առաջինն ամենայն Աստուածպիր օրինաց, և լացուցիչ, կառուցիչ և բոլանդակիչ օրինաց. ըստ այնմ՝ «Լրումն օրինաց սէր է»։ (Հռովմ. ժդ. 10։ ա. Տիմոթ. ա. 5)։ Զպաքէն յոյսիսի ողորմի և ողորմելի վիճակս սատնապին հոգիք այնպիսեաց՝ որոց միաք սատանայական չարաչար ազդեցութեամբ թելադրեալք՝ զեղբայրսիրութիւնն փոխարկեն 'ի խստասրտութիւն, զմիաբանութեան շքեղ տեսութիւն 'ի վասն թարգոյն զաղջոյի կիսպարանս երկրպատակութեան. որով արդարև ոչ միայն լինին պարտապան ամենայն Աստուածային օրինաց՝ ըստ սրբազան Աւետարչին Յակոբեայ (ա Կանոն. բ. 8—10). այլ և խստաս և զնեղբին ազդեցութիւնս և զպէսպէս շնորհայ նորին նեղոցածական ըստասիրութիւնս շնչուցանեն հակառակ օրինաց չարժելով։ Եւ այս խրատ երանելին Պօղոս «Օ՜հոգին մի շնչուցանէք, ըմբարդարէութիւնս մի արհամարհէք, զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք, յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք» (ա Թեսաղ. է. 19. 21)։

Իսկ զու՝ ան՝ սատ՝ զի Հնարագիտն զզբաբանն զայն զբուած՝ ի բաց թողեալ զԱստուածային սիրելի օրինաց պարտաւորութիւնս իւրեանց հակառակ սուրբ գրոց և ճշմարիտ վարդապետութեան սրբազան Առաքելոց և Աստուածարեալ Հայր սրբոց, սկսանին Առաքելոց սրբոց շնորհազարդ դաստուց կարգադրիչ հանդիսանալ, որպէս ի ստորև տեսանի։

ԳԼԽ Ը.

«Եթէ դէպ լեցի կատարել տիեզերական իմն ժողով ի լուծել վէճս ինչ կրօնական, նախագահ այսմ ժողովոյ ձնանալեմք գլխաջորդ գլեսոյն զերանելոյն Պետրոսի, ըստ օրինակի սրբազան նախնեաց մերոց. յոր միտս երգէ սուրբ եկեղեցի զսրբազան Առաքելոյն Պետրոսի «Գլուխ սուրբ հաւատոց, հիմն եկեղեցւոյ» (ի յոգ. Ե)։ Եւ այս խորհրդածութիւն և վճռաբար ասութիւն սոցին՝ միայն անմոռդասէր կրկից է ծնունդ, և ոչ հոգևորապէս վերծանութիւն խորհրդական բանից շարակնանց, կամ Աստուածաշունչն սուրբ գրոց։ Պետրոս էր սոցա նախ աշակերտիլ սրբազան Առաքելոյն Պօղոսի, և ապա ձեռնադրիլ յայտնիսի բանից քնութիւն, որ ուսուցանէ հիզնակութեամբ սուրբ գրոց յասելն. «Օ՜ի՞ զի՞ մարդկանէ զիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ ի նմա. նոյնպէս և ոչ զաստուածայինսն զգիտէ, եթէ ոչ Հոգին Աստուծոյ...։ Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապետութեամբ հոգւոյն ընդ հոգևորս զհոգևորս հաստատեմք» (ա. Կորն. բ. 11—13)։ Սրբազան Առաքեալն Պրիստոսի կամի ցուցանել այսու բանիս, եթէ մեք զոր ինչ խօսիմք, և ուսուցանեմք հաստատեմք, մի կարծեսցեն մարդիկ, եթէ մարդկեղէն ուսմամբ է, կամ ճարտարութեամբ բանից երկրաւոր իմաստից, այլ յայտնութեամբ Հոգւոյն սրբոյ, և անսխալ ուսմամբ և ճշմարտութեամբ բանից ներշնչելոց ի շնորհաց Հոգւոյն սրբոյ, զոր ըստ սիրոյից ժամուն

և պարագայից ազդէ 'ի մեզ նոյն սուրբ Հոգին ճշմարտութեան խրատով ամենաճաւալ ներգործութեամբք, ըստ Աւետարանական ճշմարտութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ «Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պահեսջիք, և ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ. զի ընդ ձեզ բնակեսցէ 'ի յաւիտեան. զՀոգին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել, զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճանաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ, և ընդ ձեզ եղիցի։ Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցանէ ձեզ զամենայն, և յիշեցուցանէ զամենայն, որ ինչ ասացի ձեզ. յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ՛ ձեզ ամենայն ճշմարտութեամբ» (Յովհ. ժդ. 15—17. 26 ժդ. 13)։

Այս եթէ հարկ լեցի զուսմանել զՀոգևոր ժողով՝ թէ՛ տիեզերական և թէ՛ ազգային՝ 'ի հոգևորական դասուց, պարտ և արժան է ջերմեռանդութեամբ հաւատոյ՝ յուսացեալ 'ի զօրութիւնս անսխալ ճշմարտութեան և ամենաբաւական խնամատութեան ներհեղական շնորհաց սուրբ Հոգւոյն՝ 'ի գլուխ ժողովոյն ունելով սանեկութեամբ բազմեալ զնոյն Հոգին ճշմարտութեան, հաւասարապէս դատել և տեսանել վասն իրին կամ խնդրոյն ընդ առաջ ելելոյ։ Զայս յայտնի տեսանեմք 'ի Գործս Առաքելոց 'ի քանի ինչ տեղիս, յորոց զմին ասասնոր արժան դատիմ յիշեցուցանել. «Յարեան ոմանք 'ի հիրեռուածոյն Փարիսեցւոց հաւատացեալք, և ասէին՝ պարտ է թլփատել զդոսա, և պատուիրել պահել զօրէնսն Մովսիսի։ Եւ ժողովեցան Առաքեալքն և երիցունքն տեսանել վասն բանիս այսորիկ... Յայնժամ հաճոյ թուեցաւ Առաքելոցն և Երիցանցն և ամենայն եկեղեցւոյն, արս ընտրեալս 'ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պօղոսի և ընդ Բառնաբայ, զՅուդա զկոչեցեալն Բարսաբա՝ և զՇիղա, արս գլխաւորս. գրեալ առ եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ։ Առաքեալքն և երիցունքն և եղբարք, յԱնտիոք և 'ի Սիւրեայ, և 'ի Կիլիկիայ, եղբարցդ — որ 'ի հեթանոսաց է՛ք, ողջոյն։ Քանզի լուաք՝ թէ ոմանք իրրև 'ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք՝ խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել և պահել զօրէնսն, որոց ոչ հրամայեցաք...։ Զի հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն 'ի կարևորացս յայսոցիկ. 'ի բաց կալ 'ի զոհելոյ կռոց, և յարեանէ, և 'ի հեղձուցելոյ, և 'ի պո-

ռընկուԹենք, յորոց պահեալ զանձինս բարւոք գործիցէք. ողջ լիցուք» (Գործ ԺԵ. 5. 6. 22. 23. 24. 28. 29)։ Տեսանեմ՝ զի 'ի ժողովս առ սրբազան Առաքելովք ոչ ոք կարէր զհաճոյս իւր յառաջ մատուցանել, այլ ամենեցուն խորհուրդ մտաց և կամաց՝ էր պաշտել զհաճութիւն կամաց սուրբ Հոգւոյն Աստուծոյ. վասն զաղօթս առ Նոյն Հոգին Աստուծոյ մատուցանէին, զի զհաճոյսն իւր և զօգուտն եկեղեցւոյ ազդեսցէ և յայտնեսցէ շնորհիւ իւրով. որպէս և 'ի ժողովին առ 'ի ընտրել զոք 'ի տեղի Յուդայի մատնչի՝ կացուցանեն 'ի միջի զՅովսէփ և զՄատաթիա, և ապա կանխեն յաղօթս առ Տէր, որպէս և գրեալ է. «Դու կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ւ Տէր՝ սրտագէտ ամենայնի՝ յայտնեա զմի ոք, զոր ընտրեցեր 'ի սոցանէ յերկոցունց, առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ և զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս գնալ 'ի տեղի իւր» (Գործ. ՇԵ. 24. 25)։ Ապա Աստուածարեալ Հոգիք սուրբք պարագլուխ և նախագահ ճանաչէին 'ի ժողովս իւրեանց՝ զընդհանրական գլուխն եկեղեցւոյ, զամենազօրն և զամենակարողն զՅիսուս Քրիստոս, ըստ անսխալ խոստման իւրում. «Զի ուր իցեն երկու կամ երիք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես 'ի մէջ նոցա» (Մատ. ԺԸ. 20)։ Եւ զսուրբ Հոգին Աստուած՝ ունէին անսխալ ուսուցիչ ճշմարտութեան և ազբիւր երկնաւոր իմաստութեան. «Իսկ մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուցցէ ձեզ զամենայն» (Յովհ. ԺԴ. 26)։ Եհա զայսր հոգևոր ժողովոյ ջերմեռանդն պարտաւորութիւն զիկուցանէ սուրբ հայրապետն Գրիգոր Շ Նորհալի՝ առ կայսրն Հռոմոց Մանուէլ այսպէս գրելով. «Եւ այս լինի արժանաւոր ձեզ և որոց ընդ ձեզ սրբոց առ Աստուած պաղատանաք, որպէս զի 'ի հանդերձեալ լինել ժողովոյն մերոյ՝ որ 'ի մեծն Հայոց և ընդհանուր կողմանց եպիսկոպոսաց և վարդապետաց, ինքնին Տէր՝ ըստ խոստացեալումն՝ եղիցի 'ի մէջ՝ զբանն խաղաղութեան տալով 'ի միտս և 'ի լեզուս ամենեցուն։ Զի ոչ մարդկային սխտիւ՝ անօգուտ բանակռուութեամբ և մնոտի յաղթասիրութեամբ, յորմէ ոչ ինչ օգտեցաւ եկեղեցի այսքան երկար ժամանակաւ, այլ Հոգւոյն Աստուծոյ խորհրդակցութեամբ խօսեսցին ամենեքեան վասն շնութեան ոգւոյ։ Եւ որպէս առ մեզ, սոյնպէս եղիցի առ ձեզ հանդիսական ժողով սուրբ. սկսեալ խորհրդոյս՝ նովին լիցի կատարումն։ Որով և Աստուած փառաւորեսցի յամենայն լեզուս

ազգաց՝ յեկեղեցիս արդարոց՝ 'ի միաբանութիւն հաւատոյ» (ԱՆԴՀ. տիպ Պոլսոյ. երես 120)։ Եւ սուրբն Մոսկէս Խորենացի Պերթողաշէնն մեր գրէ վասն Հարցն գտելոց յերիս հոգեգումար տիեզերական սուրբ ժողովս. «Որ խմանալի Աստուածային ծագմամբ 'ի շնորհաց Հոգւոյդ լցեալք, լցին զտիեզերս հաւատով Երրորդութեանդ։ Որք հրաշալի զորութեամբք Հոգւոյն սրբոյ զնաւարն անդիտութեան յաշխարհէ փարատեցին և ուղղղ հաւատոյ հիմամբ հաստատեցին զեկեղեցի, քահանայք և պաշտօնեայք օրհնեցէք և բարձր արարէք սուրբ զՀոգին ճշմարտութեան» (Շարակ.)։

Այս մի ընդ վայր ջանակուռ աշխատեսցին հաստատել զգրքոյսդ հոգեւորականաց եկեղեցւոյն Հռովմայ՝ իբրև յաջորդ սրբոյն Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի՝ 'ի պատահել տիեզերական ժողովոյն՝ 'ի նպաստ իւրեանց առնելով զայն տուն շարականին «Գլուխ սուրբ հաւատոյ՝ հիմն եկեղեցւոյ». զի ամենայն սրբք Եպիսկոպոսունք և ծայրագոյն Պատրիարգք՝ որք յաջորդք են Առաքելական Աթոռակալութեան, ունին ինքեանց զնրաւունս և զարտօնութիւն լնակատար հոգեւոր իշխանութեան 'ի վիճակի իւրեանց. իսկ 'ի հանդիսի տիեզերական ժողովի՝ հաւասարապատիւք են ամենեքին միմեանց։ Տես՝ զնարդ միակ և անհտա զլուխն Առաքելոյ սրբոյ՝ յարուցեալն Յիսուս՝ առաքէ զնոսին 'ի քարոզութիւն անկախ 'ի միմեանց. «Եւ ասէ ցնոսա. երթայք յաշխարհ ամենայն» (Մարկ. ԺԶ՝ 14)։ «Որպէս զիս առաքեցեր յաշխարհ, և ես առաքեցի զնոսա յաշխարհ... Եւ ես զփառսն զոր եառեալ ինձ՝ եառ նոցա, զի իցեն մի, որպէս և մեք մի եմք, ես 'ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք 'ի մի։ Եւ զիտասցէ աշխարհ՝ եթէ դու առաքեցեր զիս՝ և սիրեցի զնոսա, որպէս դու զիս սիրեցեր» (Յովհ. ԺԷ. 18. 22. 23)։ Տեսցէ զհամապատասխանութիւն և զմիօրինակ իշխանութիւն սրբոյն Առաքելոյն։ Սոբին ազագաւ և երանելի սրբոյն Առաքեալն Պետրոս համապատիւ ունելով զամենայն հոգեւոր առաջնորդս եկեղեցւոյ՝ ընդհանրապէս գրէ «Զերիցունս այսու հետեւ ազաչեմ՝ իբրև զերիցակիցս և զվկայս չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձելոց փառացն յայտնելոց հաղորդ» (Պետ. ա. կաթող. Ե. 1)։ Ընթերցիր և տես, զնարդ դեղեցիկ և ողջամիտ փարդապետութեամբ բացատրէ երանելի սուրբ Սարգիս Շնորհալին զսրբոյն Առաքելոյն

Պետրոսի «Օ՛ երիցունս այսուհետև աղաչեմ իբրև զերիցակիցս՝ և զվկայս չարչարանացն Քրիստոսի։ Երիցութեան անուամբ՝ թուի ինձ՝ եթէ համանպատուաբար ամենայն առաջնորդք եկեղեցւոյ կոչէին, զի չև ևս բաժանեալ էին անուանք ըստ աշխիմնացն, այսինքն՝ Պատրուգիկոսն, և Եպիսկոպոսն, և Քահանայն. վասն զի այսոքիկ բաժանմունք անուանց՝ յետոյ մտին ի նեղքս. այլ յաւուրս Առաքելոցն համանպատուաբար միով անուամբ երիցութեան զամենեսեան անուանէին, ոչ միայն զորս ձեռնադրէին յերիցութիւն, այլ և զանձինս իւրեանց։ Ա՛ չ միայն սա, այլ և որդին որոտման Աստուածաբան աշակերտն Յովհաննէս՝ ի սկիզբն երկոցունց թղթոցն իւրոց զայս անուն ի կիր արկանէ, որպէս և յորժամ ասէ «Յերիցուէ առ Գայիոս և առ ընտրեալդ Կիւրիա»։ Տեսէ՛ զի ոչ զառաքելութեան անունն՝ այլ զերիցութեանն ի կիր արկանէ։ Օ՛ սոյն և Պօղոս ակնարկէ առ Տիմոթէոս գրելով. «Օ՛ գոյշ լեր շնորհացդ, ասէ, որ տուաւ քեզ ձեռնադրութեամբ երիցութեանն»։ Եւ զայս զենքանէ ասէ. վասն զի անձամբ ձեռնադրեաց զնա յեպիսկոպոսութիւն Եփեսացւոցն։ Օ՛ի ոչ եթէ երիցունք տային ձեռնադրութիւն եպիսկոպոսաց, այլ եպիսկոպոսք՝ քահանայից։ Եւ մանաւանդ ի թղթոյն Գ՛ոմնէսիոսի, զոր գրեացն առ Տիմոթէոս վասն երկնային նահապետութեանցն, զայսոսիկ տիրապէս ուսանիմք. զի ի գլուխս ամենայն թղթոցն զայս անուն կարդէ. «ի Քահանայէ, ասէ, Գ՛ոմնէսիոսէ՝ առ Քահանայակիցդ մեր Տիմոթէոս»։ Եւ ահաւասիկ եպիսկոպոսք էին, և ոչ լոկ և եթէ քահանայք։ Բայց յայտ է յայտագանէ, եթէ զենքեանս իսկ կոչէին քահանայս՝ Առաքեալքն և աշակերտք նոցունց։ Զմին իրի և ասասանօր երանելին Պետրոս Առաքելոցս եկեղեցեացն գրելով՝ այսու անուամբս առ նոսա վարի, և զենքն սովին անուամբս ընդ նոսա ի հատոր արկանելով՝ ասէ. «Օ՛ երիցունս այսուհետև աղաչեմ՝ իբրև զերիցակիցս»։

Բայաքէն իրաւունս ունին հարցանել ինձ՝ եթէ զնարդ Պետրոս սրբազան Առաքեալն՝ ԷՐ-Ի այլոց Առաքելոց անուանի ի բազում տեղս, մանաւանդ ի շարակնոցի մերում. «Գ՛ԼԽ-Դ՝ ընտրեալ Հ՛օտին փոքու»։ Եւ այլն։ Որ գերագոյն ընտրելոց Առաքելոցն գասուց, անուանեցեր լինիլ զերանելին զՊետրոս, ԷՐ-Ի սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ» (Հ՛ատակ)։ Եւ ի յոտանաւորեալ բանս Դ՛ԷՐսիսի Հ՛նորհալւոյ. «Աշակերտաց ԷԷՐ-ԷՐ-ՆԻ՝ եկեղեցւոյ անդ-

շարժ վիճին» (Յե՛ որդի)։ Ու այս՝ ըստ սրբոց Հայց՝ պատասխանեմք թէ առաքեալ՝ Քրիստոս բան եղեալ է փոխանակ զլեառուն կամ դասական նախագահութեան, ըստ որում՝ ի դաս սրբազան Առաքելոցն յառաջադէմ ցուցաւ սուրբն Պետրոս, ի բերանոյ ամենեցուն զայն դասանութիւն տալով Յիսուսի՝ զոր յամենեցուն պահանջէր՝ որպէս գրեն սրբազան Աւետարանիչքն. «Եւ ասեալ Յիսուս՝ ի կողմանս Փիլիպպեայ Կեսարիայն, հարցանէր ցաշակերտսն՝ և ասէր. զո՞ զոր ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ։ Եւ նոքա ասեն. ոմն՝ զՅոհաննէս Մկրտիչ, և այլք՝ զԵղիա, և կէսք՝ զԵրեմիա, կամ զմի զոք ի մարգարէիցն։ Ասէ ցնոսա Յե՛. իսկ դուք զո՞ զոր ասէք զինէն թէ իցեմ։ Պատասխանի եւ նեա Սիմոն Պետրոս՝ և ասէ. դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ» (Մատ. ժզ.13—16։ Տես և Մարկ. ը. 27—29։ Ղուկ. թ. 18—20)։ Ուստի սրբազան Առաքեալն Պետրոս՝ պիտակաբար և եթ անուանի ՔՐԻՍՏՈՍ կամ ՔԻՆ—Ի Առաքելոց, և ոչ թէ ըստ առաւել կամ յատուկ իմն գերազանց քան զաշակերտակիցս իւր իշխանութեանն. զի ոչ թէ զգերազոյն իմն զԱռաքելական զշնորհս ընկալեալ էր ի Քրիստոսէ, այլ՝ միայն ըստ թուական դասակարգութեան Առաքելոցն և Աշակերտացն Քրիստոսի՝ —ԷՔ անուանեցաւ, որպէս գրէ Աւետարանիչն Մատթէոս. «Եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանք այսոքիկ. —ԷՔ, Սիմոն՝ անուանեալն Պետրոս, և Անդրէաս եղբայր նորա. Յակոբոս Զեբեդեայ, և Յովհաննէս եղբայր նորա» ևն. (Մատթ. ժ. 2.3)։ Զայս ամենայն հաստատէ, բայց ազգու գրէ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ Հայոց մեր. «Զոր Փոնտոսնոյ և խաչակիր Առաքելոցն, զորոց ՔԻՆ—Ի Պետրոս, և Անդրէաս, Յակոբոս, և Յովհաննէս, Փիլիպպոս, և Բարթուղիմէոս, Թովմաս, և Մատթէոս...։ Եւ այլ ևս որք նմանեցին սոցա, որք և եօթանասունքն ևս։ Որք առին իշխանութիւն ի Տեառնէ՝ գնալ ի վերայ իժի և քարքի, և կոխել զզօրութիւն թշնամւոյն, լինել լոյս երկրի, և հանմեալ յաղել զանկարգութիւն չարութեան անգիտութեան մարդկան, ազուն Աստուածութեան Հոգւոյն սրբոյ» (ՅԱգաթ. տիպ Պօլսոյ. երես 251)։ Եւ սուրբն Գրիգոր Նարեկացի՝ ըստ թուական նախագահութեան համարոյ Առաքելական դասուց՝ վասն առաջնութիւ լինելոյն սրբոյն Պետրոսի՝ գրէ «Սկզբնաթիւն և նախամեծարն, վէմն հաստատեալ և արձանն հիմնեցեալ, քարն

անուանի, եօթնեմեայ զաւանութեամբ յարմարագրեցեալ՝ ըստ չափոյ խորհրդական ամենակի այսր յաւիտենի սկսման և լրութեան, ընդարձակն և փառազարդեալն Սկիզբ» (՝ի Գործս ա. ագրելոյն)։ Ա. այս վկայէ և սուրբն Կիպրիանոս՝ ի բանս միութեան Եկեղեցւոյ (գիրք Գ.)։ «Արդարև այն ինչ էին այլ առաքեալք, որ ինչ եղև և Պետրոս, հաւասար ընկերակցութեամբ և իշխանութեամբ պերճացեալք, այլ սկիզբն՝ ի միութենէ յառաջանայ։ և գլխաւորութիւնն տուեալ լինի Պետրոսի»։ Ուստի և սուրբ ժողովն Նիկիոյ՝ ի վիճակորդ կանոնի իւրում այսպէս սահմանէ. «Հնոյնի սովորութիւն անշարժ մնասցէ՝ ի Եգիպտոս, ՝ի Լիբիա, ՝ի Պենտապոլիս։ զի եպիսկոպոսն Աղեքսանդրիոյ ունիցի իշխանութիւն՝ ՝ի վերայ ամենեցուն սոցա։ և եպիսկոպոսի քաղաքին Հռովմայ այս է սովորութիւն։ Նոյնպէս և յԱնտիոք և յայլ վիճակս աւագութիւնք իւրաքանչիւր եկեղեցեաց անփոփոխ մնասցեն»։ Եւ որպէս առ բարոյ կառավարութեան իւրաքանչիւր աշխարհական Պետութեան, կարևոր է զգուշաւոր պահպանութիւն սահմանադրութեանց ժողովոց հաստատելոց՝ ՝ի նոսնէի սովորութեան։ Այս վերահաս լինելով այսր ամենայնի՝ կարող եմք ասել և հաստատել թէ, ըստ այլ և այլ նախադասութեան՝ կարեն անուանիլ ՝ի՛ և ՝ի՛ կամ ՝ի՛ ՝ի շարս սրբազան Առաքելոց՝ ոչ միայն երանելին Պետրոս, այլ՝ նաև այլք ոմանք յԱռաքելոց, որպէս գրի՝ ՝ի Հարանոցին։ «Աշխարհակիր բանին բարկաց եղեալ հիմունք սրբոյն Սիմոնի, լերինք անշարժք, հովիտք ծաղիկաթիք, հարազատ վէմք հաւատոյ Պետրոս և Անդրէաս»։ Եւս և տես՝ զի և սուրբ Առաքեալն Յակոբոս, անուանեալն Եղբայր Տեառն, կոչեցաւ ՝ի՛ Առաքելոց սրբոց։ ըստ օրում առաջին եպիսկոպոս կարդեալին Երուսաղէմի՝ մեծ նախապատուութիւն տուցաւ, որպէս երգի՝ ՝ի Հարանոցի յորմնեալոյ՝ ՝ի Յովհաննէ իմաստասիրէ Օձնեցւոյ «Այս եղև ՝ի՛ Առաքելոց սրբոց, և կոչեցաւ Եղբայր Տեառն՝ ՝ի տանէ Դաւթի»։

Ասանօր բարեսիրական հանարիմք այժմ զայսչափս միայն։ իսկ եթէ որ կամիցի զառաջելն իմաստասիրել՝ ընթերցցի գործենեալն՝ ՝ի մէջ զ՝անդիսարանն ուղղափառութեան՝ ՝ի սոյոց եկեղեցւոյ, որ տպեալ է՝ ՝ի Կոստանդնուպոլիս յամի Տեառն 1854 (յերես 226—239)։

՝Ա՛նսպա՝ բարեմիտ ընթերցողք՝ փութասցուք ողջամիտ հոգւով վերծանել և զնոտիարատուստ յօրուանց տարամիտ զանուն-

թեանց նոցին՝ որ յանձնառնէր բղխումն սուրբ Հոգւոյն Աստուծոյ։ «Օրհնութիւն սուրբ Հոգւոյն՝ ընդունիմք, ասեն, ըստ դաւանութեանն Լուսաւորչի, զորմէ ասէ (նա)։ «Հայր յանձնէ, Որդի ի Հօրէ, Հոգին սուրբ ի նոցունց և ի նոսին» (ի Յոհ. Ի.)։ Ուստի ուսան զոքա զայսպիսի թերակատար խոստովանութիւն ուղղել առ ամենակատար բղխումն սրբոյ Հոգւոյն, և յի՛նչ միտս գեր քան զչափն անձնական կարողութեան իւրեանց՝ ժպրհեցան առ ամենակար ինքնագոյ Աստուածութիւն սուրբ Հոգւոյն Աստուծոյ ճշմարտութեան։ Եւ զեռքդ յանգնեցան զսրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի զկատարեալ բան դաւանութեան որ առ սուրբ Հոգին Աստուած՝ յայտնել կրնասցէ, և զմիջին կիստս բանս նորին առնուլ ի վկայութիւն ախորժակաց իւրեանց՝ առ ի հաստատել զբղխումն Հոգւոյն սրբոյ ի Հօրէ և Որդւոյ. որով չաբաչար սխալեալ իսկ են, և կարի վրիպեալ ի ճշմարտաբարոյ դաւանութենէ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի։ Վասն զի նոյն բովանդակ բանն ո՛չ հաստատէ զսրբոյ Հոգւոյն բղխումն ի Հօրէ և Որդւոյ, այլ՝ ամբողջ կատարեալ ուղղափառ վարդապետութիւն նորին՝ հայի ի կատարեալ խոստովանութիւն առ համագոյ և անբաժանելի միութիւն ամենասուրբ Երրորդութեան, և առ միասնական տէրութիւն Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ։ Պանդղ նա անդանօր քարոզէ և ուսուցանէ մեզ յայտնի և բացայայտ եկերօք՝ եթէ սուրբ Հոգին Աստուած փառակից՝ իշխանակից և համագոյակից է Հօր Աստուծոյ և Որդւոյ Միածնի։ Թող ընթերցցին և տեսցին, եթէ ի բանս սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի հաստատի բղխումն Հոգւոյն ի Հօրէ և Որդւոյ։ «Զայս վկայութիւն ասացեալ կարգեցաք, ասէ, ի ձեր լսելիս՝ զսուրբ հաւատս ճշմարիտս, զոր յայտ յանդիման վարդապետեցին մեզ սուրբ զիրք, սուրբ Հոգովն, վասն մշանջենաւոր արքայութեան Աստուածութեանն. որ յայտնեցաւ խորհրդով արդարոյ հարցն մերոց, և խօսեցաւ ընդ մեզ Որդւովն և սուրբ Հոգովն, և աւետարանեցաւ մարգարէիւք և Առաքելովք սրբովք, և տուաւ մեզ հաստատութիւն հաւատոց, զի հաւատովք ճշմարտեսցուք ի մի Աստուած Հայր և Տէր և Ամենայնի, և ի Միածին Որդին որ ի Հօրէ, և առ Հօր, և ընդ Հօր. և ի սուրբ Հոգին՝ որ ի նորին էութենէ, և նովաւ արար զամենայն արարածս։ Որ է մի տէրութիւն, մի զո-

թութիւն, մի իշխանութիւն, մի մեծութիւն, մի զիտութիւն, մի խորհուրդ, մի պետութիւն, մի անսկզբնական զօրութիւն. երեք կատարեալ անձինք, մի կատարեալ կամք, անսպատում անքննին միութիւն Երրորդութեանն. մի իսկութիւն, մի էութիւն, մի Աստուածութիւն. Հայր, Որդի, և սուրբ Հոգի. երեք անձինք. մի զօրութիւն Աստուածութեան; Հայր յանձնէ. Որդի 'ի Հօրէ. և Հոգին 'ի նոցունց և 'ի նոսին. իսկութեամբ՝ էութեամբ՝ Աստուածութեամբ՝ հարթ հաւասար, հաստատակ 'ի խորութիւնս, 'ի բարձրութիւնս, 'ի լայնութիւնս, յերկայնութիւնս. մի էութիւն բնութեան, մի պսակ Երրորդութեան. և լի են երկինք և երկիր փառաք նորա» (ԱՂՕԹՔ անգեղոս)։ Ամին նման ճիշդ և ուղղափառ դաւանութիւն առ ամենասուրբ Երրորդութիւնն՝ գրէ սուրբ Գրիգոր Նարեկացի հրեշտակակրօն վարդապետն մեր այսպիսի բանիւք «Խոստովանիմք և դաւանիմք, պաշտեմք և երկրպագիմք զզուարթաւոր միութիւն ամենասուրբ Երրորդութեանն։ Աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս խնամոյ թեւոց սլացման, 'ի վերս քան զօրինակ և անդր քան զնմանութիւն.... Հայր զթութեանց՝ ուռող ամենայնի, և Աստուած հանուրց, որ յերկնի և որ յերկրի, բաց 'ի Խանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի։ Առեղծիչ և տուիչ ինչոց ամենից, բաց 'ի Հոգւոյն իսկակից՝ որով զհամայնն կազմեաց։ Մինն յերջանկափառ համազօր ահաւորութենէ երիցն անձնաւորութեանց խոնարհեալ 'ի վերուստ՝ անդուստ 'ի ստորինս. որ էրն իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն ահռուոց, և անկարօտ դիմացն ծնողին իւրոց։ Մտեալ 'ի անեկակ կուսին արգանդի պարզարար, և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անորոշելի, անթերի մարդկութեամբն, և անպակաս Աստուածութեամբն. մի որդի Հօրն միայնոյ, և միածին անդրանիկ՝ Աստուածամայր տիրածին կուսին, արարիչն՝ յեղափանումն մարդ երով ճշմարիտ սկզբնածին...։ Խարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ Որդւոյ և ընդ Հօր՝ և զՀոգի էութեան նոցին, ամենազօր, ճշմարիտ, կատարեալ, և սուրբ. որ յանէից գոյացոյց զզոյսդ եղապքս ամենայն. ինքնագործ, հոմիշխան երկուցն ելս ընդ նմին՝ անեղծ և անտարման թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին, և Խանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն և Հոգին բարձրացեալ» (Նարեկ. ղԼ. ղԸ)։

Եւ Ներսէս Շնորհալի սուրբ Հայրապետն մեր զոյն զայս ուղղափառ դաւանութիւն առաջի դնէ մեզ ուսուցանելով այսպէս. «Հայր անսկիզբն և անծին, Որդի ծնեալ ի բնութենէ Հօր, այլ անժամանակ, նոյնպէս և Հոգին սուրբ՝ բղխումն ասի առ ի Հօրէ, և փառակից Որդւոյ։ Աստուած կատարեալ որպէս զՀայր և զՈրդի. մի կամք երից անձնաւորութեանցն, և մի զօրութիւն, և մի արարչութիւն»։ Այս ամենայն ուղղափառ դաւանութիւն Առաքելական սուրբ Եկեղեցւոյն մեր՝ է ճիշդ համեմատ բացատրելի աւետարանական ճշմարտութեանցս. «Դա և Հայր իմ մի եմք» (Յովհ. ԺԵ. 30)։ «Երիք են որք վկայեն յերկինս. Հայր, Բան, և Հոգին սուրբ. և սոքա երեքեանս մի են» (Յովհ. Ա՝ կաթող. Է. 7)։ Այսպէսն ի միտ առեր, հարազատ և անմոլար որդի Աստուծոյ լուսոյ կամաւորեալ սրբոյ Էջմիածնի, և տեսեր որպիսի խարդախ բանիւք յանդգնեալ են, յապաւելով և կրճատելով զողջամիտ վարդապետութեան բանից զամբողջ զգլուխ նախահայրապետին մերոյ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, և այլայլելով զմիտս կատարեալ և ուղիղ խոստովանութեան նորին, ժպրհեալ են կեղծիւք ինն հաստատակ զբղխումն սրբոյ Հոգւոյն՝ ի Հօրէ և Որդւոյ՝ գրելով այսպէս. «Բղխումն սուրբ Հոգւոյն՝ ընդունիմք ըստ դաւանութեան Լուսաւորչի, զորմէ ասէ «Հայր յանձնէ. Որդի ի Հօրէ. Հոգին սուրբ՝ ի նոցուն և ի նոսին»։ Ոչ խորամանկութեան նոցին. որով թողեալ ի բաց զբանս բացատրիչս մնաց խկութեամբ բառիցս՝ ի Ն-ց-ն-ն Ա ի Ն-ն-ն, որք են՝ ի-կ-ն-ն-մ-ք, ա-ն-ն-մ-ք, Ա-գ-ա-ա-ն-ն-մ-ք, հ-ր-ն հ-ա-ա-ա-ր»։ Ահա՛ նաեւ լեռնին յայլ և այլ կարծիս, զբանս խոստովանու՛ թ փառակցութեան Հոգւոյն սրբոյ ընդ Հօր և ընդ Որդւոյ՝ յեղափոխելով յաւանչութիւնս Աստուածային ելոզութեան. ոչ զիտելով՝ թէ կամք էին Լուսաւորին հոգւոց մերոց՝ յայտնել զՀամագոյ միութիւն և զանքննելի փառակցութիւն Հոգւոյն սրբոյ ընդ Հօր և ընդ Որդւոյ։ Զոր եթէ կամեցին սոքա զմտացածին և զնորաձև վարդապետութիւնս թողել ի բաց, և սրտի մտաք հիանալ ուղղափառ վարդապետութեան սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, և անկեղծ հարազատ որդի նորին անուանիլ, ուսցին ի նորին յայտնի և յողջամիտ վարդապետութենէ, զոր ուսուցանէ յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ, ըստ աւանդութեան սուրբ գրոց «Ձեռ զՀայրն կատարեալ, և զՈրդին ճշմարիտ, և զՀոգին հաւատոյ։ Նշանակեաց և զանտրոշական և

զմիաբուն Աստուածական զօրութեանն պայման ասելովն, «Լոյն 'ի Հօրէ և ելի յաշխարհ»։ Նոյնպէս և վասն ճշմարիտ Հոգւոյն, թէ՝ «Հոգին ճշմարտութեան որ 'ի Հօրէ ելանէ» (ՅԱգապ. յԻՋ 527)։ Նոյնպէս և վասն 'ի Հօրէ բղխման ճշմարիտ Հոգւոյն է իմանալ զՀետևեալս բան, «Որ 'ի Հօրէ ելանէ. ելանէ և ոչ բաժանի, բղխէ և ոչ սպառի» (անդ յԻՋ 529)։ «Մի է բնութիւն և գոյութիւն ամենասուրբ Երրորդութեանն, և իւր է ինքնութիւնն և յիւրմէ գոյութենէ։ Օվ 'ի սկզբանց ունի զպատճառն գոլ Հայր զԱրդւոյ և զսուրբ Հոգւոյ» ('ի Յաճախ. ճառ ա)։ Հայտնի է իմաստնոց սրբոց, որք ունին զգիտութիւն զրոց սրբոց Մարգարէից և Աւետարանաց, և վարդապետաց, եթէ մի է բնութիւն ամենասուրբ Երրորդութեան՝ զօրութեամբ և փառաւ և մշանջենաւորութեամբ. անփոփոխ ճշմարտութիւն. կեանք և կեցուցիչ մարդկան և ամենայն կենդանեաց. «Հայր է Հայրն միածին Արդւոյն, և բղխող սուրբ Հոգւոյն. պատճառ նոցին իսկութեանց 'ի նոյն բնութենէ» (Յաճախ. ճառ է)։ 'Ի սոյն միտս գրէ և Դիոնիսիոս Հռոմայեցի Հայրապետն մեր 'ի թուղթն առ Մանուէլ Կայսրն Հռոմոց. «Խոստովանիմք, որպէս և ուսաք 'ի Հարցն սրբոց, զՀօր յայտնութիւն անձնաւորութեանն՝ անծին և անսկիզբն, և զԱրդւոյ՝ ծնունդ անսկզբնականին Հօր անեղապէս և անժամանակ, և զՀոգւոյ՝ բղխումն և ելումն և արտաքո առաքումն 'ի Հօրէ անձնաւորաբար»։ Դէս անդ. «Հայր պատճառ, և Որդի և Հոգի 'ի պատճառէն, անժամանակաբար և առանց պատճառի»։

Դէ սուրբն Գրիգոր Նարեկացի ուղղափառ դաւանութեամբ յաղօթամատոյց բանս իւր գրէ այսպէս «Աստուած բարերար հրաշալի ահաւոր, Հայրդ բարի՝ ողորմութեանդ շնորհի, որոյ անուանդ իսկ մեծիդ՝ զգիտութիւն և զնտանութիւն աւետարանէ, քաղցր դժնեայց և անգոհացողաց։ Լնդ քեզ և Որդիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրև զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ՝ ընդ արարչութեանդ քում՝ բարձրացեալ։ Դէ Հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ 'ի քէն անապատութեամբ, կատարեալ իսկութիւն գոյի, էութիւն մշանջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից Արդւոյ քոյ տէրութեամբ» (Նարեկ գլ. ժդ)։ Դէ սուրբն Խորենացի քիչթողահայրն մեր Մովսէս՝ զուղղափառ դաւանութիւն յաղագս բղխման Հոգւոյն սրբոյ՝ գրէ 'ի Շարականի երից տիեզերական սուրբ ժողովոց. «Ելյսոր զՀոգին ճշմ-

մարտութեան դաւանեցին սուրբ Հայրապետքն՝ Ծաղումն առ 'ի Հօրէ յառաջ բոլորեալ անհատաբար. ընդ նմին յաւէտ մշանջենաւոր փառակից Որդւոյ»։ Տեսեր բարեմիտ ընթերցող՝ զի Հայոց Արաքելական եկեղեցւոյ հարազատ որդիք՝ տիեզերական սուրբ Ժողովոց Հարց սրբոց միշտ ձայնակից գտանին և միաբան։ Օ՛հ 'ի Ժողովն Նիկիոյ զայս միայն ասացին. «Հաւատամք 'ի Հոգին սուրբ»։ Իսկ 'ի Ժողովն Կոստանդնուպոլսի յաւելմամբ այսպէս վճռեցաւ. «Հաւատամք և 'ի Հոգին սուրբ՝ Տէրն և կենդանարարն, 'ի Հօրէ ելօղն, ընդ Հօր և ընդ Որդւոյ երկրպագակիցն և փառաւորակիցն»։ Ուրեմն ուղղափառ և Արաքելական սուրբ եկեղեցին Հայոց՝ հետևելով սուրբ գրոց և նախնի սրբազան Հայրապետաց, և մանաւանդ երից տիեզերական սուրբ Ժողովոց, իրաւամբք և ուղղափառ վարդապետութեամբ՝ զսուրբ Հոգւոյն բղխումն՝ 'ի Հօրէ՝ խոստովանի։ Եհա զայս ամենայն ուղղափառական իրաւունս Հայաստանեայց Արաքելական սուրբ եկեղեցւոյ ճանաչելով յուսիւ բորդ դարուն իրաւասէր Լևոն Գ. Պապն Հռովմայ եկեղեցւոյն, ընդհանուր հրաման եհան՝ զի բնաւ մի համարձակեսցի ոք յաւելուլ 'ի հանգանակն հաւատոյ զմասնիկն «յՈրդւոյ»։ այլ՝ «Ինստ բնագրին, ասէր, մնասցէ, որպէս զի մի նորաձայն վարդապետուի համարեալ՝ շփոթութիւն ինչ պատճառեսցէ»։ Բայց այնուհետև ոչ ոք համարձակեցաւ յօդել և կցել 'ի հանգանակն «Ի յՈրդւոյ», մինչև ցդարն երիքտասներորդ, որպէս և գրեալ է 'ի վճիռս Պապին։ Մանաւանդ յայտնի է ամենեցուն՝ զի նաև Դիզինէոս Գ. Պապն ոչ բնաւ պահանջէր յայգէ մերմէ յաւելուլ 'ի հանգանակն զայս մասնիկս «յՈրդւոյ», «Որովհետև՝ ասէր՝ զօրաւոր պատճառս և փաստս ունին Հայք չընդունել զմասնիկն «յՈրդւոյ»։ Դ՚ զայս կարես՝ թէ կամիս՝ գտանել 'ի գրաւոր գործս այսր Դիզինէոսի ճշմարտասէր Պապին, որոյ սիրոյ նամանն առ ազգս Հայոց՝ ըստ կանի այսպէս. «Ջնծացէք առ Աստուած, օգնական է մեր»։

Արդաքէն, բարեմիտ ընթերցողք, հնարաւոր է զարան յօդուածոցս՝ յի՞նչ միտս արդեօք այսր անգր թափառին՝ զնորաձև զմբատացածին վարդապետութիւնս որոնել, և այնպէս պատրել զպարզամիտս. մանաւանդ զի՝ ոչ խնդրեն առ այս իւրեանց ձեռնարկս զօրութիւն Աստուածային զօրութեան, ըստ մարգարէին Դաւթի ազաղակելով «Օգնութիւն ինձ 'ի Տեառնէ եկեսցէ՝ որ արար զերկինս և զերկիր» (Սաղմ. ճԺ. 2)։ Դ՚ ոչ իսկ փութան հետևիլ

հոգեշունչ և բարեբորդոր խրատական բանից երանելի Առաքելոյն Պողոսի՝ որ գրէ. «Պատիցուք այսուհետև համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհացն նորա, զի ընկալցուք զողորմութիւն, և գտցուք շնորհս ի դէպ ժամանակի, օգնականութեան» (Եբրայ. դ. 16)։ Տես՝ զի՞նչ խնդրեն սոքա. թողեալ զկոգեւորն զօրութիւն Աստուածային շնորհաց՝ զմարմնաւորացն և զաշխարհական զօրութեանց զօգնականութիւնս ստանալ ջանասիրեն. որով և յայտնի առնեն զփարակիրն իւրեանց ի թիւր ճանապարհս՝ ըստ առակաբանութեան Սողոմոնի, «Որ գնայ արդարութեամբ, օգնութիւն գտցէ. իսկ որ գնայ ի ճանապարհս թիւրս, նոքիմբք վարակեսցի» (Առակ. իբ. 18)։ Թողուա՞ ասասնոր իմաստասիրել հոգեհանճար մեռաց բարեմիտ ընթերցասիրաց զեարդսն ձեւակերպութիւն բանից և զեորտանեկ ձեռնարկութիւնս սոցին, զորս ի ստորև ունիս տեսանել. զի իրրև վերջաբանութիւն կեղծապատիր բանից իւրեանց՝ սկսանին այսուհետև և ի Հռոմէական եկեղեցւոյն խորշել, առ ի ցուցանել՝ իբր թէ չեն խպաս սարտուցեալք ի գրկաց Հայրենի եկեղեցւոյ. ուստի և հետևեցուցանեն։

ԲԱՆ Գ.

«Իսկ տարբերութիւն մեր ի Հռոմէականաց՝ առ այժմ այս է։ Նախ՝ զի զտուրբ Աստուածն խաչեցարիւ երդեմք այսպէս. «Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ Որդիդ՝ որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ»։

Երկրորդ՝ զնորհուրդ սրբոյ պատարագի անարատ գրեսեալ կատարեմք, չխառնելով յայտնապէս զջուր ի բաժակն։ Եպա այսուհետև չունիմք զհաղորդութիւն ինչ ընդ եկեղեցւոյն Լեռնական Հայոց, այլ ընդ իշխանութեամբ ազգապետին մերոյ, առաջնոյ ծառայիսք Յիսուսի Քրիստոսի և մերոց խղճմտանաց՝ ըստ Տեառն պատուիրանի։ Ուստի նեղբին հանգամամբ և մանրաբար խղճմտանաքս ստորագրեալ կնքեմք զայս զիր ուղղափառ դաւանութեան՝

ուխտիւք և երդմամբ· որով և խնդրեմք Թախանձանօք 'ի խնամակալ կառավարութենէ մեծի Օսմանեան՝ շնորհել մեզ զաղգապետ 'ի հաւատարիմ հպատակաց նորին Օգոստափառ Տէրութեան· որ չհայելով 'ի կրօնս իւրաքանչիւր անձանց՝ խնամէ հաւասարապէս զամենայն անխտրդախ հաւատարիմս իւրում հզօր և արդարասէր կառավարութեան»։

Ահա ակն յայտնի երևի առաջի մտաց ճշմարտասիրաց՝ զի 'ի բանս յայտսիկ ոչ գոյ ճշմարտութիւն սեպհական կատարեալ քրիստոնէական սուրբ կրօնից, այլ ստուի և խարդախութի, որով տեղի տան ստանոյգական չարագործիկ թելադրութեանց· յաղագս որոյ խրատէր Աստուածն Պօղոս զամենայն հաւատացեալս՝ ոչ միայն հեռանալ 'ի սուտակապատ բանից, այլ և խորհել զճշմարտութիւն և խօսել զնոսա։ «'Ի բաց ընկիցէք զստութիւն· խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում» (Եփես· դ· 25)։ 'Ի սոյն միտս՝ զսոյն հոգեշունչ յորդորակս գրէ և սրբազան Աստուածն Պետրոս «'Ի բաց թօթափիլ այսուհետև զամենայն չարութիւն և զամենայն նենգութիւն, և զկեղծաւորութիւն, և զնախանձ, և զամենայն չարախօսութիւն· իբրև զարդի ծնեալ մանկունս խօսունս, և անխարդախ կաթինն փափագիցէք· զի նոքա աճիցէք 'ի փրկութիւն» (ա· Կաթող· բ· 1· 2·)։

'Ի բանս սոցին կրկին խարդախութիւն տեսանի· առաջինն է՝ ծածկել զնիրքին խորհրդոց իւրեանց զնենգութիւնս, և որսալ զկամս և զյօժարութիւն տկարամտաց, մանաւանդ թէ զհարդախութիւնս և զստութիւնս իւրեանց՝ առաջի իրաւասիրաց իբրև զճշմարտութիւն հանդիսացուցանել· որոց պատասխանէ երանելին Յոր «Դու Տէր փոփոխէ զիարդս խորամանկաց, և ոչ գործեսցին ձեռք նոցա զճշմարտութիւն» (Ե· 12)։ Իսկ իմաստունն Սողոմոն զգործս չարութեան խորամանկաց յանդիմանէ յայտնի «Աչք խորամանկ նիւթէ զչարիս, և լապտեր նենգութեան բորբոքէ զչարութիւն և քակէ զարեկամս» (Առակ· ժզ· 28)։ Թէպէտ ծանիցեն սոքա, զի յայտնի եղև խորամանկութիւն և մոլորական խորհուրդ կամաց իւրեանց առաջի ամենեցուն, որոց աչք 'ի գլուխ են· ոչք ահա նոցին խարդախ զարարութեանց տան պատասխանի՝ երկրորդելով զարարչական առածս Աստուածաբանից· «Որ կամի խաբել զամենեսին, արդար դատաստան Աստուծոյ լինի, զի ինքն խաբեցի առաւելապէս։ Ոչ զի յիմաստնոց հաւատայ այնմ, յորում չիտես հաւատարմութիւն։ Խորամանին ծաղր լինի խորա-

գիտաց, և 'ի բաց կապտի պատրաստին յերկնաց նորա՝ ուր ոչն կարծէր։ Աստուած ոչ խարի... ակն այն ամենատես ամենայն ուրիք ընդ մասնէ։ Զգոյշ լեր անձին քում, 'ի բաց արա զպատրաստակդ կամ զդիմակդ. ապա թէ ոչ՝ հարկանելոց է զքեզ Աստուած, որմէ բռնալ. լեր որ ինչ երևիսդ, կամ երևեսջիր որ ինչ եսդ» ('ի Տարեկան առած. տպեալ 'ի Վենետիկ երես 121)։

Հիշեսցի աստուծոյ նախադրուշացուցանող բան՝ բնական օրինակաւ ապացուցեալ՝ երանելի սուրբ Հայրապետին Յովհաննու Ոսկերերանի, որ 'ի մեկնութեան թղթոցն սուրբ Առաքելոյն Պօղոսի առ Տիմոթէոս. յորում գրէ «Ողորմութիւն կամակոր՝ որ փոքր է զառաջինն, մեծ լինի 'ի փախճանի, իբրև զիծ 'ի կեռէ խոտորեալ, որչափ երկայնի՝ առաւել թիւրի»։

Բդ՝ եկեսցուք յերևան հանել նաև զերկրորդ նենգաւորի խարդախելիր և փառասիրութիւն մատաց նոցա, որով հաստատել ջանան զնորաձև իմն կրօնս, ըստ ամենայնի տարբերս, ոչ միայն 'ի քրիստոնէական սուրբ կրօնից այլոց ազգաց, այլ և 'ի բուն իսկ ազգին իւրեանց ՅՈՒԱՔԵԱԿԱՆ սի կրօնից. ուստի գրին անխիղճ մտաւք՝ անարկիւղ ՅՈՒՅ և անպատկառ 'ի մարդկանէ՝ եթէ «Ազգս հեռաւ չունիմք զհաղորդութի ինչ ընդ եկեղեցւոյն Էջմիածնական Հայոց» Զի՞նչ ասել կամին Էջմ-ածնէ՝ հայոց ասելով. զի բուն իսկ քրիստոնէական եկեղեցին Հայոց՝ բնիկաւոր արդեամբք առաջին լուսաւորչայնն՝ սրբազան Առաքելոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի և նախահայրապետին մերոյ սրբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչի քարոզութեանց է՝ հաստատեալ, և Միածնաբէջ անզուգական շնորհիւն կրկին փառաղարդեալ։ Ապա իրաւամբք զուրատի Էջմիածնական Հայոց ուղղափառ եկեղեցին իբրև լուսանկար Այր և շահմարան շնորհայն Աստուածայնոց, յորմէ արբեալ զմայլեն ամենայն հարազատ և անմեղաբար որդիք ազգիս Հայոց, որպէս գեղեցիկս երգարանէ Շարակնոցն մեր գեղապանծ դրուատիւք. ըստ այնմ «Էջ Միածինն 'ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա. ձայն հնչեցին սանդարամէտք անդնդոց։ Տեսեալ զլոյս մեծ՝ Հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային։ Եկայք շինեսցուք սուրբ զնորանն լուսոյ. քանզի 'ի սմա ծագեաց մեզ լոյս 'ի Հայաստան աշխարհի»։

Ովք խորդաբութեան սոցին, որք զարբոյ Հօրն Գրիգորի Լուսաւորչի անտանելի չարչարանաքն և հոգեբուղխ քարոզութեամբն

հաստատեալ զեկեղեցին մերժեն, և օտարանան անտի, և զենքանս անուանեն Լ------ՐԵԼԻՆ ՀԱՅ։ Եթէ Լուսաւորչական Հայք էին, պարտ էր նոցա հնազանդել նորին հոգեկիցոյց պատուիրանացն՝ որպէս աւանդեալ ունի. «Լակ ոլք ստահակին և մոլորին ի չարիս, և նենգելով լինին բանարկուք, և մոլորեցուցանեն զայլս յուղեղ հաւատոց և ի սուրբ վարուց... և լինին խոովարարք և բարկացողք և պղտորիչք պարզամտաց, զրիւացն զկարգ ունին, և նոցին են ժառանգողքք ի յաւիտենից տանջանան, եթէ յանմարմնոց և եթէ ի մարմնաւորաց» (Յուդասի. ճառ. ե)։

Ապաքէն եթէ սուրբ գիրք վճռարար յանօրինաց՝ յանհնազանդից Աստուածային հրամանաց՝ և յամբարշտաց կարգս դատապարտեալ դատեն զանարգողս զմարմնաւոր ծնողս, այսինքն՝ զհայր և մայր (Եղեց. իա 15. 17։ Առակ. է. 10։ իա Տիմոթ. ա. 9)։ ապա քանի՞ առաւել զայնս՝ որք զհոգևոր ծնողս իւրեանց անարգին։ Որպէսզի Աստուածային հրամանաց պարտաւոր եմք՝ զհոգևոր Մայր մեր զսուրբ եկեղեցին պատուել և մեծարել՝ ըստ ամենայնի հնազանդելով նմա, յորում յանուն ամենասուրբ Երրորդութեան՝ սրբարար մկրտութեամբ զհոգևոր վերածնութեան շնորհն ընկալաք, Հօր Աստուծոյ ամենակալին յորդեգրութիւն վերակոչեալ եմք, որով և ի շնորհական եղբայրակցութիւն Որդւոյն Աստուծոյ Փրկչին մերոյ Յիսուսի համարձակեալ՝ հոգևոր տաճար անուանիմք սուրբ Հոգւոյն Աստուծոյ։ Ապա և ես յուշի ունելով զբան իմաստնոյն Սողոմոնի «Որ մերժէ զհայր կամ զմայր՝ և համարիցի չմեղանչել, կցորդ է նա արանց ամբարշտաց» (Առակ. է. 24), խնդրեմ՝ ի հարազատ որդւոց սուրբ եկեղեցւոյն մերոյ՝ յիշել և ընթեռնուլ զհոգեշունչ բանս հրեշտակակրօն սուրբ վարդապետին մերոյ Գրիգորի Նարեկացւոյ. որ յիտ բազում վարդապետութեանց, ի մեկնութեան Երգոց երգոյն Սողոմոնի ի բնաբանիս եթէ «Ես է ազաւնի իմ» և այլն, սկսանի վարդապետել այս պէս «Չի թէ փառօք ոչ են մի սուրբքն, այլ մի ծնունդք են սուրբ եկեղեցւոյ, և յայսմ եկեղեցւոյ ի մի եկեղեցին փոխին՝ ի վերին Երուսաղէմ։ Վասն այսորիկ պիտոյ է զեկեղեցին առաւել սիրել քան զմարմնոյ ծնողն՝ վասն հոգեպէս ծնողութեան։ Չի որպէս հոգի առաւել է քան զմարմին, սոյնպէս և հոգւոյ մայր՝ քան զմարմնոյ մայր։ Երդ՝ որպէս որք ի մեր կոխանցն և ի ստեանց նորա օտարանան՝ զմահ ճաշակեն, նոյնպէս և որք յեկեղեցւոյ և

'ի նորա ստեանցն և 'ի հոգևոր կերակրոցն, 'ի սուրբ գրոց (որք են ստինք եկեղեցւոյ) օտարանան, և ոչ փափագմամբ և բաղձանօք դիմեն առ նա և կերակրին գրովք, ոչ կալեն կեալ, այլ մեռանին զանմահ մահն։ Օ՜այսոսիկ և մարգարէն տեսանելով՝ աւաղէ ասելով «Օտարք եղեն մեզաւորք 'ի մօրէ, խաբեցան յարգանդէ, և խօսեցան սուտ». այսինքն՝ գգաւանութիւն և զուխտն՝ զոր ուխտեցին 'ի Ծննդեան աւազանին, սիրել զՔրիստոս Աստուած, և զմայր եկեղեցի, ստեցին, և օտարացան. զորս արտաքոյ գտեալ սատանայի 'ի մօրէն՝ այսինքն՝ յեկեղեցւոյ՝ գերի առեալ տանի, որպէս զմարդափաձառս, որք զոգանան զմանկուէս՝ զորս հեռագոյնս 'ի Ծնողացն գտանեն» ('ի մեկն. Երգոց երգոյն)։

Ահա համառօտայն սոցա բանից՝ գրէ և մեծն Խոսրով Անձևացեաց եպիսկոպոսն. «Բայց վա՜յ ինձ, վա՜յ այժմս ժամանակիս, որ ըստ մարգարէին կանխասացութեանն՝ օտարացաք 'ի մօրէս, և յայսչափ պարգևացս զմեզ օտարացուցաք. զի թէ և այլ ինչ չունէաք յանցումն, այս միայն բաւական էր մեղաւորս առնել զմեզ։ Վասնզի և աստանօր մարգարէս ոչ վասն այլ իրիք, այլ վասն 'ի հոգևոր մօրէս օտարանալոյ, կոչեաց (մեղաւորս). «Օտար եղեն, ասէ, մեղաւորք 'ի մօրէ. խաբեցան յարգանդէ, այսինքն՝ յաւազանէն։ Վասնզի զօրիցն 'ի շնորհաց՝ օտարացեալքն յեկեղեցւոյ, և առեցեալ լինին իբրև զնորթն՝ վասն զնոսա արհամարհանացն» ('ի մեկնութեան, Յամագ. երես 79)։

ՎԵՐՋԱԲԱՆ

—

Ապաքէն աստուծոյ 'ի վերջաբանութեան սոյն այս գրութեանց մերոց ստիպիմք յանձնահանջելի պարտաւորութենէ հոգևոր պաշտամանց մերոց՝ նախ առաջին սրտի մոռք ազօթս առնել վասն նոցա, մտմտելով 'ի փրայ մտրրամիտ գնացից օտարացելոցն 'ի ճշմարտութենէ, սատանայական աւանդութեանց և յողջամիտ ուղղափառ վարդապետութեանց նախնի սրբազան ՀՍՈՅ, որով հեռացեալ գտանին 'ի լուսաշաւիղ և յուղիղ ընթացից հաւատոյ կաթուղիկէ եկեղեցւոյ։ Սոքա յաղագսյնոց մերոց եղբարք էին և ընդ մեզ ևս պաշտէին զճշմարիտ հաւատս՝ խոստովանելով զՀՍՈՅ և զՍՈՂի և զսուրբ ՀՈԳԻՆ, համաձայն նախնի սրբոց ՀՍՈՅՆ մերոց։ Ապա մեզ յաւէտ պատկանի՝ ըստ սրբազան Առաքելոյն Պօղոսի՝ սրտի մոռք ազօթել առ Տէր Աստուած վասն ուղղութեան և դարձի նոցին։ «Եղբարք, իմ կամք սրտի, և ազօթք առ Աստուած վասն նոցա են 'ի փրկութիւն։ Վասնզի վկայեմ նոցա՝ եթէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գիտութեամբ, զի տգէտ են Աստուծոյ արդարութեանն, և զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան. քանզի կատարած օրինացն Քրիստոս է յարդարութիւն ամենայն հաւատացելոց» (ՀՌՈՄ. Ժ. 1—4)։

Եղկլորդ հոգևոր հոմուացս են կարևոր պարտք՝ քաջալրեալ հոկողութեամբ 'ի փրայ սայթաքելոց յուղիղ դատողութենէ խլրդմտանաց՝ անմոլար պահել զբանաւոր հօտս, զորս յանձնեալ մեզ ունիմք 'ի փրնտիրատեսութենէն։

Զայս պարտաւորութիւն հոգևոր հովուաց՝ իւրաքանչիւր եկեղեցեաց առաջնորդաց, պաշտօնեիցն Քրիստոսի՝ եպիսկոպոսաց՝ վարդապետաց և քահանայից՝ ապդ առնէ սրբազան Առաքեալն Պետրոս կարի իմն խոնարհ յորդորանօք յասելն «Զերիցունս այսուհետև աղաչեմ, իբրև զերիցակիցս և զվկայս չարչարանացն Քրիստոսի, որ և հանդերձելոցն փառաց յայտնելոց հաղորդ։ Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ, վերակացու լինել՝ մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ. մի իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. զի յերևել Հովտապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն զպսակ» (Պետր. ա. կաթող. ե. 1—4)։

Կամին զսորին առաքելական խրատուցն զբացատրութիւն կալևոր պարագայիւք յաւէտ 'ի միտ առնուլ. ընթերցիր զբացայայտ ծանօթութիւնս Սարգսի Հ Նորհալւոյն, զոր 'ի մեկնութեան այսր բանի գրէ ըստ այսմ։ «Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ։ Դ մարմնական հովուութեան գործոյ ասսի զհոգևորսն խնդրէ 'ի նոցանէ զգործս հովուութեան. վասն զի անբան ոչխարացն հովիւք ոչ միայն 'ի դալար վայրսն արածեն զհօտս, և 'ի ջուրս հանդրստեան տնուցանեն, և 'ի փարախն ժողովեն, այլ և զգայլսն 'ի բաց վարեն, զկաղն պատեն, և զբորոտն ողջացուցանեն, և այլս սոյնպիսիս բազում խնամս ցուցանեն։ Նման այսոցիկ՝ և կամ թէ ևս առաւել բանաւոր ոչխարացն հովիւք պարտական են խնամս առ հօտն ցուցանել, 'ի պատուիրանս Աստուծոյ իբր 'ի դալար վայրս արածել, և 'ի վարդապետութիւնն իբրև 'ի ջուրս հանգստեան տնուցանել, և յեկեղեցին իբրու 'ի փարախ ժողովել, զբեկեալն մեղք՝ պատել, և զբորոտութեամբ խայտաբղէտ եղեալն՝ ողջացուցանել, և զչար գազանն՝ զբանսարկուն՝ և զդասս հիդեռաձողացն փախուցանել։ Այս է ասելն. «Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ». որպէս թէ ասել՝ որ 'ի ձեզդ հօտդ Աստուծոյ յանձն արարեալ՝ հաւատացաւ, պարտիք արթնութեամբ հոգալ, 'ի գիշերի և 'ի տունջեան տատապել։ Զի Աստուծոյ է հօտդ, ապա և դուք Աստուծոյ պարտական էք հաշիւս տալ։ Ապա ոչքան զգուշութեամբ պէտք են ձեզ՝ զի մի զոք յոչխարացն կորուսանիցէք։ Այսմ և աստուածընկալն Պօղոս վկայէ. «Զգոյշ կացէք, ասէ, ամենայն անձանց և հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդն, զոր ապրեցոյց իւրով արեամբն Աստուծոյ

բանն։ Տեսանեմ զահագին երկիւղին արժանաւոր՝ զայս պատուէր։ Աստուծոյ բանն ասէ՝ զոր արեամբն իւրով ապրեցոյց, և քեզ յանձն արար պահպանել. և դու եթէ անփոյթ առնելով կորուսանես, որում՝ ներելոյ արժանաւոր գտանիցես։ Այս է ասելն «Բրածեցէք որ ի ձեզ հոգ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ»։ Յամենայն պատուիրաններս Աստուծոյ՝ կամաւ գործելն՝ է գովութեան արժանաւոր, և մեծաց վարձուց առիթ, իսկ ակամայն ընդ բամբասանօք է Աստուածայինսն, նմանապէս և ի մարդկայինս. նա՛և Աստուած իսկ ոչ կամի զոք ակամայ և բռնադատելով ծառայել իւր, այլ զկամաւորն խնդրէ։ Զորին աղագաւ ամենայն ուրիք պատուիրանն իւր յարակցէ և ի կամն լսողին ապաստան առնէ զառնելն և զոչն։ Զմին իրի և ասա զայն զկամաւորն պահանջէ յառաջնորդացն զվերակացութիւն հօտին, իսկ զակամայն խոտեալ արհամարհէ։ Զորին վասն ասէ. «Մի իբրև ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ»։ Զայս և Պօղոս զանձնէ ասէ «Եթէ կամաւ առեալ եմ՝ վարձք են ինձ, և եթէ ակամայ՝ անտնտութիւն յանձն է ինձ։ Տեսանես՝ զի ի կամաւորն եղ զարիստուր վարձուց հատուցումն, և ոչ յակամայն։ Իսկ ըստ Աստուծոյ ասելն՝ այն է, եթէ զոր Աստուած կամի և խնդրէ ի ձէնջ՝ կամաւորն է, և ոչ ակամայն։ Զի զոր օրինակ ինքն Աստուած ոչ ակամայ և ի հարկէ յանձն արար ձեզ զհօտն իւր, այլ կամաւորաբար, և ի վերայ այնորիկ խնամարկէ հօտին և յանձանձէ և պահպանէ յամենայն վնասակարաց. նմանապէս և ի ձէնջ զվերակացութիւն հօտին իւրոյ պահանջէ. զ՝ ՀԵՏՈՒՆ, այլ յՀԱՅՐՈՒԹԻՒՆ։ Զոշաբաղութիւնն ի բաղում իրս առաղրի, բայց յայսմի տեսակաւ ասէս ինչս ժողովելոյ ասել՝ և ըստ մասց դիւրի շրջելոյ խնամաւ զբանն՝ ոչ ինչ վերսկեցուցանել ի ձշմարտութենէն։ Զի յայսոլիսի չարիս անկանել՝ առն վերակացուի և վարդապետի՝ առաւել իմն զեղծէ զնա յերկնաւոր կոչմանէն. վասն զի զձրի առեալ զշնորհսն՝ վաճառականութեամբ մատակարարել և տալ՝ ոչ է առանց մեղադրութեան և բամբասանաց, այլ ի ներելոյ անկեալ կայ պատուիրանազանցութեան Տէրունական աւանդութեանցն՝ զոր աւանդեաց իւրոց աշակերտացն, ասելով. «Զձրի առէք՝ և ձրի տուք»։ Իսկ Աստուածայն նորուն ևս առաւել դատապարտեալ զանցառսն ըստ Տէրունական օրէնսն՝ այսպէս ասելով բանին. «Աչ եմք իբրև զայլսն՝ որ վաճառական

լենին բանին Աստուծոյ»։ Տեսանեմ՝ զի օտար վարկաւ զայնպիսին եկեղեցւոյ Աստուծոյ՝ և Առաքելական քարոզութեանն։ Զմին իբրև և առ ի սոյն միտս պատուիրեալ, առաջնորդացն՝ մի՛ ի պատճառս ազատութեան ունել զառաջնորդութիւնն և զորոյ և որովայնի ազագաւ զոչաբարոյութեամբ շրջել ի մէջ ժողովրդեանն, այլ յոժարութեամբ և ցանկալեաբար ունել զվիճակացութիւն հօ § ին իբրև Աստուծոյ հաղորդացեալ։ Ա՛ի իբրև տիրելով վիճակին, այլ լինել օրինակ հօտին. զի յիրեալ հօտացեալին՝ ընդունիցիք, ասէ, զանթառամ՝ փառս պատկի»։ Զայս ասելով՝ որոշումն առնէ՝ ի մէջ հոգևոր վիրակացութեան և մարմնական իշխանութեանն. զուր ասէ՝ որ հոգևորքդ է՝ մի՛ իբրև զմարմնական տեսցս փարիք առ ժողովուրդն, փոսն զի այս հիմնատական է և անառասուած՝ մարմնական իշխանութեամբ փարիլ՝ ի հոգևոր գործառնութիւնն։ Բ՝սա որում՝ և Տէր մեր դատապարտեաց զայնոսիկ՝ որ զահասիրութեամբ և ազահութեամբ առ միմեանս հակառակիին։ «Դիտէք, ասէ, զի որ յանուանի իշխանքն են հիմնատացս՝ տիրեն նոցա, և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այդպէս և ի ձերում միջի, այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ամենեցուն վերջին, և ամենեցուն պաշտօնեայ»։ Արդ և Աստուածընկալն Պետրոս ըստ որում՝ և փարպատեսեցուն՝ ասաց. «Ա՛ի իբրև տիրելով վիճակին», այսինքն՝ մի՛ զահասիրութեան և բարձրացութեան պատճառս ձեզ առնիցէք զշնորհն Աստուծոյ, այլ խոնարհութեան և առաւել ևս հիզութեան. փոսն զի և աշխարհն այն զայսոսիկ Աստուածատուր օրինաց պահանջէ՝ ի ձէնջ. որպէս զի այնուտարարս՝ օրինակ բարեաց լինիցիք հօտին։ Եւ զոր ասէս այս է. որպէս մարդ յորում՝ տեսցէ և է, յիրեմանէն ծանեցեալ՝ եթէ մարդ է. և մանաւանդ՝ ի մէջ անբանիցն կարով՝ իւրաքանչիւր՝ ի տեսողացն ճանաչէ, եթէ այն՝ մարդ է բանաւոր՝ խնամատուն՝ մտաց և հանճարոյ ընդունակ, և այլքն՝ անասունք և անբանք։ Զմանապէս և քահանայն կարով՝ ի մէջ ժողովրդոյն՝ բարեձեւութեամբն ճանաչի՝ եթէ քահանայ է, և տիրապէս աշակերտ Քրիստոսի, և օրինակ բարեաց ամենայն ժողովրդեանն։ Զ՝սան զի պարտ և արժան է քահանային որոշել՝ որպէս ըստ ձեւոյն՝ նոյնպէս և կարգաւորութեամբն՝ յամենայն ժողովրդենէն, ՝ի նստելն, ՝ի յառնելն, ՝ի կալն, ՝ի գնալն, ՝ի խօսելն, ՝ի լսելն, յուտելն, յըմպելն, յաղօթելն, ՝ի հանդչելն, և յայլ ամենայն ատուա-

ծառուբ պատուիրանն այնպէս քարաքարարել, որպէս քահանայի վայելէ. և մանաւանդ խոնարհութեամբն զենքն զարդարել՝ և հեղութեամբն և անբարկանալի լինելովն. որով առաւել ինն շահեցուցանէ զժողովուրդն։ Վասն զի չիք ինչ այլ մեծագոյն բարի և յանգաւոր առաքինութեան առն վարդապետի, քան ընդ խոնարհն զիջանել և անընչութեամբ զկեանս անօրինել. որով Տէր մեր առաքինացաւ, և մեզ եթող օրինակ բարեաց՝ նովին առաքինասէր կրօնաւորութեամբն շրջել յաշխարհիս։ Վասն զի չիք այլ ինչ՝ որ այնպէս ահարկու թուի բանաբերութեան և զօրաց իւրոց դիւացն, որպէս խոնարհութիւն» (Ի մեկն. ե Պետ. ճառ ժա)։

Զ՝սոյն օրինակ մեծ վարդապետն մեր Յովհաննէս Երզնկացի՝ ի ներբողական բանս սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ ի ճշմարտաբարոյն ապրելոյ սուրբ զրոց առեալ՝ զրէ առ հոգևոր պաշտօնեայս սուրբ եկեղեցւոյն Երիստոսի։ «Զ՝ոսաջնորդք երկնաւոր ճանապարհին և ապաւծոյք Երիստոսի հօտին և մեծագոյն գառանցն, զոր Միածինն միայնոյ Հօր՝ արեամբ և մահու ժառանգեաց, զհնգետասանամեայ չարչարանաց մեր Լուսաւորչին ստացեալ սեպհական ժողովրդի և ձեզ ձրի և անգին տուեալ՝ ի ժառանգութիւն, մի՛ մոլորեցուցանէք՝ ի լերինս և յանկոխ ճանապարհս, և մի՛ մատնէք գայլոց և գազանաց, զոր հովիւն քաջ՝ ի վերայ ուսոց երաբձ՝ և՝ ի վերս յերկինս տարաւ և ընդ անմոլար խառնեաց։ Մի՛ լինիք նմանողք վարձկանացն... զհոգիս խաչանց բանաւորաց անտես առնողաց։ Մի՛ անիմամ՝ անգութ և անպյգելու՝ խոցելոյն վիրաւորաց լինիցիք, փան որոց Երիստոս զնոցուն և զվերս յանձն էառ...։ Զաւասիք եկեղեցւոյ նաւի, մի՛ ի կենցաղոյս ամբոխեալ ծովու տալք զնաւ եկեղեցւոյ յալեկոծութիւն և ի խաւարութիւն հողմոց. զի մի՛ ընկղմելով զոր յանձն առիք հանել՝ ի հիդեական ծովէ՝ կորուսանողք անձանց անմեղաց լինիցիք։ Զկնք Աստուածային այգւոյն բանաւոր և երկնաւոր անկոցն անկագործ և պահապան կարգեցայք, և՝ ի պտղոց այգւոյն ճաշակեք և անկ ունիք գահեկանի վարձուն յամենաբարի Տեառնէն, մի՛ տալք թոյլ գազանին՝ զԱստուածայինն այգւոյ ապականել զքաջարիս ուռն, յորմէ՝ ճշմարիտ արմատացեալ։ Մի՛ շարժէք զրպատուար զգուշութեան պատուիրանացն Աստուծոյ, մի՛ կոխէք զկարգ կանոնաց Աստուածահաստատ ուխտին հաւատոյ, մի՛ քա-

կէք զքանկ ամբութեան հայրենադիր աւանդիցն, զի մի՛ հարցիք յոգէն չարաթոյն և անբուժելի։ Խժիշկք բանաւորք, և վերակացուք հոգւոց, ողք զԱստուածականն ունիք բժշկարան, մի՛ անդութ և անգորով առ խածեալսն 'ի կամակար օձէն, և 'ի բնական և յանբնական ցաւոց պաշարեալսն լինիցիք, մի՛ ողջացուցիչք չարեաց և ոչ փարատիչք ցաւոց լինիցիք» (Յոր. ժդ. 14)։

«Աստուածային Պօղոս գրէ ձեզ և ամենայն հաւատացելոցդ խրատ՝ և ասէ «Յիշեցէք զառաջնորդս ձեր, ողք խօսեցան ընդ ձեզ զբանն Աստուծոյ, և հայեցեալ յելս գնացից նոցա՝ նմանուցք եղերուք հաւատոցն» (Եբրայ. ժգ. 7)։ Արդ և դուք յիշեցէք զառաջնորդն կենաց և փրկութեան ձերոյ, և զմտաւ ածէք զանտանելի չարչարանս Աստուածադուրթ Հօրն՝ և հոգւոց Լուսաւորչին և ճգնաւոր նահատակին՝ սրբոյն Գրիգորի, և մի՛ մոռանայք զգալամացուցիչն երկնաւոր զօրացն՝ և զկիրս նորա հոգանութեամբ մարնոյն. պատկաւեցէք 'ի նորա յայնպիսի սոսկալի խստամբեր վարուցն. զորոյ դուք այժմ արեամբ քրտանցն և ցօղով արտասուացքն զսերմանեալ անդաստանի պտուղն վայելէք։ Արդ հայեցարուք յելս գնացից նորա, թէ օրպէս եկաց յաշխարհի, և կամ օրպիսիք էին ելք գնացից նորա. զի այն է գործն ոչխարաց հովուութեան՝ ընդ որ նա եմուտ չարչարանաց, և ստացաւ իւր ժողովուրդ քիրանաց ոսկերաց մարմնոյն, և հոսանմբ արեան չինեաց զազգս զայս՝ եկեղեցի Աստուծոյ, որպէս և Տէրն իւրով կողակայլակ արեամբն՝ զազգս և զաշխարհս ամենայն. հրոյ տոչորմամբ խորովեցաւ 'ի վերայ իւրոց գեղեցիկ զառանցն. անհնարին տանջանաց կայր 'ի կախաղանին՝ և ապթեր վասն իւր հաւատացեալ հօտին. 'ի գուբ խաւարին 'ի մէջ չարաթոյն օձից կայր զամն երկքառասան՝ յաղագս 'ի գուբ մեղայ և 'ի հարուածս օձից և 'ի թունալից ախտս՝ մեր ընկղմելոյն։ Այս է գործն հոգևորական հովուութեան։ Որ ոչ մասնակ ընդ այս գործն՝ գող է և աւազակ»։

Այսպէս յաւէտ զարթուցիչ խղճի մտաց՝ պաշտելի աւետարանական բանիւ կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի կնքեսցի այս ամենայն բանախօսութիւն մեր «Եթէ ոք ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ» (Մարկ. դ. 23)։

Վ. ԵՐՈՒ.։

Ս. ՀԱՅՈ ԹԱՆԳԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

„Այս մանկեցի զքեզ որթ պտղաբեր ամենևին ճշմարիտ. զեսոքդ դարձար ինձ 'ի դառնութիւն, որթդ օտարացեալ“:

(Երեմ. Բ. 21).

„Զգոյշ լերուք, գուցէ ոք յետնեալ գտանիցի 'ի շնորհացն Աստուծոյ: Մի ոք արմատ դառնութեան 'ի վեր երևեալ նեղիցէ, և նոքաւ բազումք պղծիցին“:

(Երր. ԺԲ. 15).

ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Եվ	տող	տպաւ	տպաւ
8	10	պյժմ	առ պյժմ
10	28	ապերախտ	ապերախտք
31	8	անուանուեցաւն	անուանեցաւն
34	16	Եւտիքեա	Եւտիքեայ
37	2	չաբչարելի	անչաբչարելի
57	18	սաներևու թապէ	աներևու թապէս

[illegible]